Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3159
3160
3161
3162
3163
3164

28
Ц-84
1313

2010

870

50

Printed in Turkey

# ՍԽԱԼԱՆՔ

## ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԿՐՕՆԻ

՚Ի ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ ՀԱՄԱԶԳԵԱՑ

՚Ի լոյս ած Ա. Արարատեան.

1858

՚Ի ՏՓԽԻՍ.

ГОС. ПУБЛ. Б-КА АРМ. С.С.Р.
ОБМЕННЫЙ ФОНД

23963-сп.2

7417-57

# ՍԽԱԼԱՆՔ

## Գրոյն՝ որ կոչի Վարդապետարան Կրօնի

'Ի պէտս դպրոցութեան համազգեաց
յերեւան հանեալ

'Ի Վարժապետէ Գաւառական Դպրանոցին Տփխիսոյ
յԱռաքէլեյ Արարատեանց։

Նուիրական ծախիւք Ազնիւ, Աստիճանաւոր և Ասպետ
Ալէքսիոսյ Տէր Ղուկասեանց 'ի յիշատակ հանգուցեալ Աւագ-
քահանայ Տէր Յարութիւն հօր իւրոյ։

**1858**

'Ի ՏՓԽԻՍ

'Ի Տպարանի Ներսիսեան Հոգեւոր Դպրոցի Հայոց
ընծայելոյ յԱզնուական Ազգյ Գէորգեայ Արծրունւոյ։

Printed in Turkey

Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր քո, և ՚ի քում ական զգերանդ ո՛չ նշմարես ։ Կամ զիա՞րդ ասես ցեղբայր քո, Թո՛ղ հանից զշիւղդ յականէ քումմէ. և ահաւասիկ ՚ի քում ականդ գերան կայ։

Կե՛ղծաւոր՝ հա՛ն նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեսցիս հանել զշիւղն յականէ եղբօր քո։

Մատ. Է. 3, 4, 5.

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ, Тифлисъ, 14 Апрѣля 1858 года.

*Цензоръ Кайтмазовъ.*

Printed in Turkey



Զամենայն ինչ փորձեցէք, զբարին ընկալա-
րուք. Ա. Թես. Ե. 21.

1. Ընթերցեալ ոմանց զԽնամադրական իմ, որ ընդդէմ տարածեալ յարուցելոց ամենապատուական մօր եկեղեցւոյ Հայոց, Թախանձեցին զիս զկնի՝ յայտնի առնել և զխայտառակս վարդապետութեանն Նազարեանց, որք համարին միաբանեալ ընդ և անհաւատալի յաղթահարութեանն եկեղեցւոյ Հայաստանեայց. մանաւանդ յԱստուածաշունչ սուրբ Գրոց. Զիջեալ Թախանձանաց նոցա, յանձն առի և զայս աշխատութիւն առաջի առնել ըստ կարի զՎարդապետական Վարդապետութեան չափաւոր համառօտութեամբ, յուսալով լինել 'ի շահ և 'ի շինութիւն մտաց դայթակղելոց 'ի նորա բանից: Զանց չարարեալ ուրեք ուրեք և զյայտնի սխալանս ընդդէմ ուղիղ Հայախօսութեան հանել յերեւան հանդերձ քննութեամբ:

2. Հեղինակն մեր զմատենիկն զայն անուանէ ,, Ստեփաննոս Նազարեանց Վարդապետական կրօնի,,: Սա զկրօնն յատկացուցանելով իւր սեռականաւ հոլով անուանս "Ստեփաննոս Նազարեանց", ցուցանէ՝ թէ այն Վարդապետական կրօնն իւր է խաղալիկ, և ոչ Քրիստոսի. կամ բարեխառն քրիստոնեայ եկեղեցւոյ Հայոց, և կամ՝ թէ Թարգմանեալ է և կամ յօրինեալ միայն վասն իւր, և ոչ վասն այլոց. որ թէպէտ զկնի յարէ, "Մասն առաջին որ պարունակէ իւր մէջ քրիստոնէական հաւատոյ ուսումն": Սակայն յայսմ եւս ոչ յիշէ յանուանէ, թէ այդ հաւատոյ ուսումն վասն որոյ եկեղեցւոյ է, Հայոց, Յունաց, թէ Գերմանաց-

ւոյ, որպէս հարկաւ դնեն ամենայն այսպիսեաց առար-
կայից Հեղինակք: Ա. յաւելի 'ի սկզբանն 'ի Ճակատ Գը-
րոցն ոչ սակաւ կարծիս տայ անհարազատութեան և
խարդախութեան 'ի կրօնական հաւատալիսն Հայա-
ստանեայց, զոր հանդերձեալ է յընթացս գործոյ իւ-
րոյ ցուցանել յայտնապէս:

3. Յաւելու ,,Հասարակաց Հաւատախօսութեանն'',
բայց վարդապետարանն և կրօնն չեն բնաւ հասարա-
կախօսութեան՝ այլ դրոց, որոց փոխանակ պարտ էր ա-
սել՝ Մարմարան Հաւատոյ, զի ամենեցուն լինէր հա-
կանալի· սակս թէ ոչ՝ հասարակութիւն մեր բաւիդ-
վարդապետարան բնաւ ինչ ոչ իմանայ, և որք իմանանն,
ոչ երբև զվարժարան հասկանան, այլ զվանս՝ ուր են
և բնակին վարդապետք· և կամ զտուն՝ ուր նորընծայ
աբեղայք նախապատրաստին 'ի վարդապետութիւն· իսկ
կրօնիւ հասկանան բնաւ և ոչինչ:

4. 'Ի նմին Ճակատ գրոյն զբան Տեառն տա-
ցեալ առ Յովհաննու Աւետարանչի· Ը. 31. 32. ,,
Եթէ դուք կայջիք 'ի բանի իմում, ճշմարիտ աշա-
կերտ իմ էք· և ծանիջիք զճշմարտութիւնն, և ճշմար-
տութիւնն ազատեսցէ զձեզ''. Թարգմանէ նորա փո-
փոխութեամբ, զայս բնագիրն առընթեր եդեալ. ,,Եթէ
դուք հաստատուն կըմնաք իմ բանի վերայ, ճշմարիտ
աշակերտ էք ինձ, և կը ճանաչէք ճշմարտութիւնը, և
ճշմարտութիւնը կազատէ ձեզ'':

'Ի յառաջաբանի գրոյն:

5. ,, Հայոց հին լեզուն չէր կարող լուսաւո-
րութեան ճանապարհ լինել այժմեան ազգի համար ·

խոստացանք շուտով նոր Հայախօսութեան Հանդէս բանալ ազգի հետ . . . . խօսելով մի նորահայ լեզուի վերայ՝ որ կարող էր լինել այժմեան լուսաւորութեան յարմար Ճանապարհ. այդ նորախօս լեզուն . . . կամենալով օգուտ բերել իւր ազգին, և ձեռնտու լինել նորա լեզուի շինութեանը՝ պարտական էր ազգի մէջ խըրած ընկերը դէպ ի իւր կողմը քաշել, և ոչ թէ ինքը ցած իջանել նոյն խակ ապականութեան մէջը։

Հին մատենագրութիւնը չէ կարող հոգեղէն սընունդ տալ մեր ժամանակի Հային, քան որում չունի իւր մէջ այն սննդարար նիւթը և հիւթը, որ յագեցանէր նորա իմացական պէտքը և կարօտութիւնը։ Աստուածաշունչ գիրքը . . . է աղբիւր ծածկեալ և թաղուցեալ, քան որում անհասկանալի է ժողովրդին։

Կենդանական և կենդանացուցիչ նիւթեր չկան հին մատենագրութեան մէջ. Հայոց զաւակը տեսանելով, թէ իւր մայրենի լեզուն անհիւթ և անծուծ է, բնական ուղիղ դատողութենով բաց է թողնում մեռեալը, և ձեռք է ձգում այն կենդանի և զօրութիւն տուող նիւթը, որ գտանում է օտար լեզուի մէջ. եթէ Հայազգի զաւակը չունենալով իւր հայրենի պտղատու ծառը, պարզում է ձեռքը դէպ ի օտարատունկ ծառը, և նորա համեղ պտուղներովը յագեցուցանում է իւր քաղցածքը, և այդպէս օտարի կերակրովը սնունդ առած սկսանում է և ինքը օտարանալ և այլազգանալ. այդ բանի մէջ ո՞վ է մեղաւոր և դատապարտելի, Հայո՞ց մանուկը և պատանի՞ն, թէ նորա անհոգ և անխիղճ հոգաբարձուքը։ Ի՞նչպէս կարելի է քաղել այն տեղ վարդ և մանուշակ, ինչ տեղ ցանած են փուշ և տատասկ։ Հայոց զաւակը մեղաւոր չէ, եթէ չէ կարող Հայ լինել հա-

գով և սրտով. նորա հայութիւնը չինել են իւր հա-մար մի անպարծանք բան, փուչ փայտ, չորացած ծառ . . . . թողած ու ծարաւ հայ մանուկը օտարի պատրաստութեանը լցուցանելով իւր պիտոյքը, արհա-մարհում է այս իւր ծնող հայր ու մայրը, որ նորան չինել են աւելի հայի մարդկան”։

Երևի տեսաք՝ որ ասացի, թէ՝ Ընկեալքն ՚ի լեզ-ուէ աւուել են քան զանկեալս ՚ի սրոյ. և թէ վէրք ՚ի սրոյ փութով բժշկին քան զվիրաւորս ՚ի դրշոց։ Նմանայն մեղեկան ախտք և նախապաշարմունք բռնեալք մտանգամ ՚ի միտս մարդկան, և շղթայեցեալք զնա խա-փանեն ուղղութեամբ տեսանել և դատել զի և իցէ իր, զանդամանդ ապակի կարծեալ, և զապակին անդա-մանդ, զլոյսն խաւար համարելով, և զխաւարն լոյս, համդունաւոր բոլորովին ուշացնոր հիւանդաց, յորոց խօսից չկարէ ոք ինչ լինել։ Ներեցէք ինձ, եթէ ա-սացից աստ, թէ յոյս իսկ ոչ ախտացեալ տեսանեմ զվարդապետն Նազարեանց, որ նախ զպատուական լե-զու մեր կոչէ հին (այս է՝ հնացեալ, մաշեալ, անպի-տան), անկարող լինել Ճանապարհ լուսաւորութեան այժմեան Հայոց, զորոյ պակասութիւն ինքն միայն նշ-մարեալ կանխաւ՝ իւրով [illegible] տածած և ջերմած Ռու-բողոքեան աղբրաշխաւութեամբն, մութայ նոր հայախօսութեան հանդէս բանալ, և մէն նորահաց նորախօս լեզու հնարել, որ այժմեան լուսաւորութեան կարաց է լինել յորմամբ Ճա-նապարհ։ Իւր այս յառաջ խաղացեալ զնամենակարու-թիւն մեր եւ հին և չկարող ՚ի մատակարարել զհոգևոր սնունդ իւրոյ ժամանակի Հայոց, զի չունի ՚ի միջի իւր զայն անդադար կենդանական և կենդանա-ցուցիչ ներթ և հիւթ, որ լցուցէ զնորա խմացական

պէտան և շնորհութիւն. և թէ Աստուածաշունչ մեր է աղբիւր ծածկեալ և թաղուցեալ վասն ժողովրդեան, զի անհասկանալի է նմա։

Յայտնանէ հետևեցուցանէ, թէ մանկունք Հայոց՝ տեսեալ փորձիւ, թէ լեզու իւրեանց այսպէս անհիւթ է և անծուծ, և ծառ անպտուղ, բնական բերանն 'ի բաց լքանեն զմեռեալն լեզու, և ձեռնձիգ լինին առ լեզուի, յորում գտանեն նիւթ կենդանի և զօրաւոր. և համեղաճաշակ պտուղս օտարատունկ ծառոյ յագե-ցուցեալ զստամոքս իւրեանց, և օտար կերակրովք սը-նեալք և զարգացեալք, սկսանին և ինքեանք օտարանալ և այլազգանալ։

6. Նմանայն մատենագրութիւնք Նախնի Հայոց մերոց՝ թող զպատմագրականն, զբարոյականն և զկա-նոնականն և զմնացեալ ուսումնականն (զճարտարութ., զաս-տեղաբաշխութ. և զտօմարագիտութիւնն իմն ինձ հան-դերձ գեղեցիկ առակախօսութեամբք), մնացեալքն են հոգևորականք, եկեղեցականք և աստուածայինք կամ թարգմանեալք, և կամ սեփական աշխատութիւնք. ամենայնն առ հասարակ որքան պերճք և ճոխիմաստք, այնքան լիք, շնորհափայլեալք սուրբ հոգւով, և ո՞չ կարէ համարձակիլ և կոչել զԳրականն մեր անհիւթ, աննիւթ, անծուծ, անկենդան և մեռեալ բաց 'ի մոլ-դարեալէն Նաղարեանց. ո՞չ կարէ առել դէթ 'ի սրտի իւրում 'ի ծածուկ, թող թէ լեզուաւ յայտնապէս, թէ Աստուածաշունչն մեր է աղբիւր ծածկեալ և թա-ղուցեալ, և թէ հին Մատենագրութիւնն մեր չէ կա-րող հոգեղէն սնունդ տալ մեր ժամանակի Հայոց, ուր ընդ հակառակն 'ի 1461 ամաց հետէ ամենայն հայե-րէնագէտ արբեալ է ցայժ յայսմ աղբերէ աստուա-

ծայլին, և զովացուցեալ զմիտս քնոց, և ոչ բարձեալ զօրութիւնս՝ Թէ իցէ անհասկանալի, որ Հայ կարէ ուսել, Թէ Մատենագրութիւնք Խորենացւոյ, Մեսրոպայ, Մովսիսի, Եղիշէի, Կորեան, Մամբրէի, Եզնակայ, Յովհաննու Մանդակունւոյ, Յովհաննու Օձնեցւոյ, Կոմիտասայ կաթողիկոսի, Ղազարու Փարպեցւոյ, Գիւտի հայրապետի, Ներսիսի Շնորհալւոյ, Սարգսի Շնորհալւոյ, Ներսիսի Լամբրոնացւոյ, Իգնատիոսի վարդապետի, Սարկաւագ վարդապետի, Գրիգորի Մագիստրոսի, Գրիգորի Նարեկացւոյ, Անանիայ վարդապետի Շիրակացւոյ Ճոն Բարսղի, Յովհաննու Երզնկացւոյ և այլոց բազում ականաւոր և հոգեւորական Մատենագրաց մերոց նախնի և վերջին դարուց իցեն ուսեալ, անսնունդ, անծուծ անպտուղ ծառ, բայց 'ի վարդապետէն Նաղարեանց, որ միանգամ արտաքս ելեալ 'ի սահմանէ հայրենի հարազատութեան և քաղաքավարութեան՝ ինչպէս չարաչար զՀայս մեր երանելիս, և անխիղճ ստաթուր հարկանէ զպատուական և զընտիր ինչս անմահացեալ աշխատանաց նոցա: Մխիթարեան Եղբարք հայ մատենագրութեամբ պարծին և ճոխանան օր աւուր մարմնապէս և հոգեպէս: Մատենադարանք փարիզու, Վենետկոյ և այլոց քաղաքաց Եւրոպիոյ Հայոց հին գրչագիր մատենիւք լցեալ լիանան, և պարոն Նաղարեանցն մեր անարգանօք և ընդաշխանօք յիշատակէ և քարոզէ զնոցանէ:

7. Իսկ ոչինչ էր գրելն զբանս նորա, և բզզիւն ճանճի կամ հողմածայն համարել, եթէ օտար ոք դանդաջէր զայս ամենայն, որպէս և անծանօթ զոլոյ պատմութեան լեզուիս և ազգիս, բայց որպէս լսել և անցանել անդաւ և անխօս, մինչ գրողն է Հայ և որդի

արեւելեան քահանայն Հայոց, եւ մասը 'ի շատ տեղ-եակ ազգային հանդամանաց այլովքն ամենայն։ Մա-ցէք՝ ասացեմ, որ բժիշկ է, որ մտատացեալ առ հի-ւանդ որ՝ կշտամբէ զնա սաստիկ եւ անարգէ վասն կո-րուսեալ առողջութեանն, եւ տայ նմա զդեղ դառն ա-լաժահր, դժուարըմպելի. ոչ ծաղրաշարժ բանիւք եւ ընտանեբար վարի ընդ նմա, ոչ յուսադրութեամբ զզե-ղեահանութիւն դեղոյն անուշէ ախորժահամ կաթամբ եւ օշարակօք. մինչեւ տակաւ առ տակաւ հանէ յանձնէ նր զարմատացեալն հիւանդութի̄ն։ Գիտեմք թէ ազգ Հայոց հիւանդ է մօք, եւ կորուսեալ է զիւր բարոյական ա-ռողջութիւն, եւ պարտ Նորարեանցն որպէս քաջափորձ բժշկապետս հրաւիրեալ է բժշկել զայն հոգեւոր ծանր մերձ 'ի մահ խօթութի̄ն նորա, բայց մի թէ այսպիսի եղանակաւ, եւ այսքան անտանելի զայրացուցիչ եւ զզուեցուցիչ միջոցօք։ Փրանկլին Բենեամին այդպէս վարեցաւ ընդ համազգի Ամերիկացւոց իւրոց։ Մեծն Պետրոս անմահայիշատակ Կայսրն Ռուսաց այդպէս արա̄ր եւ դաստիարակ լուսա-ւորեաց զազգ իւր, թէ ընդհանրականն սիրով, քաղց-րութեամբ, խոհեմութեամբ, համբերով եւ մեծ իմաստու-թեամբ։ Տէս Պաւղոս Առաքեալն հեթանոսաց զի՞նչ առ Կորնթացիս 'ի թուղթն երկրորդ. ժբ. 16. գրէ. „Գրեթէ ես ոչինչ ծանրացայ ձեզ, այլ քանզի խորա-գէտ էի, խելօք կալայ զձեզ"։ Չկամի՞ս գրել ը̄ Նոր-եանց, մի՛ պախարակել զնոսա եւ զգրուածս նոցա հին, մնաւեալ, անոյժ, անխիթ, անպտուղ անսննդ, եւայլն, եւ այլն, կոչելով. գրեա որպէս եւ կամիս, զճշմարտութիւնն եւ զգուշութիւնն հաւանութեամբ չափահանջելով բանու-թեամբ, զի դու չ'ես օրէնսդիր իշխան եւ տէր Հայոց, այդ կախի զկամաց մերոց, եթէ կամիք, ընկալցուք՝

և եթէ ոչ՝ խոտեսցուք, և ընկեցիկ արասցուք. զի պատ-
գամ Առաքելոյն յականջս մեր հնչէ հանապազ. „Ոմն
պահէ օրըստօրէ, և ոմն պահէ զօրհանապազ, իւրա-
քանչիւր ոք զիւր միտս հաճեսցէ. Հռովմ. ԺԴ. 5.
„Զհուր և զջուր եդ առաջի, զի յոր կամեսցի՝ մի-
խեսցէ զձեռն իւր. զի առաջի մարդոյ է մահ և կեանք”.
Սիրաք ԺԵ. 17. Եւ այս՝ զի անձնիշխան ստեղծաք
՚ի Տեառնէ.

8. Եթէ ունիմք տղէտք և անուս դպրութեան
լեզուի Հայոց օտարացեալ են յազգէս և այլազգա-
ցեալ, զորս մեք ոչ լսեալ եմք և ոչ տեսեալ, յայ-
դըմ ոչ լեզուն և հին մատենագրութիւնն են մեղաւոր,
այլ անհոգութիւն ծնողաց նոցա և հոգաբարձուաց,
որք անդստին ՚ի մանկութենէ չ՛են ուսուցեալ նոցա ըզ-
հայրենի լեզու և զկրօն իւրեանց, այլ՝ այլոց. Երե-
խայն անձամբ անձին մատնայ և խորթանայ ոչ միայն
՚ի լեզուէ և ՚ի կրօնէ իւրմէ, այլ և ՚ի ծնողաց, յազ-
գականաց և ՚ի հայրենեաց իւրոց, եթէ ըստ ձախող
դիպուածոց ծի վիճակեսցի նմա զելել, խլել և անջա-
տիլ ՚ի նոցանէ. Բայց սուտ է և զրպարտութիւն այն
թէ հայասերունդ ոք չգտեալ զհիւթալից կենդանաբար
և կենդանացուցիչ սնունդ ՚ի գրեանս Հայոց՝ դիմէ
անձկանօք առ օտարս, և ՚ի նոցանէ լնու զյագուրդ
բաղձանաց իւրոց. Երեխայ ոք դեռ չէ յայն չափու
և տարիքանի հասկացողութեան և ընտրութեան բար-
ւոյ և չարի, զի կարասցէ առնել այդպէս. այդ երա-
զահնար կարծիք և ցնորք է փարդաւեալն Նազարեանց,
որ ըստ խելաց իւրոց կամելով զնորահաս և զնորախօս
լեզու իմն կերկտեալ և ընդունելի առնել զնա յաչս
խաժամուժին մերոյ, յառաջ բերէ զայլայլակ պատճա-

ուրանութիւն. այս թէ ոչ՝ թող նշանակեսցէ յան-ուանէ, թէ ո՞յք 'ի զաւակաց Հայոց, և երբ, յորում աշխարհի կանխեալ եղեն նախ յուսումն հայրենի դրոց և լեզուի, և ջանացեալ 'ի նոյին զհիւթ, զնիւթ, զծուծ, զսնունդ, զկենդանացուցիչ զօրութիւն, լքին զնոյն և դիմեցին առ օտարս: Ընդհակառակն ոչ միայն բնածին Հայ՝ այլ և օտարազգի, որ մանկամ առնու զճաշակ և զփորձ քաղցրութեան լեզուի և դրեանց Հայոց - ոչ թէ խորշի 'ի նոցանէ իբրու 'ի խոտան իրաց, և լքեալ մեր-ժէ՝ առ այլս դիմելով, այլ փափագանօք սրտիւ խան-դակաթեալ և սիրահարեալ, երկոքումբք ձեռօք ամփոփ-ընդգրկէ. զնոյն, և զվերջին փայլս իւր չնմանէ առ և զնել զհայերէն հին և նոր դրեանս, և զմի 'ի սե-նեկաց իւրոց փոխել 'ի դպրատուն և հանապազօր ըն-թեռնուլ զնոյն անձանձիր և յաճենալ հոգւով և մտօք: Օրինակս օրըստօրէ ականատեսք յաւելեալ և առաւելեալ ազգասիրութեանն Ռուսաց 'ի մերում ժա-մանս և գիտութեանս պերճացեալ և բարգաւաճեալ Տփխիս քաղաքի:

9. Մարդասէրն Լազարեանց համարի զմեզ ըն-ծէջածս, և ոչ իմիք հեռամնաց, և զինքն միայն հա-մարի արթուն մտօք մնեալ 'ի Եւրոպա և զամենայն գիտութիւնս և արուեստս Տի յինքն գրաւեալ և ամ-բարեալ, որովք նկրտի, տալ և տարածել զկեդրոնակարծ լուսաւորութիւն իւր տարածել առ մեզ. այլ դի-տասցէ յորդեալն, թէ և 'ի մեզ գտանին ախտածելի գիտնական լեզուագէտք 'ի Հոգևորականաց և յաշխար-հականաց, որք զանս և զձիշէր ոչ դադարեն աշխատել բանիւք և գրովք յօգուտ ազգին: Ծագեալ զհեռաւորան և զայլոց քաղաքաց ազգային ամենապատիւ ուսումնա-

կանան, առայց միայն զմերոյ քաղաքի և զմերոյ շըր-ջակայից այժմեան կենդանի գիտնոց, որոց աշխատու-թիւնք և հանճար ծանօթ են, որք յայտնի են արդէն գրով, և են՝ որք 'ի լոյս ընծայել ունին ըստ ժամա-նակին:

'Ի հնգետասնամեայ երևելի են առ այժմ Սար-գիս Արքեպիսկոպոս Ջալալեանց՝ այր բանիբուն և քա-ջագէտ հին և նոր կտակարանաց, ազգային պանծալի հնութեանց և մատենագրութեանց, պատմաքննական գիտութեանց մերոյ և օտարաց, հռետոր քարոզիչ և ընտիր աստուածաբան, բանաստեղծ, հնաբան և ան-նուէր հետամուտ հնութեանց Հայաստանեայց, որոյ ճանապարհորդութեան առաջին հատորն տպագրեցա-ւ 'ի Տփխիս յամի 1842, և երկրորդն տպագրի արդ յայսմ 1858 ամի: Յակոբ քահանայ Ալեքսանդրու-պօլեցի քարոզիչ, բանաստեղծ, հնաւէր և դաստիա-րակ մանկանց: Գրիգոր քահանայ տէր Աւագեանց Ար-ցախեցի հեղինակ քերականութեան և պատմութեան սուրբ գրոց, քարոզիչ և մանկավարժ: Աւել վարդա-պետ աշակերտ Մոգխտարանի Սուքիասեանց, այր շնոր-հալից թարգմանութեամբ, հայկաբանութեամբ, հնա-խօսութեամբ, բանաստեղծութեամբ, որոյ տպագրեալ գրեանց արդէն տեղեակ են բազումք: Սահփաթա քա-հանայ Մանդինեանց Ծնխարբան, առատամոլ և հեղինակ մի տակառ գրոց ոչ աշխատանաց: Յաշխարհականաց անուա-նի են 'ի մէջ խորհեանց դաշնի գիտութեամբ և ևանա-դուն ճանապարհութեամբ Պօղոս Ալղանեանց, Գէորգ բժիշկ Հախվերդեանց, Սահփաթա բժիշկ Բաստամեանց, ձայնաքննիչ գրոց Յովհաննէս Պեյթմամբեանց, վարժա-պետ Յակոբ Կարինեանց, Յարութիւն Սարկիսեանց,

Մովսէս Զօհրաբեանց Աբգարեանց Մսերեանց Պատկա-նեանց, և այլք ոչ սակաւք, զորոց ժամն ու համառօ-տութիւն չներէ յիշատակել մի առ մի. Բայց չէ պարտ յանձնապաստան եղեալ պարծել, թէ ,,Ես սնուա-ւած և կրթւած եմ Եւրոպական դպրոցումը'' որպէս թէ այլք 'ի գանց և 'ի փառաւոր եղեն եկեալք, թող յիշեսցէ զբան Տեառն ,, Զգոյշ լերուք, մի՛ արհա-մարհիցէք զմի 'ի փոքրկանցս յայսցանէ. Մատ. ժր. 10.

10. Ստախօսութիւն է և այս, և ամենամեծ ան-ներելի համարձակութիւն, թէ Աստուածաշունչ մեր է այլևս ծածկեալ և թաղուցեալ, քան որում ան-հասկանալի է ժողովրդեան. և յետ 20 ,, յիրաւի Եւրո-պական թարգմանութիւնք Աստուածաշնչի բանագէտ մարդերի դատաստանով թագաւոր է համարուած բո-լոր թարգմանութիւնների մէջ, թէ Ասիայինը և թէ Եւրոպայինը, բայց (ամաչում եմ ասել ճշմարտու-թիւնը, թէպէտ լռութիւնը թշնամութիւն կը լինէր ընդդէմ Աստծոյ), ինչ օգուտ այդ գեղեցիկ և պատ-ուական թարգմանութենից, եթէ նա չէն լսում և ուշով դրում՝ անմօտենալի էր մեր ժամանակի հայ քը-րիստոնեաներին, որ (թողունք թէ շատերը և կարդալ չը-գիտեն) չէն լեզուին տեղեակ չէր, ուրեմն և չէր կա-րող իր կրօնի և աստուածպաշտութեան աղբիւրը ճա-նաչել . . . Ի՞նչպէս կարող էր Ճրագը լոյս տալ, եթէ նա գրուանի տակ պահած է ծածկած մնար, փո-խանակ աշտանակի վերայ դնելու''.

Ասացի և դեռընակը թարգմանութիւն Աստ-ուածաշնչի մերոյ վկայէ ահա և ինքն, և դիւրըմբռնաց արհեստաւորայլ ոճ նորա որպէս լոյս արեւու յայտնի է ամենեցուն. Եւ որ կամի անխափան կարող է փայլել

զնա, և անխափան հաղորդել ընկերաց իւրոց գրաբառ
կամ աշխարհիկ ոճով։ Հայհոյութիւն է կոչել զնա
ծածկեալ և թաղուցեալ աղբիւր. նա բղխի միշտ 'ի
տանն Աստուծոյ, և ամենայն ծարաւի ըմպէ 'ի նմանէ։
Նա չէ անհասկանալի այնմ, որ յաճախ գնալով յե-
կեղեցի, թէ և անուսումն և անգրագէտ՝ ըմբռնման
և խելամուտ լինի ամենայն ընթերցուածոց հին և նոր
կտակարանաց։ Չևն մնալ 'ի հրաշալի գործս մեծին
Իսահակայ պարթևի և աջակցի նորա սրբոյն Մեսրոպ-
պայ ընդ այլոց երանաշնորհ Հարց և փափաքել զնա՝ նը-
շանակէ զմեծաշուք ապարանս արքայական քակել 'ի
հիմանց և ունել խրճիթ անշուք և աննշան։ Ո՛չ
թողէք ինձ յայտնել զճշմարիտն, թէ փորձոյ վար-
դապետին Նազարեանց չէ այն, զի Աստուածաշունչ
մեր եղիցի գրոց կամ Տարաւ, կամ հաստատութիւն
մեր կարասցէ ընթեռնուլ զայն և հասկանալ, նա կա-
մի փափախութիւն ունել և կրօնի մերոյ, որպէս ա-
նէ լեզուն։ Այս իսկ նպատակ թարգմանեալ է 'ի
Գերմանական լեզուէ և զնոյն եկեղեցւոյ սեփական
վարդապետարանն կրօնի. յորում ուղղահաւատ դաւա-
նութիւնք եկեղեցւոյ Հայաստանեայց այլափոխեալ 'ի
մէջ բերին, և ամենահարկաւորքն լեին բոլորովին և
զանց առնին, զորս տեսցուք մի առ մի յիւրեանց տե-
ղիս։ Ապա թէ ո՛չ՝ այր Տաճկան և դատաստան օտար լեզ-
ուաց, զի՞ կայ նմա փոյթ և հոգ ընդ եկեղեցական
խրատութեանց։ Ապա կամ պարք հոգւոց ժողովրդա-
կանաց մերոց ո՛չ 'ի նմանէ պահանջին։ Խօսելիք իւր
պարտին լինել արտաքին առարկայք, և որպէս հայ քը-
րիստոնեայ պարտական է հաւատարիմ և հարազատ ա-
մայր եկեղեցւոյ իւր լինել, և ամենայն կարեօք չափ ջա-

նալ անթերի պահել զկուսութիւն նորա , և ոչ անիրաւի
մօք հնարել 'ի խափանել զհաստատութիւն նորա։ Ան-
թութիւնք կամ դժուար հասկանալիք 'ի սուրբ Գիրս
ասկա են յոյժ. 'ի զոր ցանկայ ապա առնել զնա
աշխարհաքաւ. 'ի զոր ուրախանայ և այն շատ և շատ
թէ Գիտարկն և Օրինակս (տես յէջ վարդապետա-
րանին 21) Բազէլեան Առաքելութեան ուսուցանո-
կան վարդապետութեան զնոր կատարեալ մեր հրատարակեցին
երբեմն Տէկ բարբառով. քանզի գիտասցուք թէ ի՛ն նոյա
չէր այն, զի Հայք մեր քաղեսցեն օգուտ 'ի նմանէ ,
այլ զի որսասցեն զպարզամիտ անձինս 'ի կեշտ իւրեանց,
և այսու խիկ մօք բացին վարժարան և տպարան յՇու-
ուան և յԱրցախ, և զոչ սակաւս խաբեցին և պղտ-
տորեցին 'ի մերոց կրօնէ մերմէ. յորոց երկու սարկա-
ւագունք են Բարսեղ և Անտոն անուն մոլորեալք 'ի
նոցանէ 'ի ձեռն քաղաքական իշխանութեան կարգանօք
ածան 'ի Տփխիս 'ի 1830 ամին, և մեռան թշուառու-
թեամբ մին առա յանկոյց քաղաքին և թաղեցաւ վատ-
անուանութեամբ 'ի գերեզմանատան Լուտերականաց ,
և միւսն 'ի Սեւան կղզւոջ , յորմէ հանեալ թաղեցին
յանկշան վայրի , ոչ արժան համարելով զմնասատանն
սուրբ լինել պահարան մարմնոյ առն անհնազանդի և
հաւատափոխի։ Եւ վասն այսպիսեաց գործոց ցանկայ
պարսն Նազարեանց 'ի նմին խիկ մատենի յէջ 21.
,, Խնդրեմենք , որ ամենակալ Տէրն յաջողէ այդ
գործի ամենայն անդ տարածումն'' ։ Եւ մեք աղաչեմք
Լուսաւորչական Հայքս խնդրեմք 'ի նոյն ամենակալ
Տեառնէն խափանել զամենայն այդպիսի նենգաւոր խոր-
հուրդս և զխնդրուածս, և զեր Աթոռնի սրբամբ պը-
նեալ հօտս իւր փոքրիկ անփորձ և անսասան պահել

յոյզալիք ոչխարազգեաց գայլոց և 'ի նոցունց չարասա-տաւ ձիրանց և 'ի սրտաճմլիկ կորստական յա-փշտակութեանց։

11. 'Ի յառաջաբանին յէջ Դ. „Հայերի իմա-ցական և բարոյական գործակատարութեան Հանդէսը մնացել է լեզուն և կրօնը, թէպէտ և սոքա անտուն և անհայրենի, որբ և պանդուխտ առանց կարող ձեռ-քի հովանաւորութեան։ Մի՞ շատ թէ և Հայեցուած ազգի վիճակի վերայ իսկոյն յայտնապէս ուսուցանէ մե-զ, թէ ինչպէս է բարոյական պարտաւորութիւնը Հա-կայօղ և մեծատուն Հայերի. և թէ ի՞նչպէս պիտոյ է ներգործէին մասնաւորները, որովհետև չկար ընդհա-նուրը”։

Օրէնք մեր և կրօն առեալ փոխանակ Հանրա-ութիւռ ազգիս՝ կոչէ զմեզ անտուն, անհայրենի, որբ, պանդուխտ, և առանց կարող ձեռքի հովանաւորու-թեան. և այս զՀամօրէն ազգ մեր Համարի մանա-ւորս ունելով, զի չ՚իք առէ ընդհանուր (այս է ամբողջ միութիւն ազգի Հայոց). բայց սխալի չարաչար և ան-նոչարաչար. զի ազգ մեր ուր և են՝ ըստ երկրաստան ցեղին Իսրայէլի աճեցեալ և բազմացեալ, կազմեալ ու-նին ամենուրեք զմիաբանութիւն յամենայն ուսումնա-կան և 'ի շահաստանական գործս, անկորուստ պահպա-նեալ զլեզու իւրեանց և զկրօն, և զերկիր ընկալութեան իւրեանց տարեալ իւրեանց ընդ իւր ⇌ և ընդ իւր Հայրենիք. ընդ միոյ տան ունին զբաղում, մինչև զաւերողն տան 'ի վերջու, և ընդ նոսին են անբաւ Հարըս-տութեանց և կալուածոց. ունին զմեծամեծ պաշտամունս 'ի քաղաքական և 'ի զինուորական գործս տէրութեանց. վայելեն յամենայն արտօնութիւնս և 'ի փառս իւ-

րն ղողղանկնցս և զհարազատ ժողովուրդս նոցա։ Մի՞ ոք 'ի նոցանէ է որք և պանդուխտ։ Աշխուժութիւն և մանկութիւն հոգւոյ նոցա դրոշմեալ է զՀոգին և ընմնոս եկեղեաց նուրբեանց, և ձեռք շնորհաց բարերար կատարելութեանց հանապազ հովանացեալ 'ի վերայ գլխոց նոցա՝ 'ի փառուց անտի եւ նոցա մնացեալ զկորուստ հայրենեաց և ընչից այլովքն ամենայն։ Կան ամենուրեք դպրոցք, վարժարանք, տպարանք, մատենադարանք, ազգային ընկերութիւնք և անձնադիր դաստիարակութիւն լեզուի և կրօնի մերոյ։ Հարազատ թագաւորք մեր ոչ տանէին մեզ զայն, եթէ լինէին այժմ մեզ իշխանք, զոր ինչ տանէ մեզ այսօր ամենաբարերար և ամենողորմած Տէրութիւն Ռուսաց։ Հայեաց 'ի քեզ, Հայ Թագաւոր որ ոչ տանէր զայդ ամ բարիս, զորս պարգևեալ է և դեռ տանէ մեզ Ինքնակալն կենդանի ախոյեանս, նախ ուսմանց, անդորրութեան և կրթութեանց, և այս առատաձեռնութեանց դրամոց, պատուոյ և պէսպէս շքեղանշան արժանաւորութեանց տուրեանց։ Այլ Տէրութիւնս եւ այդ մեր զառաջին անդրէն ունի 'ի գործս և յիրողութիւնս արքունիս։ Օսմանեան Հայոց ուսումնական ընկերութեանց յաջողուածն, վարժարանաց յառաջխաղութիւնք, ամենայն մատենագրութեանց, լրագրոց տպագրութիւնք, և բարի բարի գործառնութիւնք օրաւուր զՀոգին փառաւորեն, և Ճշմարիտ ազգասիրաց զմեծ ուրախութիւն և զանթառամ մխիթարութիւն պատճառեն։

Անգղիական Հայոց փոքր փոքր քաղաքաց հետ զհետ թեակոխել զկերպս ուսմանց և մեծագործութեանց զայս նոյնն մարդոյն մերոյ խոստղեն առաւել քան զՀըրամայալ Ճառագայթս արեգական։ Պարսկահայք եւս չեն 'ի քուն, բացեալ են աչք մտաց նոցա, և պնդին հետ

7417-57
ՀԱՅ. ԽՍՀ ... Гос. Публ. Библиотека ՀԱՅԿ-ССР им. А. Мясникяна

գիտութեանց և բարեբաղդութեան կենաց, զորս մի առ մի պահել աւելորդ համարիմ: Իսկ թէ մանաւանդ, ամենք ուրեք ուրեք են անտուն և անհայրենիք, որք և պանդուխտ և առանց հովանաւորութեան կարօտ ձեռին, յայնժամ ոչ Տէրութիւնք են մեղաւորք՝ այլ ինքեանք. զի ողորմութիւնք նոցա հանապազ ծագին 'ի վերայ նոցա որպէս զլոյս արեգական, բայց ինքեանք անընդունակ առնեն զանձինս 'ի վայելել զնոսին 'ի ժամու, որպէս ապաւամ անփոյթ և անդադար մնացեալ 'ի մշտացող անձրևաց, կամ չղջիկն գիշերաշրջիկ 'ի տունջենային լուսոյ: Խնամատունք որբեն զհանգիստ, յանարգ զհայրենիս, առած է: Տեառն է երկիր լրիւ իւրով, աշխարհ և ամենայն բնակիչք նորա: Ուր ուր և կեցցուք, անդ և տուն մեր և հայրենիք, և բարեկամք և ազգականք և սիրելիք: Աչք և աջք Թագաւորաց և Գործակալաց նոցա 'ի վերայ մեր, և մեզ ոչինչ պակասեսցի: Մեք չունիմք տրտունջ և դժգոհութիւն զմեր վիճակէ, ո՛ն 'ի բաց տար ըզոժգալի ձայնդ անտուն, անհայրենի, որք և պանդուխտ են և առանց հովանաւորութեան կարօտ ձեռին. զի բարձրեալն Աստուած և Օծեալ նորա 'ի մեր կողմ են, և մեզ չ՛իք ոք հակառակ և պակասութիւն:

12. «Այլ գրուածք կամ [illegible] Գրուածք. Ֆ Սաղմոս Դաւթի, Առակք Սողոմոնի, Գիրք Յովբայ, Երգ երգոց, Գիրք Հռութայ, Ողբք Երեմիայ, Գիրք Եսթերայ, Յուդիթայ, Դանիէլի, Եզրայ, Նեեմիայ և Գիրք Մնացորդաց». էջ 18.

Զյիշատակեալ գրեանս Հայաստանեայց եկեղեցին ունի և սրբազան խոստովանի որպէս բանք գրեալք շնչով և ազդեցութեամբն Աստուծոյ, բայց վարդապետն Նազովրեանց եկեղեցւոյ ընդունի ասելով, լոկ գրուածք

և դնի՝ ինչպէս ասացեալն սուրբ Գրոցն։

13. „Ամենակատարած էակը՝ ի որում ամենակատարածրեալ է ունի մի քանի յատկացուցիչ նշաններ, որ ոչ մի ուրիշ էակի չեն վայելում։ Աստուած մի է, որովհետև ամենակատարը կարող է մի հատ լինել". Եջ 23։

Ամենակատարած և ամենակատարածրեալ գոլով մի և նոյն՝ աւելորդ է մերձենալ և ընդ նմին բայց է և շաղկապ-քաց սորա։ Աստուած ոչ յատկացուցիչ նշաններ ունի, այլ յատկութիւնք, զորս այլ արարածք չունին. մինչ-թիւնն ոչ կարէ ասիլ յատկացուցիչ նշան Աստուծոյ. զի յատկանշան կամ նշանացոյց է այն, որով զայլ իմն իմանամք, որպէս տեսեալ ՚ի Ճակատ կրպակի զ յատկանշան հայելւոյ և ածելւոյ նկարեալ ՚ի պատկերի իմանամք թէ անդ է սափրիչ, և այլուր զնկարեալ յատկանշան ժամացուցի, ասեմք թէ անդ է ժամագործ։ Աստուած է մի՝ կարեմք ասել, բայց Աստուած է մի հատ ոչ երբէք, զի մի հատն մարդոյ իսկ ոչ սակ, թող թէ Աստուծոյ։ Մի հատ ասեղն, մի հատ գիրք, մի հատ սըտուղ, մի հատ ձուկն, մի հատ ոչխար, և նմանեաց ըսին ՚ի հասարակ խօսս։

14. „Աստուած իւր ամենակատար բարերարութիւնը ցուցանելու մարդուս երեք առանձին կերպով, որպէս Հայր, Որդի և սուրբ Հոգի։ Նոքա առանձին պաշտամունք Աստուած որպէս Հայր". 24։

Յայսմ քանի բացախայլ նշանակի աստուածաբանական աղայաքար ապխատութիւն փարդափակեալն Նաշանեանց, որ նախ ասելովն „Աստուած ցուցանէ մարդոյս բարերարութիւնս իւր երեք առանձին կերպով", և ապա „որպէս Հայր, Որդի և սուրբ Հոգի" յարելով, յայտնապէս ցուցանէ, թէ, այլ է Աստուած, և այլ Հայր, Որդի և

սուրբ Հոգի, և տալին զԵրրորդութեանն տանէ չորրոր-
դութիւն, և զմիասնական ամենասուրբ Երրորդութիւնն
մի մի առանձին կերպ անուանէ։ Զայն՝ այն սարսափե-
լի ունկանց և մտաց, շարաշարս սխալելով՝ չիմանալով զէ-
ութեամբ թէ անձնութեամբ. յորս ոչ պակաս սը-
խալ է և տանելն, թէ ,, զԱստուած պաշտեմք այսպէս
զՀայր ,,. քանզի Աստուած ասելով՝ Երրորդութիւն ի-
մանամք, և առ 'ի որոշել զառաջին անձն Երրորդու-
թեան ասեմք Հայր Աստուած. և ոչ թէ զԱստուած
զառանձինն Հայր, այդ է նոր մոլորութիւն և չար քան
զառաջին հերձուածողացն.

15. ,, Աստուած տուեց Որդւոյ և Հոգւոյն մար-
մին, որ ամենայն կերպով բոլոր գազաններին մարմինքը
գերազանցող էր ,, 33.

Այսպիսով իմանամք զշուն, զկատու, զարջ, զգայլ
և զփղանձեր, այդ չէ վայելուչ զլուսապայծառ ամենա-
մաքուրս նախահարց նմանեցուցանել մարմնոց պիղծ և
անասուն գազանաց, այլ բոլոր պաշտօնին մաքուր էր ա-
ռել բոլոր կենդանեաց.

16. ,, Հաւանական է երևում մեզի համար, որ
Աստուած ոչ թէ միայն այս մեզ երկրիս վերայ ապրիա-
կաններ զմաքուր է դրել, այլ թէ այն անչափելի ոլոր-
տների մէջ որ ինչ աստեղներ են բնական մարմիններ
բնակարան են. և թէ այսու՝ որ հեռաւորութիւնը ան-
կարող մարդկանց և կատարեալ Աստուծոյ մէջ անհատելի
չելենէր, ստեղծական հոգիների մէջ աւելի բարձրացու-
ցիչ են, քան թէ մարդը։ Սուրբ Գիրքը այս վերա-
բերեալ հոգիները ասում է Աստուծոյ հրեշտակներ, որ սահ-
մանած են նորա հրամանները կատարելու, և մարդուս
ապահապան լինելու համար։ Սորանցից քանի մէնքը

երևումն սուրբ և բարերար․ միւսները վայր ընկած է Թշնամի էակներ (բարի և չար Հրեշտակք) ,, 34։

Փոխանակ երկնից դնէ անչափելի տիեզերքը, յորոց վերայ կան աստեղք, և 'ի վերայ աստեղաց որպէս Թէ են բնակարանք բանական արարածոց, որք 'ի մէջ ստեղծեալ Հոգւոց՝ կան, աւելի բարձրագոյն լինելին քան զմարդն, Թէ չլինէր ահագին հեռաւորութիւն ընդ մէջ անկատար մարդոյ և կատարեալ Աստուծոյ։ Ո՛չ և ար-տեալ զձեռել իւր զաստողութեան՝ չայ՝ փոփոխակի անցանէ 'ի դասս Հրեշտակաց, և կան զնոսա կլամ լինել սուրբս և բարերարս, և կլամ վայր ընկեալ և Թշնամի էակս։ 'Ի լեզուն մեր տիեզերք ոչ երբէք տեսեալ լինի փոխանակ երկնից. և որպէս ասացի 'ի Գիտնագրութ ե-մուս 'ի յօդուածն 33․ սոս և անհաստատելի կարծիք է աստեղաց ոմանց ունել բնակիչս բանական կամ անբան կենդանեաց հանդոյն երկրի մերոյ։ Մարդն ստեղծեալ գոլով ըստ պատկերի և ըստ նմանութեան Աստուծոյ կատարեալ է, որպէս ,, Եղերո՛ւք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է. Մատ. Ե, 48. Որ միանգամ կատարեալքդ էք. Փիլ. Գ. 15, Զի կա-ցուցուք զամենայն մարդ կատարեալ. Կող. Ա. 28. որպէս ունի և Լոքն յէջ 117 ,, Աստուած ստեղծել է նորան՝ այսինքն մարդուն ըստ պատկերի իւրում և ըստ նմանութեան, զարդարել է նորան կատարեալ մարմ-նով, անմահ Հոգով, որ ոչինչ միւս արարած չունի երկրի վերայ"։ Նա՛ 'ի հանգանակին հաւատոյ դաւանեմք զՔրիստոս" Աստուածն կատարեալ մարդ կատարեալ ,,. և որպէս եղև Քրիստոս մարդ կատարեալ, եթէ մար-դըն է անկատար։ Անկատար ասի նորածին մանուկն, զի դեռ անբան է, անխօս և անլեզու, Թէպէտ և զներպա-

ջանս ունի մարդոյ բանաւորի.

Աստուած մերձ է միշտ ամենայն մարդոյ, և չէ անհատին (այսինքն յոյժ) հեռի 'ի նմանէ. „Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի. Մատ. իը. 20. „Նաև ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ 'ի մէնջ... որովհետև ազգք եմք Աստուծոյ. Գործ. ժէ. 27, 29. Հրեշտակք ինքնին չեն բարերար մարդկան, այլ են գործիք կամ կատարող կամաց և հրամանացն Աստուծոյ, որպէս և անուն իսկ իւրեանց ցուցանէ, զի հրեշտակ նշանակէ պատգամաբեր, առաքեալ, դեսպան, սպասաւոր. Տես Սաղմ. ղ. 11. Մատ. ժա. 16. ժգ. 41. իդ. 31. Մարկ. ա. 2, 13. Ղուկ. ա. 19. 26. Գործ. է. 35. ժբ. 11. Եբր. ա. 14. և այլուր բազում. Եւ 'ի դէպ ոչ դըտանեմք՝ թէ հրեշտակք անձամբ անձին լինին բարերարք, թերևս զբարերար համարելի բարի, բայց ամենայն որ գիտէ, թէ այլ է բարին և այլ բարերարն. Մայլքն վայր ընկած, (անկեալք 'ի վայր). անկանիլն 'ի վայր լինի ինքնին կամաւ, այլ նոքա (չար հրեշտակքն) ոչ ինքնին 'ի վայր անկան, այլ արկան յԱստուծոյ, կործանեցան 'ի Տեառնէ յաղագս ամբարտաւանութեան իւրեանց, որք կամեցան հաւասարել Աստուծոյ աթոռով իւրեանց.

Օտարանք մի մեծ այս են, զի Սատանայք և Հրեգեղէն դոյացութիւնք այնպէս անընդմիջաբար խառնիւ խառն 'ի մէջ բերելն, մինչև կարծել՝ թէ և Հրեշտակք երկնից Սատանայիկք լինեն. և այս շփոթութիւն և անհաս դատաւորութիւն բանից է անտի, զի միանգամ գրեալ 'ի ձեռնին գոլով երեալ յերկինս առ Սատանայիւ՝ կամեցեալ է միանգամայն կրձատութեանք 'վձանցն և զձառ Հրեշտակաց, զի մի միանգամ հարկ

եղեցի ելանել յերկինս և խօսիլ զնոցանէ ։

17 „ Մարդկային ազգը մեծապէս և երկար ժամանակ հեռացած էր Աստուծոյ և նորա սուրբ կամքէն , զոր ինք Աստուած կարող էր ճանչել , թէ նորա իւրեանց ըմբռնողութեամբ կրօնականի դէպի առաքինութեան ճանապարհը , այս պատճառաւ ուղարկեց նա երկնքից իւր որդին , որ ինչպէս Միածինն առ 'ի Հօրէ՝ լինի ուսուցիչ , փրկիչ և երանացուցիչ մոլորեալ մարդոց համար ։ Այս նպատակիս հասանելու համար պէտք է ( պէտք էր ) , որ Փրկիչը լինէր Աստուծոյ որդի · որովհետև սորա միայն կարող էր ճիշդ յայտնի լինել հայրական կամքը ։ սա միայն որ ոչինչ մեղք չգիտէր , կարող էր քաւել աշխարհի մեղքը ։ սորա՛ն միայն յայ ունէր Աստուած՝ որ կը լսեն մարդիկ՝ մեր բոլոր մարգարէներէ և ուսուցիչներէ երկնաւորական խօսուածքը արհամարհելոյ յետոյ ։ Բայց պէտք էր նոյնպէս՝ որ Յիսուսը լինէր մարդ , որ աշխարհի հողը , տառապանքը և Թշուառութիւնքը , այլև մարդկութեան ախտութիւնքը ճանաչելով՝ կարողանար նոցա մօտ հաւատ գտանել , նոցա ուսուցիչ լինել , Հօր կամքը իւր բերանի ճարտար լեզուովը բացայայտել նոցա , և նոցա աչքի առաջքը մի կենդանի արժանի նմանողութեան օրինակ դնել ։" 38 , 39 ։

Օրէնքն և զանհաս նախախնամութիւնն Աստուծոյ 'ի սկզբանէ աշխարհի և անդր քան զյաւիտեանս 'ի մասին փրկագործութեան մեղուցեալ և դատապարտեալ ազգի մարդկան պատկերացուցանէ այնպէս , որպէս թէ Հայրն Աստուած զմեծ խոհեմութիւն և զմեծ գթութիւն յանձին բերելով՝ այնպէս հոգացեալ է գտնել կարասեալ պատկերի իւրոյ , զի մի՛ սխալ կամ անյաջողութիւն իմն դիպեսցի 'ի ձեռնարկս իւր ։ զի Աս

մարդկան՝ ասէ․ Մեծապէս և ընդ երկար հեռացեալ էր յԱստուծոյ և ՚ի սուրբ կամաց նորա, և Աստուած ոչ կարէր մտանել, թէ նոքա ընտրութեամբ իւրեանց կամքեն գտանել ՚ի ճանապարհ առաքինութեան, ուստի առաքեաց յերկնից զմիածին իւր լինել նոցա ուսուցիչ, փրկիչ և երանացուցիչ․ Յոր նոյնատիպ հաւանելոյ սակս, պարտ էր՝ ասէ, զի Յիսուս եղիցի որդի Աստուծոյ․ Սածոյն՝ այսպէս առնլով, այս կարծել թէ Յիսուս յառաջ չէր որդի Աստուծոյ, և այդ բարձրացոյց զնա Հայր նորա յայս արժանաւորութիւն, և թէ այլ որդիք լեալ են Աստուծոյ, և ՚ի մէջ նոցա առ Քոյն (․Բրիտոս) կարող էր քաւել զմեղս աշխարհի։ Նածոյն յորս ունէր Աստուած, որ կը լինէր մարդիկ․ իսկ թէ ՚ի մէջ այլոց որդւոց իւրոց Հայրն Աստուած զայս իւր ՚ի Սածոյն էր եդեալ, թէ քաջ քան զայլսն գրաւել ունի զմեղս մոլորելոյն ՚ի լաւ քանից իւրոց․ Նմանապէս պարտ էր՝ ասէ, Յիսուսի մարդ լինել, զի իրազեկ եղեալ ամենայն կարեաց և տկարութեանց մարդկան, և զճարտարութիւն լեզուի բերանոյ իւրոյ ՚ի գործ եդեալ՝ կարասցէ գտանել հաւատս առ նոսա․ այս է ամենայն զօրութեամբ ջանք ջանալ, զի հաւատասցեն ինքեան իբրև նմանողական կենդանի օրինակի․ Այս ամենայն մտացածին ինքնաստեղծ անյարիր յաւելուածք և դաւանանք ոչ ամենազօրին և ամենակարողին Աստուծոյ են վայելչականք, այլ թագաւորաց աշխարհի, ուք յանունն որով գեղաք ինչ, այնպիսում անձին յանձնեն զկատարութիւն և զիշխանութիւն նորա, որ շատ կամ փոքր վերահասու և վաղածանօթ իցէ հանգամանաց երկրին, կամ կրօնականց և ազգականց է նորատոց հպատակացն, աներկմիտ յուսացեալք, թէ այնպիսիք անշուշտ օգտակար եղիցեն

իւրեանց, և սիրելի և բարեկամ յաչս դեռ ատեցեալ ժողովրդոցն։ Որպիսի յոյժ օրինակս 'ի մերում ժամանակի տեսաք և տեսանեմք յաշխարհի։ Մեծանունն Մայրաբառայեանն Պասկեւիչ 'ի պատերազմին Պարսից, և Օսմանեանց 'ի գաղթեցուցանելն ըզեղբարս Հայս 'ի Պարսկաստանէ և 'ի Տաճկաստանէ 'ի գաւառս Ռուսաց՝ ոչ միայն Հայազգի ամբոխին եղեալս առ իւրեան 'ի բանակի իւրում կարգեաց 'ի վերայ նոցա յայն գործ, այլ և յաւելեալ խնդրեաց 'ի Մեծէ Կայսերէն և ետ բերել 'ի Ռուսաստանոյ զմեհաւանեալ Հայազգի գնդապետ Լազար Յովակիմեան Լազարեանց։ Նմանապէս և 'ի նոր-առեալ քաղաքն Երեւան, 'ի Նախիջեւան և Ախալցխա կարգեաց Հայազգի գլխաւորս, որպէս զՄովսէս Արղութեան, զՎասիլ Բեհբութեան, զԳէորգ Միրզաեան, զԻսահակ Պալաւեան և զայլս։ Ա.Ա. քան. ընցի ասել կամ գրել, թէ և Աստուած գործեաց կամ գործէ ըստ մարդկան. զի նա յառաջ քան զինքն. աշխարհի ունէր 'ի միտ իւր զդարմանալի ամենայն գործոց իւրոց, և զանցորդս մեր տեսանէ կանխաւ, և 'ի գիրս նորա գրեալ են ամենեքեան։ Ոչ թաքչի ոսկր մեր 'ի նմանէ, զոր արարեալ է 'ի ծածուկ. Սաղմ. ՃԼԸ. 15. 16. Եփես. Բ. Եւ մեք բաց 'ի փորձառութենէն Եւրոպեանց յանդգնեցի ասել, թէ Աստուած ամենակարողն և ամենայնէն չէր կարող ծածկել։ Թէ վասն դէմ դնեալ նախախնամութեան իւրոյ հակառակ էր, զի Յիսուս Աստուածորդի եղիցի. Թէ ոչ միայն՝ և ոչ այլում ումեք յառաջ Աստուած, թէ լինելոց մարդիկ. Թէ պատրաստ էր Յիսուսի նաև մարդ լինել, զի ճանաչելով զՀայր, զաստուածութիւն, զթշուառութիւն և զամենայն տկարութիւն մարդկան՝ կարասցէ գտանել (այս է որսալ, 'ի ձեռս

ընդէլ հնարիւք (ինչ) պէհս ասա 'ի նոցանէ. Ո՛չ մե-
ծի հայհոյութեանս, մի՛ թէ էակից և փառակից Բանն
Աստուած առանց մարդանալոյ չգիտէ՞ր և չկարէ՞ր գիտել
զկարիս մեր. Ապա զի՞նչ է բանն, զոր Պաւղոս ասէ
յԵփես. գ, 20. „Որ կարող է առաւել քան զամե-
նայն ինչ առնել յաճախութեամբ, քան զոր խնդրեմք և
իմանամք. յորմէ առաւել Եկեղեցի մեր միշտ աղօթէ.
„Դու գիտես պէտս մեր և զկարիս, առաւել քան զոր
խնդրեմք և իմանամք.„ Ժամագիրք. Եւ արդ՝ մարդե-
ղութիւն նորա յայն առնի և ե՛թ եղև, զի մերձ եղեալ,
և 'ի միջի մերում շրջելով կարասցէ ականատես և ա-
կանջալուր լինել թշուառացեալ վիճակի մերում բնա-
ւորմանութ բժշկաց, որք չ'և տեսեալ զհիւանդն և
զննեալ զցաւս նորա և զկեղս, և չեղեալ յառաջա-
գոյն հաղորդակից և խելամուտ ամենայն հանգամանաց
ցաւոց նորա, չհամարձակին հնար գտել առողջարար.
Ո՛չ, ո՛չ. Խորհուրդ մարդեղութեան միածնին Աստու-
ծոյ և փրկութեան մերոյ նկատեալ է կանխագիտու-
թեամբն Աստուծոյ. Գործ. բ, 23. Խորհուրդ կամաց
նորա ըստ հաճութեան նորա յառաջագոյն եդ նովաւ
'ի տնտեսութիւն լրման ժամանակաց, բովանդակել զա-
մենայն 'ի Քրիստոս, որ ինչ յերկինս, և որ ինչ յերկ-
րի 'ի նոյն. . նա (Հայրն Աստուած) յաջողէ զամե-
նայն ըստ խորհրդոց կամաց իւրոց. Եփես. ա. 9—11.
գ. 9, 10. Կող. ա. 26, 27. ա. Տիմ. գ. 16. Գործ.
բ. 23, 24.

**18**, „Ո՞յք ուսմունք ծանուցանեն մեզ Աստուած նո-
րա (այսինքն Քրիստոսի) էութիւնը.„ 40.

Նոյնութիւն կամ էակցութիւն Աստուածորդւոյն ծա-
նուցանի յերկնից յետ մկրտութեան նորա 'ի Յորդանան

'ի Յորդանան գետ, և յայլակերպել Նորա 'ի լեառն Թաբօր. այսու բանիւ ,, Դա՛ է որդի իմ՝ սիրելի: ընդ որ հաճեցայ, դմա լուարուք: Մատթ. Գ. 17. ԺԷ. 5. Մարկ. Ա. 11. Թ. 6. Ղուկաս. Գ. 22. Յովհ. Ա. 32. Իսկ յաւետարանին և 'ի Թուղթս Առաքելոց չէ յանուանէ, թէ Հայրն Աստուած ղէութիւն կամ զԱստուածութիւն միածնին բանին իւրոյ յայտնեաց ինչ աշխարհի ուսմամբ Նորա. այն է 'ի խօսիլն Նորա ընդ ժողովրդոց առակօք և օրինակօք.

19. ,, Մարդկութեան Աստուածային բարեկամն . . . երբեմն բաժանեցին, թէ նա այնպիսի մարդերի մէջ է մեծացել, որոնց կամենում է ուսումն տալ ,, 42.

Օր լինչ և խօսի ոչ զԱստուծոյ, պիտոյ հաստատել և ապացուցանել զայն վկայութեամբք սուրբ գրոց. ահա այսպէս ասացել մեզ բանիբուն մարդկայեան. թէ յոր ուսուցիչ հին և նոր կտակարանաց կան գրեալ յանուանէ բանքս, թէ Քրիստոս աստուածային բարեկամն մարդկութեան բաժանեցաւ երբեմն 'ի նախանձորդաց իւրոց և 'ի թշնամեաց, թէ նա սնեալ է 'ի մէջն այնպիսի մարդկանց, զորս կամի ուսուցանել. և որով հանճարեղութեամբ կոչէ առ և 'ի յաջորդ էջն 43 աստուածային զայն, զոր Աստուած զուարթուք և հաստատք, մի թէ Աստուած և աստուածային միանոյն էցեն. Հա՛ 'ի միւն 42 էջ, տող 14, 34, լինքն խակ աստուածային արդարաւորութիւն, աստուածային անօրէնութիւն առէ, մի թէ և Քրիստոս վերացեալ անուն էցէ, և ոչ յատուկ Աստուած, այլ իւն վերաբերեալ Աստուծոյ.

20. ,, Ժողովոյն սրբոյ հեղումն . . . Ժողովին սուրբ Թափելով Առաքելոց վերայ ,, 44.

Զեղումն, Թափել (զոր 'ի Տփխիս աշխարհօրէն ասեն վիթել, փայթել) վերաբերի հեղեղուկ իրաց նիւթականաց, որպիսի են ջուր, գինի, ձէթ, իւղ, և այլն. իսկ Զեղուն տուրք նախ՝ զի չէ նիւթական իր բառ ասացելոյդ, զի կարասցէ հեղանիլ, թափիլ, և թէ առեք գոյի, այդ է նմանութեամբ կամ այլաբանութեամբ. և երկրորդ՝ Զեղուն տուրք 'ի վերայ Քրիստոսի 'ի մկրտութեան նորա էջ աղաւնակերպ, և 'ի Պենտեկոստէին նմանու 'ի վերայ Առաքելոցն բաժանեալ մի մի առանձինն 'ի լեզուս իբրև 'ի հրոյ. տես Մատ. գ. 16. Գործ. բ. 3. Որ յայտնապէս երևի, թէ մարմնով էջ (վեր եկաւ). և մտանաւոր նման հրեղէն լեզուաց նմանու 'ի վերայ Առաքելոցն, և ոչ թէ բառ օրինակի հեղեղուկ իրաց հեղու և թափելոյ.

21. «Հաւասար դէպ 'ի Քրիստոս պիտոյ է առաջնորդէ. մեզ դէպ 'ի հաւատք առ Աստուած. և աս է. սուրբ Գրքի վկայելովը ճշմարիտ առաքինութեան և երանութեան աղբերը.» 45.

Մեզ անհրկայ հաւատալը և ճշմարիտ գիտելը, թէ Քրիստոս է Աստուած և որդի Աստուծոյ, և հաւատալով նմա՝ հաւատալը, թէ նա երկրորդ անձն է ամենասուրբ Երրորդութեան, որով երկինք հաստատեցան, որով ազատեցին մարդիկ 'ի մեղաց բանիցն, որով Քրիստոնէութիւն հիմնեցաւ յաշխարհի. որով ժառանգ և որդեգիր եղաք Հօրն երկնաւորի. այս թիւր և անհնարին վարդապետութիւն է այս ասել, թէ հաւատալն 'ի Քրիստոս առաջնորդէ առ հաւատալն Աստուած. և "աս է, ասէ՝ սուրբ Գրքի վկայելովն ճշմարիտ առաքինութեան և երանութեան աղբերը", և թէ յո՞ր Թէլթ սուրբ Գրոց կայ այդ բան յայտնապէս

զատեղին ոչ նշանակէ. Բայց այսմ ապա Մովսէս և Մահ-մէտ հաւասար են Քրիստոսի, զի և նորա առաջնորդեցին ժո-ղովրդեան հաւատալ Աստուծոյ:

22. Ապաշխարութիւնն մի է յեօթն սրբազան խոր-հրդոց եկեղեցւոյ մերոյ, և 'ի Քրիստոնէական Աստուա-ծաբանութեան սահման է առաջանալ զայն 'ի միջոցին ընդ-այլոց խորհրդոց, յորս կարգաւ է երկրորդ. բայց վար-դապետն Լազարեանց քրիստոնէականութեան արուշեալ զնա յայլոց խորհրդոց յ'Հ 48, ասէ անտարակոյս, թէ ,,Ա-պաշխարութիւնն այն խորհրդական արարողութիւնն է, որով քրիստոնեայ մարդը զղջալով իւր արած մեղքերի վերայ, խոստովանելով իւր յանցանքը Աստուծոյ և նո-րա քահանայի առաջև, և քահանայի բերանով թո-ղութիւն է գտանում Աստուծոյ. ,, որոյ նախընթացայ շարադրութեան հանդերձ մեկնաբանութեամբք և բացատրու-թեամբք ,, Հաւատք և գործք, գործերի անկատա-րութիւն, ուղղութեան հակառակութիւն, ուղղութեան ճանապարհ, անձնաճանաչութիւն, և զկնի խօսելոյ զա-պաշխարութենէ, յորս նոյնպէս կարդամ ,, Ուղղութեան դիտաւորութիւն, որբութիւն. ուղղութեան հնարք-ներ, Աստուծոյ բանն և այլն ,, Նա այսպէս խառնեալ զա-պաշխարութիւնն ընդ այլոց բանախօսութեանց, յայս-նայէս չհամարի զնա խորհուրդ եկեղեցւոյ. Տեղւոյք կարդամ 'ի յառաջոդում, թէ բաց 'ի Մկրտութենէ և 'ի Հաղորդութենէ զմիւսսն կարծիս ունի վարդապետն զԴրոշմն, զԱպաշխարութիւնն, զՔահանայութիւնն և զՕծումն Հիւանդաց:

23. ,, Քրիստոնեան հաւատք ունենալով դէպ 'ի իւր փրկիչը, իւր սրտումը զգալով իւր բարոյական թշ-ուառութիւնը, փափագով և կարօտով ցանկանալով իւր

փրկութեանը՝ հեղուն ձեռքը այն հնարների վերայ։ Սոքա են Աստուծոյ բանը, մկրտութիւն, հաղորդութիւն և մեր եկեղեցական խորհուրդք, այլև աղօթք"։ 51։

Մ՞է որ առի քրիստոնեայ, եթէ չէ մկրտեալ յանուն ամենասուրբ Երրորդութեան, այս մկրտութիւնն չկարէ լինել քրիստոնէին հնար փրկութեան ՚ի բարոյական թշուառութեանց խորց։ Այլ իսկական հնարք են աղօթք, պահք, զղջումն, հակումն, ապաշխարութիւն, խոստովանութիւն մեղաց, ուխտ հաստատուն չգործել միանգամ՝ չարիս, հաղորդութիւն, ողորմութիւն, յոյս և ապաւինութիւն առ Աստուած։ Իսկ մկրտութիւնն յայնժամ համարի հնարք փրկութեան, յորժամ հեթանոս որ Ճշմարիտ զղջմամբ և ապաշխարութեամբ դարձեալ յանաստուածութենէ իւրմէ և ՚ի մոլորական կարծեաց՝ մկրտեսցի յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Զի մկրտութիւնն ՚ի սկզբնական ադամական մեղաց մերկէ, իսկ ապաշխարութիւնն ՚ի ներգործական մեղաց։

ՁԵ. " Քրիստոնէութեան հիմնադիրը կարգել է Մկրտութեան և Հաղորդութեան խորհուրդքը։ Սուրբ Մկրտութիւնն է այն հանդէսը որ կրօնական գործողութիւնն՝ որ սահմանադրեց Քրիստոս իւր Համբարձմանից քիչ մի յառաջ, երբ որ աշակերտքը ժողովեալ էին Ձիթենեաց սարի վերայ։ Այս խորհուրդը կատարելումն քրիստոնեայ ծնողէ մանուկը յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ 3 անգամ ընկղմելով ջրի մէջ, որ մաքրութեան և սրբութեան նշան է։" 53, 54։

Զխորհուրդս եկեղեցւոյ դնելով 2, մկրտութիւն և հաղորդութիւն, և բացարձակապէս գրելով, թէ Քրիստոնէութեան հիմնադիրը կարգել է այսպէս, յայտ-

Նուաղէս ուրախութեան զայլըն եւ ջարդէ՝ Թէ այնք չ'են կարգեալք 'ի Քրիստոսէ. Մկրտութիւն սահմանի 'ի մէջ, «Խորհուրդ՝ յորում հաւատացեալըն երրակի ընկղմեալք մարմնոյն 'ի ջուր յանուն ամենասուրբ Երրորդութեան Հօր, Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ մաքրին վասն մարմնական մեղանչական կենաց, վերածնեալ Հոգւով սրբով 'ի նոր հոգեւոր շնորհական կեանս. Եթէ ոչ ոք ծնցի 'ի ջրոյ եւ 'ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ. Յովհ. գ. 5. Խորհուրդ մկրտութեան սահմանեցաւ նախ՝» Յովհաննէս մկրտեաց մկրտութիւն ապաշխարութեան ամենայն ժողովրդեանն եւ ասէր, զի որ գալոցն է յետ նորա, 'ի նա հաւատասցեն, այսինքն է 'ի Յիսուս Քրիստոս. Գործ. ժԹ. 4. Նոյն Յիսուս Քրիստոս օրինակաւ իւրով օրհնեաց եւ սահմանեաց զնոյն մկրտութեամբ իւրով 'ի Յորդանանէ. 'Ի վերջոյ յետ յարութեան իւրոյ 'ի համբառնալըն յերկինս՝ հանդերձ հրամայեաց Առաքելոց իւրոց, «Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. Մատ. իը. 19. Մարկ. ժզ, 15, 16.

Մկրտութիւն կատարի երիցս ընկղմելով 'ի ջուր յօրինակ երեքօրեայ Թաղմանն Քրիստոսի յանուն Երրորդութեան, Թէ մկրտեալըն քրիստոնեայ ծնողի զաւակ էցէ, եւ Թէ ոչ. Սխալ է ասելն յանուանէ յառաջարար «Քրիստոնեայ ծնողի մանուկն, զի ընդդէմ է հրամանի Տեառն, զոր եւ Առաքելոյն Թէ՝ Երթայք յաշխարհ ամենայն եւ քարոզեցէք զԱւետարանն ամենայն արարածոց (այսինքն անխտիր ամենայն մարդկան). Որ հաւատայ եւ մկրտեսցի՝ կեցցէ, եւ որ ոչն հաւատայ՝ դատապարտեսցի.

**25.** «Մկրտութեան հետ կապակից է մի այլ սուրբ գործողութիւն, որ տալիս մեզ Դրոշմ, որ և կատարվում է մկրտեալ երեխայի ճակատը և միւս անդամները կամ զգայարանքը օծելով սուրբ իւղով (միւռոնով)։» 54։

զԴրոշմն կոչէ մի այլ սուրբ գործողութիւն. և ոչ յատկապէս խորհուրդ, և անգամ հարկաւոր քանի մի տող քանիւք առանց լայնաբար մի բառ միջէ բացատրելոյ զնոյն բառ. Մկրտութեան և Հաղորդութեան։ Ուր նկատելոյ արժանի է, զի ասէ «Մկրտեալ երեխայի ճակատը օծելով և այլն։ Յայսմ եթէ երեխայ ասելով՝ իմանայ զնորածին մանուկն, չէ կատարեալ սահման դրոշմից, զի և կատարելոց զինի Մկրտութեան մատակարարի դրոշմ, իսկ եթէ երեխայ ասելով՝ իմանայ զպատարազդեալ ՝ի Մկրտութիւն, սխալ է ծանր, ասել «Մկրտեալ երեխայ» զի յետ Մկրտութեան ոչ ևս ասի նա երեխայ։

**26.** «Բաց ՝ի այդ եկեղեցական խորհրդներից՝ Հայաստանեայց եկեղեցին ընդունում է Քահանայութիւն, Ամուսնութիւն և Օծումն հիւանդաց.» 56։

Զայսպարութիւնն կանխաւ հանեալ ՝ի Թուոյ 7 Խորհրդոց, և զԴրոշմն կոչեալ մի սուրբ գործողութիւն, ընդունի միայն յայանի զՄկրտութիւն և զՀաղորդութիւն, որոց վասն խակ ասէ, «բաց ՝ի այդ եկեղեցական խորհրդներից Հայաստանեայց եկեղեցին ընդունում է», այսինքն, թէպէտ չեն խորհուրդք, բայց նա իբրև խորհուրդս ընդունի զերիսն «Քահանայութեան, զամուսնութեան և զՕծման հիւանդաց։ Եւ երրորդ դիմաւ խօսելով «ընդունում է» զանձն ՝ի բաց առնի ՝ի հայութենէ, զի մի առաջին դիմաւն ասելով «ընդունեմք»

մեք Հայքս ,, ( որ ամենեւին խաչ չէ հարկաւոր և անվայել է Ճշմարիտ Լուսաւորչական Հայոյ ) շաղախեացի 'ի մոլար կրօնադաւանութեան, և մեղուցեալ 'ի զուր պարտական գոլ՝ առաջի Աստուծոյ և ուղղահաւատ Քրիստոնէից:

27. Որչափ զԳրոշմէն, նոյնչափ դրեթէ և զՔահանայութենէն և զՕծմանէն հիւանդաց խօսելով՝ ակամայ կամօք քարոզեալ 'ի Կրօնադիտութեան Հօրն Սալլանդեան, Ամուսնութեան մասին ասէ՝ թէ Քրիստոնէական բարոյականութիւն, չորրորդ հատուած, յօդ. 5. երես. 102: (56. 57.) զոր տեսցուք յետ սակաւուց:

28. ,, Այն առաջին բանը, որին հանդէպ մարդը կարող է ունենալ պարտականութիւնք՝ Աստուած է, . . . նրա զանազանվում են այլ պարտականութիւններից. նորանով՝ որ Աստուած որպէս կատարելութիւն ոչինչ օգուտ չէ ընդունում''. 69:

Կատարելով զպարտաւորութիւնս մեր առ Աստուած երկիւղիւ, հնազանդութեամբ, սիրով, շնորհակալութեամբ, օրհնութեամբ և երախտագիտութեամբ՝ գտանիցեմք պարտաւոր, զի ծառայք անպիտանք եմք, զոր պարտն էաք առնել, արարաք. Ղուկ. ԺԷ. 10: Եւ յայսմ հանիմք հրաւունս պահանջել, թէ և Աստուած փոխադարձօրէն շնորհ կալցի ծառայական կամ որդիական պարտաւորութեանց մերոց մատուցելոց նմա, կամ կարծել թէ քաղեսցէ նա օգուտ ինչ 'ի նոցանէ: Աստուած՝ որ արար զաշխ և զամենայն որ 'ի նմա, նա երկնից և երկրի է Տէր. ոչ 'ի ձեռագործ տաճարս բնակէ. և ո՛չ 'ի ձեռաց մարդկան պաշտի իբրև կարօտ իմիք. նա տայ ամենայնի կեանս և շունչ և զամենայն ինչ. Գործ. ԺԷ. 24. 25:

29. „Սխալ էր (է) մեր այն մտածութիւնը, որպէս թէ կարելի էր Աստուծոյ փոխարինական ընծաներով (շնորհներով) շնորհակալ գտանիլ: Ճշմարիտ քրիստոնեան ծանուցանէ իր շնորհակալութիւնը գովելով և փառաւորելով Աստուած". 73:

Որովհետև 'ի մէջ Հայոց սովորութիւն է յանուն Աստուծոյ շնորհել շնչս 'ի սուրբ եկեղեցեաց և բաժանել աղքատաց իբր ողորմութիւն, և այս սովորութիւն չիք առ Լուտերականս. ուստի այսու բանիւ սխալ մտածութիւն համարի Սարգսական պաշտօնապետութիւն մեր, իբրու այն թէ ծածկաբար Պապական, կամ ծածուկ բաղդին եկեղեցական Օրէնսս որ լցէ: Իւր ասելովն թէ, Ճշմարիտ քրիստոնեան ծանուցանէ իր շնորհակալութիւնը գովելով և փառաւորելով Աստուած", հասկեցուցանէ, թէ ասոր Հայն սուտ քրիստոնեայ է, որ ընդ շնորհակալութիւն իւր ծանուցանէ ընդհանրապէս փոխարինական ընծաներով (շնչերով)՝ զոր հասարակաց ըն-ուտ. ատելք մատաղ:

30. „Նմանապէս մարդս համար իւր հաստատ Ճշմարտութեան է այս երկրի վերայ երջանիկ լինելու և երկնքամէջ երանութիւն գտանելու: . . . Պարտական է քրիստոնեան պատուել և յարգել իւր ընկերի կրօնական հաստատ, թէ նորան մանուկից լինելը, թէ ոչ . . . Օտարի հաստատ երկմիտ խորհրդով չխափանէր, իւր եղբօրները կրօնական ազատութեան վերայ թէ և լինելը խիղճն յանդիմանի, ծուրը չառնէր. և նոյն հաւատը կրօնական բաների մասին չդատապարտեր". 98. 99.

Այսպէս բառ բանիւս այսպիսի կը ազատէն երջանիկ է յայտնի աշխարհի հաստատ իր 'ի սկզբանէ հաստատածոյ խայ: և յերկինս ունի գտանել վերանութիւն. և բան

Տեառն ասացեալ առ վարդապետն Նիկոդիմոս. «Եթէ ոչ ոք ծնցի 'ի ջրոյ և 'ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ. Յովհ. գ. 5. զորոյ իմաստոր Հաւատոյ անշարժ և անփոփոխ: Որպէս քաղաքավարութեան պահանջեն վասն անձանց ընդ ամենայնի զսահմանս թէ ինչ չանսարգել զինքն սերտ. բայց չէ մեղ պարտք և ոչ իսկ հրաման 'ի Տեառնէ յաւելուլ և պակասել զհաստատ ընկերին, զոր կոչեմք լինել թիւ չ, մնալ և ընդդէմ Աստուծոյ և սուրբ Գրոց նորա: Ահա որ զխոյզն ասէ, զշարժեն, և ոչ ամենեցուն մեղք են նմա. Յակ. գ. 17: Եւ թէ՝ Ամէն որ ասիցէ զսուրբ բանն, և զհաւատն չար: Երեմ. ե. 20: Եւ թէ՝ Եղիցի ձեր բան այոն այո, և ոչն ոչ. Մատ. ե. 37. և թէ՝ Որ ուրանայ զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնմանէ առաջի Հօր իմոյ որ յերկինս է. Մատ. ժ. 33: Իսկ զեկեղ որէն է սիրել զնոսա և պատուել, բայց ինքն զձեռնամատ, այլադէմ, արարածապաշտ, ու բազում հայեացեցին ոչ երբէք: Մանաւանդ զանձս վասն զառեալս Եկեղեցւոյ պատրն է զաղօթելի յանցնել և խանգարել զայն քաղցեն Աստուածեան, և չարաձայնել զնա ազգաշու, զչարձադ, զաղանդաւոր, զՄահմետական և զՀրեայս 'ի Քրիստոնեութեան. յաւելուլ և պակասել զնոր կրօնս նոցա, և ոչ Հրեշտակ զերկ ընդդէմ Քրիստոսի, «Որ հաւատայ և մկրտեսցի՝ կեցցէ. և որ ոչն հաւատայ՝ դատապարտեսցի:

Այս վարդապետութիւն սրբոյ Եկեղեցւոյ 'ի Լուսաւորչական կանոնեան է ասել և թարգմանել, և մինչ յաւգելի Պատուոյ նոցա ոչ կարգացին զայս, և ոչ զգաշացին, թէ Լիպէրանց կրօնի վարդապետութիւն է, «[illegible]. » և ոչ ամա-

չեցին, և ոչ ամաչեն դեռ զողորմելի Հայս մեր շրջել 'ի Բողոքականութիւն և մոլորեցուցեալ յուղիղ կրօնէ և 'ի Հայրենի փարախէ սուրբ եկեղեցւոյ իւրեանց, լինել պատճառ կորստեան հոգւոց նոցա: Որ քակէ զցանկ Հայրենի, հարցէ զնա օձ անտարատի. Ժողով. Ժ. 8. Որոց պարտականութիւն է զանաստուած հեթանոսս որսալ, բայց դարձ ըստ աշխարհական առակին ընտանահաւերն որսան՝ և ոչ զվայրիս, այն է զպարզամիտ ժողովրդականս մեր նենգաւորութեամբ, խաբէութեամբ, և զանազան անարգ հնարիւք:

31 «Ամուսնութիւնք սահմանադրեալ լինելով նոյն ինքն Աստուծոյ հրամանաւ, այն մեծ կապակցութիւնն է տղամարդի և կնոջ մէջ, որանով պիտոյ է պահպանվի մարդկային ազգը, որանով մարդ ու կին պիտոյ է օգնական լինին միմեանց մինչև 'ի մահ....այն կապակցութիւնը՝ որին տալիս է եկեղեցին իւր օրհնութիւնը և սրբութիւնը, որ և սկսեալ հօթներորդ դարուցը համարվում է եկեղեցական խորհուրդ Յունական, Լատինական և Հայաստանեայ քրիստոնէից մէջ: Ամուսնութիւնը...որ շատ հազիւ, և այն ժամանակը միայն պիտոյ էր լուծել (կտրել) երբ չէր այլ ևս կարելի այդ կապակցութիւնը շարունակել.»: 102:

Ամենախալ է վարդապետն Նազարեանց, զի զոր Առաքելոյն խորհուրդ կոչէ, նա կապակցութիւն սոսկ ընդդէմ բանից սուրբ Պօղոսի. «Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ 'ի Քրիստոս և յեկեղեցի»: Եւ որպէս 'ի Ճակատ գրոցն, նմանապէս աստ և առեալ այլուր, յայտնապէս ցուցանէ, թէ այս քրիստոնէական ուսումն ոչ վասն եկեղեցւոյ մեր Հայոց է, այլ որպէս թէ վասն իւր կամ վասն օտարի. զի զԱմուսնութիւնն անջատեալ

և բացորոշեալ յայլոց խորհրդոց և խառնեալ ընդ յօդուածս քրիստոնէական բարոյականութեան յետ իբր 46 էջից ուղղակի լուրով բերանով և լուրով գրչաւ չխառհի կոչել զնա խորհուրդ, այլ հաղորդութիւն ընդ մէջ առն և կնոջ 'ի սերել զորդ մարդկան և լինել օգնական միմեանց, որով ամուսինք պայմանադաշն ունելով 'ի միջի ըստ վաճառական տուրևառի յառակցութեանց 'ի ծերանալ և 'ի դադարելն յորդեծնութենէ, կամ 'ի վատուժելն հիւանդութեամբ և այլով իւիք աշխարհական փորձանօք, և 'ի պակասելն յօգնելոյ միմեանց, այն ժամանակն՝ ասէ, պիտոյ էր իշխել, (կարել) զայնպիսի կապակցութիւն ամուսնութեան, այս է մեկնիլ յիրերաց, թողուլ, արձակել զկանանս իբրու զանպիտանացեալս և զհնացեալս: Ուր ընդ հակառակն այր և կին զուգեալք միանգամ 'ի միասին օրինաւոր ամուսնութեամբ և փոխադարձ սիրով ըստ Աստուածային պատգամաց և եկեղեցական սահմանադրութեանց բաց յապացուցեալ շնութենէ յայնկէ դէպս կարեն թողուլ զմիմեանս և բաժանել յիրերաց զիւրեանց միութիւն: Զի զոր Աստուած զուգեաց, մարդ ոչ կարէ մեկնել 'ի միմեանց. Ծն. ա. 27. բ. 24: Մատթ. Ե. 31, 32: Մատ. ժթ. 5, 6, 9: Եւ աստ որպէս թէ զթողուլ յեկեղեցի մեր ոչ էր քրիստոնէական վարդապետութիւն կրօնի Հայաստանեայց ուսանէ, այլ որպէս հարևանցի և օտար պատմութիւն կցէ. « Ամուսնութիւնք ... սկսեալ եօթներորդ դարուցն եկեղեցական խորհուրդ է համարեալ Յունաց, Լատինաց և Հայաստանեայ քրիստոնէից մէջ. և յայսմ զքրիստոնեայս Հայաստանի յետադասելով Յունին և Լատինին՝ կարծեցուցանէ, թէ և այն ոչ ընդ Լուսաւորչական Հայք հա-

մարդիկ խորհուրդ զԱստուածութենէն, այլ քրիստոնեայք Հայաստանի, յորս մի բայց 'ի Հայոց ընտանեաց Յոյնք, Ասորք, Վիրք, Ասորիք, Կաթոլիկք և այլք. Մինչև ցծագումն Լուտերի Կալվինի և այլոց աղանդաւորաց ամենայն Քրիստոնեայք աշխարհի զԱստուածութիւն ընդ այլոց միջեւ խոստովանէին համարէին և ընդունէին խորհուրդս եկեղեցական. և ոչ միայն Յոյնք, Լատինք և Հայք։

32. «Եթէ մի քրիստոնեայ, ապա Աստուածութեան օրհնած է զաւակներով, ապա ամեն օրհնութիւն մեր ծնողք.» 104։

Արդ եթէ ամենայն չէին քրիստոնեայք, և ունէին զԱստուածն՝ չկարեն կոչել ծնողք. զի բառ մարդասիրութեան Նեստորեանցն ծնողածին կոչումն առնել մինչ առ միայն քրիստոնեայ առն և կնոջ։

33 «Յառաջ ինչպէս սրտանց մէջ Մովսէս մարգարէն, Հրամանքս Աստուած, որ ընկ՛ այսպէս խաստուչփոխ ներ թերթի մէջ, և բանանալով միմեանց ցերեկ ուգիշեր... կանաչապատ զառ գարեգան եկեղեց հողագործ Հրաշալի բառաքանների. և պայծառ ախոյեան արեգակի մէջ բառը, որքա՞ն մեծ նկատմամբ նոյնքան մէջ առերես անհամար մեծերի շարքը. բայց եկեղեց առաքելոյն մի անդրադառնալ մեծ մեծ էր, ոչ ոչինչ կոխեմ առերեսերի մէջ..» 116։

Տարբեր է այժմ բանն և անհամեմատ յանձնունի 'ի մեր Աստուածաշնչի. զի շէք առք՝ թէ եկն լոյս 'ի մէջ խաւարչտին երկրի, այլ միայն ասէ. «Երկիր էր աներևոյթ և անպատրաստ, խաւար 'ի վերայ անդնդոց, և հոգի Աստուծոյ շրջէր 'ի վերայ ջուրց»։ Ծնն. ա. 1. 2. Ոչ ընթերցանեմք առք, թէ եկեղեց կանաչագարդեալ հողագործ հրաշալի բառաքանօք էր և աներևոյթ մարմնոյ լոյս կախիլ 'ի մէջ առերեսոյ. եկեղ և առերեսք նոյ–

ծանուցանեն ՚ի մերում լեզուի, և որպէս կարելի է ա-սել, թէ մին կախեցաւ ՚ի մէջ միւսոյն։

34. „Այն ժամանակ բոլոր բանականութիւնք ամենայն անասնոց երկնից թէ ինչ զարթուցանել, այս (որք ընդ չարանս) որոշելոց մտքին. Այս այլ օրուածք այ-սպէս խօսելով. ամենայն կենդանեաց համարձակ փոխանակ այդ-ծառայեն տալ. ամենայն կենդանեաց առ ուժարար է այդ-պատճառ. զոր այդքան ասելի է ուշքի համար. մեք միայն պիտոյ է չընծանելինք այդ ծառին։ Այսպէս կարծեմ, որ զոյցն թէ Աստուած նոյն միայն չէ կամեցել չնոր-հել այդ ամենայն պատկերիցն. ցանկութիւնք առա-կացա, տես Ասա. Սէք նորա ԱԷ երե 118։

Բողոքականաց վարդապետութիւնն չէ մտացա-ծին բանաստեղծութիւն, որպէս են Պուրանն Կորա-նայ, Մոհեն Արեի, զի որպէս և կամեցան որ ընդ-լայնեսցեն զնոյն, յաւելցէ, ամեցուցէ, համառօտեսցէ կամ կրճատեսցէ բառ մի և բանս խելոց. զամենայն զոր մտադրաւ ասացաք, որ, արդարև համաձայնել ձայնի և խնդրոց սուրբ Գրոց. զի ՚ի ձեռն իւր Աստուած հրամա-յէ, „Մի՛ յաւելուցուք ինչ ՚ի բանն, զոր ես պատ-ուիրեմ ձեզ. և մի՛ հատանիցէք ՚ի նմանէ։ Ամենայն բանի զոր ես պատուիրեմ քեզ այսօր՝ զգուշասցես առնելոյ. մի՛ յաւելուցուս ՚ի նա. և մի՛ հատանիցես ՚ի նմանէ. Բ. Օրին. Դ. 2. ԺԲ. 32։ Վկայեմ ես ամենայնի, որ լսեն զբանս մարգարէութեան գրոցս այս-մի, թէ որ յաւելցէ ՚ի սա, յաւելցէ Աստուած ՚ի վե-րայ նորա զհարուածս գրեալս ՚ի գիրս յայս։ Եւ եթէ որ պակասեցուցէ ՚ի բանից մարգարէութեան գրոցս այսմիկ, պակասեցուսցէ և հատցէ Աստուած զբա-ժին նորա ՚ի ծառոյն կենաց, և ՚ի քաղաքէն սրբոց՝ որ

դրեալ է 'ի գիրս յայս · Յայտ · իբ · 18, 19 · Տես և Գաղ · ա · 8 · 9 ·

Պատմութիւն պատուիրանազանցութեան նախահարցն յառաջ բերեալ յերրորդ գլուխն Ծննդոց ոչ յիշատակէ և ոչ զմի բառ յասացելոյս, թէ բանականութիւնն զանազան երկմտութիւնս զարթոյց 'ի մասին ճաշակելոյ զպտուղն արգելեալ, 'ի սրտին Եւայի խօսեցաւ զայս և զայն բանս · Եւ կամ Եւայ կարծիս տարաւ, թէ Աստուած խնայէ տալ նոցա զքաղցրահամ պտուղն 'ի վայելել · և որ ծիծաղելին է յաւէտ, թէ օձն 'ի ջիլ նորա (Եւայի) էր ·

35 · « Մարդուս հին պատմագրքի առաջին թերթը ապականած է մի սարսափելի յանցանքով · Ադամի որդիքը Կայէն և Հաբէլ վառվեցան բարկութենով միմեանց վերայ։ Առաջինը · · · խռովարար և թշնամական սրտով պատարագ բերաւ Աստուծոյն դաշտի պտուղներէն։ Եւ Հաբէլը աւելի կրտսերը, որ հանդարտ մի հովիւ էր, մեղմ և քաղցր բնութենով՝ պատարագ բերեց Աստուծոյն իր ոչխարների անդրանիկներէն · · · Հաբէլի բերած պատարագի ծուխը ուղիղ էր բարձրանում, որ այն ժամանակի դատողութեանը հետևելով՝ բարի ընդունելութեան նշան էր · · · Ինչ տեղ որ գտանվում էր, ամենայն տեղ մի զարմանալի բարբառ ձայն հարցնում էր նորան, Ո՞ւր է քո եղբայրը »
119 ·

զԱստուածաշունչ Գիրքն կոչէ հին պատմագիրք, որոյ առաջին թերթն ասէ ապականեալ է միով սարսափելի յանցանօք · Կայէն միայն նախանձեցաւ (և ոչ բարկացաւ) ընդ Հաբէլ, զի պատարագ նորա ընդունելի և հաճոյ եղև Աստուծոյ · և իւրն ոչ։ Եւ 'ի միջին

բանի զերկումն եւ կաշէ բարկութեամբ վառեալ, և զկնի մոռացեալ զբան իւր, ասէ՝ թէ Հաբէլ կրտսերն էր հօրն հանդարտութեամբ և ժառանգը բնութեամբ։ Օրինակելու թէև ծնող Հաբելեան պատարագին և բարձրանալ նորա յերկինս ընծայէ դատողութեան ժամանակին, և ոչ ճշմարիտ պատմութեան սուրբ Գրոց։ Եւ յիրքենէ համարձակի յաւելուլ, թէ "Կայեն՝ որ և զանդիր, ամենուրեք ձայն զաղանաբարբառ հարցանէր զնա, ո՞ր է եղբայր քո։ Տես և զԺԵ գլուխն Ղուրանոյ։

**36.** "Սեթայ . . . որդիք և թոռներ էին Ենովս, Ենոք, Մաթուսաղայ. սոքա շատ երկայնակեաց եղան երկրի վերայ, մանաւանդ թէ վերջինը՝ որ 969 տարի ապրեց". 119։

Ասին յերից նահապետաց Ենոք կենդանույն փոխեցաւ յԱստուծոյ յերկինս վասն հաճոյ լինելոյ իւրոյ նմա. Ծնն. Ե. 24. ուրեմն արդ խոկ ըստ գրոց կենդանի է նա։ Ենովք և Եղիա կան ծերացեալք՚ի դրախտին Եդեմական. Շարական։ Զորով զանց առնէ Մարգարեան, և ասէ՝ թէ Ենոք երկարակեաց եղև յերկրի վերայ ընդ Ենովսայ և այսու ցուցանէ, թէ զկնի մեռեալ է նա, որպէս և այլքն. ապա թէ ոչ իբրև երևելի գերբնական անցք պարտ էր որոշաբար ասել, թէ Ենոք կացեալ յերկրի զամս 365, փոխեցաւ յերկինս։

**37.** "Աստուած հրամայեց Նոյին մի մեծ նաւ պատրաստել, և մտանել նորա մէջ իւր ընտանիքով և ամենայն ցամաքային անասուններից երկու երկու հատ վեր առնուլ իւր հետ . . . . և երբ որ ինքը և իւրայինքը ապահովութիւն էին գտել այն նաւի (տապանի) մէջ, այնուհետև պատառվեցան աղբիւրները". 120։

Աշխատութիւն եւ գործածութիւն բառիս Նաւ. քաջ յայտնի էր նախնեաց մեր, որպէս է տեսանել յանհամար տեղիս սուրբ Գրոց եւ այլոց մատենից մերոց, բայց նոքա զյունական ձայնդ Կիբօտոս տապան թարգմանեցին, եւ ոչ նաւ, որ առ նոսա եւս Նաւ կամ Նաւէ հնչի. զի տապանն այն նման էր արկեղ, ձեղունաւոր, փակեալ եւ ամրացուցեալ յամենայն կողմանց. իսկ նաւն ոչ նոյնպէս։ Եթէ զտապանն Նոյի մարթ է նաւ անուանել, ապա եւ զտապանակն (որ երբեմն նոյն եւ երբեմն նուազական նորա) ուխտի, կոչեսցուք եւս Նաւ կամ Նաւակ ուխտի, եթէ այս ծիծաղական, ապա եւ այն։

Նոյ հրամանաւն Աստուծոյ եմուծ 'ի տապանն յամենայն սուրբ անասնոց եւ 'ի թռչնոց եօթն եօթն արու եւ էգ, եւ յամենայն անասնոց եւ 'ի թռչնոց, որք ոչ էին սուրբ, երկուս երկուս արու եւ էգ. Ծնն. Է. 2, 3. բուծանել զաւակ 'ի վերայ ամենայն երկրի. Եւ այս յայն սակս, զի զկնի հանգստեան ջրհեղեղին յելանել նոցա յերկիր, թէ սուրբ կենդանեացն առաւել լիցի, զի առաւել քան զանսուրբսն աճեսցին եւ բազմասցին 'ի վերայ երկրի. եւ զի անզոյգն (կենտն) յամենայն սուրբ կենդանեաց զոհ շնորհակալութեան մատուսցէ Տեառն Աստուծոյ 'ի Նոյէ. ,, Շինեաց՝ ասէ Մովսէս, Նոյ սեղան Աստուծոյ, եւ առ յամենայն անասնոց սրբոց եւ յամենայն թռչնոց սրբոց, եւ եհան ողջակէզ 'ի վերայ սեղանոյն, եւ հոտոտեցաւ Տէր Աստուած 'ի հոտ անուշից. Ծնն. Ը. 20։ Բայց աստ Վարդապետն մեր դնէ անորոշաբար, թէ ամենայն ցամաքային անասուններից երկու երկու հատ վեր առաւ, եւ թէ անասունքն այնոքիկ սուրբ էին, թէ անսուրբ, արու թէ էգ. եւ ո՞րպիսիք, չորքոտանիք, թէ օդա-

ցին Թռչունք , ոչինչ չկէ · միայն յաւելու ցինքենէ ղեառք ցամաքային :

Զարմանք , զի ինքն Սարդարեան Հակառակ բանից իւր՝ զոր ասէ յէջն 73 · Թէ ,, Աստուած էր ( է ) միշտ այն միասնութիւնը , որպէս Թէ կարելի էր ( է ) Աստուծուն փոխարինական ընծաներով , զոհերով ( մատաղներով ) շնորհակալ գտանելի ” , ակամայ կամօք հեռանելով Աստուածաշնչէն յէջ 121 ասէ · ,, Նոքա ( այսինքն Նախնիք ) իւրեանց սքանչելի փրկութեան համար շնորհակալութեան զոհ մատուցին Աստուծոյ ” : Թէ և զոհն զնէ եղական , որ ոչ մի հատ սուրբ կենդանի էր , այլ բազում ՚ի սուրբ անասնոց և ՚ի Թռչնոց :

38. ,, Նոյ այգի տնկեց և գինի պատրաստեց , բայց և զգաց նոյնպէս նորա չափազանց գործածութեան վնասակար հետևանքը , ՚ի որում արբեցաւ , և արհամարհանք տեսաւ իւր զաւակէն ” · 121 :

՚Ի սմին բանի գինի պատրաստեաց , զգաց նոյնպէս նորա չափազանց գործածութեան վնասակար հետևանքը , արհամարհանս տեսաւ իւր զաւակէն , բոլորովին աւելորդք են , յորոց և ոչ մի բառ գտանի ՚ի մերում Աստուածաշնչի · Ահա բնագիրն , ,, Սկսաւ Նոյ այր հողագործ զերկիր գործել և տնկեաց այգի · արբ ՚ի գինւոյն և արբեցաւ և մերկացաւ ՚ի տան իւրում : Եւ ետես Քամ հայր Քանանու զմերկութիւն հօր իւրոյ · և ել և պատմեաց երկոց եղբարց իւրոց արտաքոյ ” · Ծնն · Թ · 20 , 21 , 22 .

39. ” Սկսին կամեցին , որ մի մեծ դաշտավայրում մի քաղաք և մի շատ բարձր աշտարակ շինեն , որի ծայրը վերանալով մինչև երկինք , կարող էր ամենեցուն տեսանելի և ձեռնտու լինել շուտով մի տեղ հաւաքվելու , եթէ վտանգ հանդիպէր · · · Նոքա գաղափա-

ցին շինել քաղաքը, որ և այս անցքից ստացաւ անունս Բաբէլ,, այսինքն խառնակութիւն''. 121, 122:

Տեսցուք արդ, թէ քանի այս համաձայն է սուրբ Գրոց: Ահա բուն բանք նորա:

''Ի խաղալ նոցա յարևելից` գտին դաշտ մի յերկիրն Սենաար . . . Եւ ասեն, եկայք շինեսցուք մեզ քաղաք և աշտարակ, որոյ լինիցի գլուխն մինչև յերկինս. և արասցուք մեզ անուն յառաջ քան զցրուել 'ի վերայ երեսաց ամենայն երկրի: Դադարեցին 'ի շինելոյ զքաղաքն և զաշտարակն, և վասն այնորիկ կոչեցաւ անուն նորա խառնակութիւն. Ծնն. ժա. 1—9:

Յորս որպէս տեսանի, Մարդաբանն յաւելեալ է յինքենէ 'ի խելաց իւրոց [illegible], (այս է խորհուրդ արարքին) մի յոյժ բարձր . . . ձգեր արտաքնել և յետ-նորա-շինել քաղաք 'ի մի վայր հաւաքելոյ, եթէ վրանք ինչ պատա-հեր. որ այս անցքից ստացաւ անունն Բաբէլ.

40. ''Աբրահամ. Ծնն. գլ. ժա. Մարդիկ աստ-ուածային պատուհասները ու զգելով իւրեանց ընթաց-քը, և հրաժարելով իւրեանց նախահայրերի անկեղծ և անխարդախ վարքերից` ապրում էին երկար ժամանակ, օր քան զօր առաւել բարձրանալով և տարածուելով երկրի վե-րայ, և հաւատալով մի Ճշմարիտ Աստուած: Բայց փոքր առ փոքր խանգարեցաւ նոցա աստուածպաշտու-թիւնը, սկսեցին երկրպագութիւն տալ արեգակին, լուսնին և աստեղներին, բաց որում առաւել անկա-նում էին նոցա աչքի առաջ, այլև զանազան գազաններին, որ առաւելապէս նոցա օգտակար կամ վնասակար էին. այլ և այնպիսի մեռած գնացած մարդերին, որ գերա-զանց էին հանդիսացել իւրեանց արդիւնաւոր գործե-րովը, քաջ էին գտանուել պատերազմի մէջ, իմաստուն

խաղաղութեան ժամանակը։ Այս մարդերի պատկեր-ները շինելով քարից, փայտից և մետաղից, երկրպա-գում էին նոցա, զոհ էին բերում նոցա. և նոցա պատ-ուի համար կարգում էին դէսպէս պաշտամունք և ա-ղօթութիւնք։ Ահա այսպէս յառաջացաւ կռապաշտու-թիւնը. այսպէս նոյն մեան ժողովրդի մէջ մոլորական հասկացողութիւնք Աստուծոյ և աստուածային բաների մասին. որոնցով խաբում էին մարդիկ իւրեանց անձը, և անհաճոյ էին լինում Աստուծուն։ Բայց Աստուած չկամենալով թոյլ տալ, որ այս մոլորութիւնք և սնա-պաշտութիւնք առաւել տարածվին, ընտրեց Սեմի ցեղից Աբրահամը''. 122.

Այս ձիգ պատմութիւն իւրովք մանր և նորանոր պարունակութեամբք 'ի գիրս Ծննդոց չ'են բովանդակին. այլ նշանակեալ մետասաներորդ գլուխն Ծննդոց է պատ-մութիւն աշխարհակալութեան, խառնակութեան լեզ-ուաց և ազգաբանութիւն Սեմայ մինչև ցեւ Թարայի հանդերձ Աբրահամու և Նաքովրայ որդւովք իւրովք և թոռամբն Ղովտաւ յերկրէն Քանանացւոց և բը-նակին 'ի Խառան։

41. ,, Աշխարհ և անասուն շատ լինելով''. 123.

Աշխարհն ևս է անասուն, ուստի առանձին դնել չ'է հայերէն. յայժմ պարզ է ասել հօտք խաշանց և անդեայք կովուց և եզանց ընդ այլոց ընտանի գրաս-տուց։

42. ,, Աբրահամը դէպ 'ի Սոդոմ յաղթուած թագաւորը շատ վեհանձնութիւն ցոյց տուեց, անրա-պետաւ կողոպտածներից այնքան միայն յետ պահելով իւր մօտ, ինչքան հարկաւոր էր՝ այն տղամարդերը վար-ձատրելու համար, որ նորա հետ պատերազմ էին գը-

նայել"․ 124։

Աբրահամ յաղթեաց Քոդողոգոմորայ արքային Էլամայ և դարձուցեալ զամենայն աւարն Սոդոմացւոց և զՂովտ զեղբայր իւր և զամենայն ստացուածս նորա, դարձոյց և զկանայս և զժողովուրդն․ և ինքնին չեառ ինչ և ոչ ձեռնամուխ եղև յինչ, այլ մանկունն (պատերազմող արքն) և Անան, Էսքող և Մամբրէ գըլխաւորք նոցա առին իւրեանց մասն և բաժին յաւարէ անտի ըստ կամաց Աբրահամու․ այս սուտ է և սխալ ասելն թէ, „Աբրահամ վերադարձաւ հալածողներից յետ պահեց իւր մօտ։ Տիրապետել նշանակէ տիրել ընչից օտարի, այլ Աբրահամ ոչ տիրապետեաց (տիրեաց, սեփականեաց) այլ դարձոյց զայնս, զորս յափշտակեալ և աւարեալ էին Թշնամիք ՚ի Սոդոմացւոց․ տես Ծննդ․ ԺԴ․ 11․ 12․ 16։ Այնպէս կալուածն ոչ երբէք մտանէ ՚ի մեզ փոխանակ աւարի․ կալուածովք իմանամք զանշարժ կայս, որպիսի են անդք, գիւղք, քաղաքք, տունք, այգիք, գործարանք, կրպակք եւայլն։ Իսկ Աբրահամեան դարձուցեալ աւարքն էին շարժականք՝ մարդիկ, անասունք, զէնք, արծաթ, ոսկի, զգեստք, եւայլն։

**43**․ „Սոդոմացւոց պղծագործութիւնքը մինչև այն աստիճան զօրացել էին, որ Աստուած մտքումը դրեց կործանել այն քաղաքը, որ այդքան անպատուել էր իւր պատուիրանքը։ Բայց այս աստուածային խորհուրդը դեռ չըկատարուած երեք տղամարդ հանդիպեցան Աբրահամի մօտ, որ պատուով ընդունեց և հիւրասիրեց նորանց․ Սորանցից տեղեկացաւ Աբրահամը, որ Աստուած ուղարկել է նորանց Սոդոմ և Գոմոր քաղաքները աւերելու համար․ և խնդրեց՝ որ խնայեն նոցա․ ․ ․ Գ ամբ հիւրասիրելով ընկալաւ Աստուծոյ

հրեշտակքն, իմացաւ՝ որ Աբրահամի բարեխօսութիւնն 'ի գլուխ չ'է ելել". 124։

Զքանիս զայս մեծաւ զանազանութեամբ ընթեռնումք 'ի ժԸ գլ. Ծննդոց. ուր 'ի համարն 20 առի, թէ Աստուած խօսելով ընդ Աբրահամու՝ ասաց. "Աղաղակ Սոդոմայեցւոց և Գոմորայեցւոց յաճախեաց, և մեղք նոցա մեծացան յոյժ. արդ իջեալ տեսից, եթէ ըստ աղաղակին՝ որ յիս հասանէ՝ վճարիցե՞ն, ապա թէ ոչ՝ զի գիտացից։ Այն յերից անձանցն կամ 'ի հրեշտակացն էր Աստուած, որպէս երեւի 'ի համարն 1, 3, 9, 10, 13, 14, 17, 18—ց33։ Բայց Վարդապետն ՙՆուղարեանց հակառակ այսմ մի քաղաք միայն դնէ, որ է Սոդոմ, և զԱստուծոյ ինչ ոչ յիշատակէ, թուի թէ Գերմանացւոց Աստուածաշունչն այսպէս ունի, որոյ ըզհետ ընթանայ և ինքն։

44. "Ծերացեալ էր Իսահակը, կամեցաւ իւր տունը կարգի դնել. և 'ի հարկէ հայրը մտօք ունէր առաւել ընտիր բաժինը իւր սիրելի Եսաւին հասուցանել։ Մայրը՝ որ աւելի էր սիրում Յակոբին՝ աշխատեց խափանել այս բանը, բայց ընտրեց սորա համար մի չգովելի ճանապարհ, նա խրատ տուեց Յակոբին, որ Եսաւի պէս կերպարանափոխ լինի, և դնաց կուրացած հօր առաջև։ Իսահակը կարծելով՝ թէ օրհնում է Եսաւին, աւելի առատ և բարի շնորհներ խնդրեց Աստուծոյ Յակոբի համար". 125։

Աւաղ են բանքս սուտ և ինքնատեղծ. զի ծերացեալ Իսահակայ և պակասեալ 'ի տեսութենէ աչաց՝ զգայր զմօտալուտ լինել վախճանի իւրոյ, ուստի կամեցաւ կանխել յառաջ քան զմահ իւր՝ օրհնել զսիրելի անդրանիկն իւր որդի զԵսաւ. յայս սակս հրամայեաց

նմա որսալ որս և բերել ինքեան 'ի կերակուր՝ զոր սի-
րէր. Իբրեւ լուաւ այսմ Ռեբեկա հնարեցաւ մայրե-
նի սիրով և գթով, զի զօրհնութիւնն զայն՝ սիրեցեալն
իւր Յակոբ առցէ, և ոչ Եսաւ. և հնարքն էր այս,
յետ պատրաստելոյ զկերակուրն յերկուց փափուկ և ըն-
տիր ուլուց՝ որպէս սիրէր Իսահակ այր նորա, զգեցոյց
Յակոբայ զպատմուճանն Եսաւայ, որ կայր
առ նմա 'ի տան, և զուլենիսն այծից 'ի բազուկս նորա
և 'ի վերայ մերկ պարանոցի նորա, որով խաբեցաւ կու-
րացեալ ծերն, և զՅակոբ Եսաւ համարելով՝ օրհ-
նեաց զնա փոխանակ երէց եղբօրն. Տե՛ս Ծնն. իէ գլ:
'ի 1 համարոյ ց46. Իսկ ո՞ր ատ դնել զտուն 'ի կար-
գի, կամ բաժանել զինչս իւր 'ի մէջ որդւոց իւրոց,
և զատուել ընդիր մասն բաժնին տալ երիցուն. և զի՞նչ
բառդ կերպարանափոխ. մի թէ Յակոբ դիմա՞կ եդ 'ի
վերայ երեսաց իւրոց ըստ նմանութեան Եսաւայ, և
այնու կերպարանափոխութեամբ կարծեցոյց զինքն Եսաւ,
և սխալեցուցեալ խաբեաց զհայր իւր. և էր սակս փո-
խել զգեստն, մինչ հայր նորա Իսահակ կուրացեալ ա-
չօք՝ ոչ տեսանէր ինչ, բայց յականջօք լսելոյն և զձայնն
ճանաչելոյն. զի ասաց ,, Ձայնդ ձայն Յակոբայ, և
ձեռքդ ձեռք Եսաւայ: Իսկ Յակոբ ոչ ինքնին ըստ
խրատու մօր իւրոյ ծպտեցաւ կամ այլակերպեցաւ ըզ-
գեստուք եղբօրն և ուլենեօքն, այլ մայրն զգեցոյց նմա
զայնս: Ոճնահնար են բանքս և անհամաձայն սուրբ
Գրոց, թէ ” Իսահակ ունէր առատ և բարի շնորհ-
ներ խնդրեց Աստուծոյ Յակոբի համար ”. զի սուրբ
Գիրն ասէ, օրհնեաց զնա, աղաչեաց կամ մաղթեաց
յԱստուծոյ, զի տացէ նմա զցօղ երկնից, զպարարտութիւն
երկրի, զշատ ցորեան և զգինի. զի ծառայեսցեն նմա

աղգը, երկիրպաղցեն նման իշխանք, եղեալ տէր եղբօր իւ-
րում. և այլն և այլն: Եւ այս ամենայն են աղօթք և
բարեպաշտութիւնք, և ոչ շնորհք՝ որ զնոցանէն բնա-
ւոր և ստացական իրս նշանակէ. իսկ օրհնութիւնդ է
հայցուած յԱստուծոյ վասն որդւոցն իւրոց և մարմնա-
ւոր ճոխութեանց:

45. ,,Աստուծոյ հրեշտակները մի սանդուղք կա-
պած երկնքից մինչև երկիր". 126:

Յակոբ նահապետն 'ի գնալն իւր 'ի Խառան որ
'ի Միջագետս՝ 'ի ճանապարհին ,, ետես տեսիլ. և ա-
հա սանդուղք հաստատեալ յերկրի. որոյ գլուխ իւր հա-
սանէր մինչև յերկինս. և հրեշտակք Աստուծոյ ելանէին
և իջանէին ընդ նա: Ծնն. իը. 12: Ուր յայտնապէս
երևի, թէ սանդուղքն չէր կապած Աստուծոյ հրեշ-
տակներից, այլ հաստատեալ էր. և հրեշտակք Աստու-
ծոյ միայն ելանէին և իջանէին ընդ նա:

46. ,,Յակոբը իւր պատերազմում Աստուծոյ հետ": 127

Պատերազմ նշանակէ կռուել զինուք զօրաց բազ-
մաց ընդ թշնամեաց. բայց ընդ Յակոբայ ,, Մար-
տեաւ առ Փերն՝ այր մի. Ծնն. լբ. 24: Որով ի-
մացեալ լինի ընդդիմամարտութիւն, անդէն մենամարտու-
թիւն կոչի 'ի մէջ երկուց, զոր աշխարհօրէն ասեմք
կռիւ դուծնել, և ոչ պատերազմ: Դաւիթ պարսաքարե-
սայն զԳողիաթ, և Յուդիթ եհատ զգլուխ Հողոփեռ-
նեայ, բայց և ոչ միայն գործ առն պատերազմ: Նոյն-
պէս և Հռիփսիմէ մենամարտեաւ յաղթեաց Տրդատայ,
և 'ի պատմութեան պատերազմ ոչ կոչի պայքարել նորա
Հռիփսիմեայն:

47. ,,Յակոբի 12 որդիների մէջ ամենի փոքր
Յովսէփ էր . . . նորա մէկը կարգեցին, որ սպանեն

Յովսէփը. Նորա պատմուճանը շաղախած այծի արիւ-նով բերելոյն Յակոբին և Հաւատացրելոյն Հօրը, բայց Պետափրեսի կինը արատաւոր սիրով վառվեցաւ Յով-սէփի վերայ: Բանտապետը Հաւատ ստացաւ դէպ՛ի Յովսէփը: Այս երկուսի տեսած երազները պատմեց Յովսէփը .... Յովսէփի երազահանութիւնը կատար-ւեցաւ ... Փարաւոնը Հրամայեց յառաջ բերել Յով-սէփը ... մի այնպիսի մեկնութիւն տուեց երազին, որ շատ խորհրդաւոր էր այն Ժի Համար. ... մերկ և զուրկ փակի մէջ թողած էին: Յովսէփը չբարկացաւ իւր սրտի զգացմունքը տարաւ: Փարաւոն Հրաման տալեց Յովսէ-փին, որ սայլ և յարմարութիւն պատրաստէ իւր ըն-տանիքի դարձի և անդորրութեան Համար .. Յովսէ-փը կամի ասէց, որ նորա ոսկերքը փոխադրուին իւրեանց Հետ, երբ որ Աստուած Իսրայելացւոց ազգին վերադարձ կարգադրէ դէպ ի իւրեանց Հայրենի աշխարհը". 128. 129. 130:

Ժամանակի գրաւոր գաղափարի Համեմատութեան Է Աստ-ուածաշնչին մեր՝ բարբառին տարբեր և Հակառակ գը-րուածներ. զի Յակոբեայ սիրելի փոքր որդին չէր Յովսէփ, այլ Բենիամին ծնեալ ՚ի Ռաքելայ. Ծննդ. լե. 16. ց18. Եղբարքն Յովսէփայ խորհուրդ չար ՚ի մէջ առին սպանանել զՅովսէփ, և ոչ թէ վաճառել կամեցին (որ դա-տարանաց է գործ, և ոչ խոշտանգած տարանց, որպիսիք էին եղբարքն Յովսէփայ). լէ. 18: Նոքա զենին ուլ այծեաց, և ոչ գառն, թաթաւեցին զպատմուճան նորա յարեան և տարեալ առ Հայրն իւրեանց. լէ. 31. 32. և ոչ թէ շաղախած այծի արիւնով բերին Յակոբին: Շա-ղախած խառնած նշանակէ, որպէս ջուր ընդ Հողոյ, իսկ թաթաւեալ թաթխած: Առաքելոյն ՚ի ձեռն տարաք

և պատուիրեցին 'ի բերանոյ իւրեանց պատմել Հօր իւր-
եանց զգաղափարականութիւն որդւոյն և զգեստ արիւնա-
թաթաւ ծաղկեայ պատմուճանին։ Գաւազանն օձոյն նր-
շանակէ զպատկառոր սիրով, զոր է ատել, մաշել, կամ
մերձենալ, կամ պատուոր սիրով · զորմէ ասէ 'ի Գն-
մարգարէն 'ի բանն Ա.բաւ։ Աստուած գոլով ընդ Յով-
սեփայ արկ զնովաւ ողորմութիւն, և ետ նմա շնորհս
առաջի բանտապետին, լթ. 21։ Եւ ոչ թէ [illegible]
[illegible] Յովսէփ. որ է առ նորահնար
խորթ 'ի լեզուէս Հայոց։ Յովսէփ մեկնեաց զերազս
տակառապետին և մատակարարին. խ. 12. 16. 23. խա.
12. 13. և ոչ թէ պարծեցաւ, սպասել և մեկնել չ'էն
նախանշան. Փարաւոնի երազն մեկնեալ 'ի Յովսեփայ
օգտակար, շահաւէտ և հարկաւոր էր Տէրն Եգիպտոսի,
և ոչ խորհրդաւոր, զի վասն եօթնամեան առատաց ա-
մաւն զգուշացուցանէր զնոսա կանխաւ օգուտ քաղել և
նախապատրաստ լինել յամբարս պաշարոց յառաջի-
կայ եօթնամեան լիութենէն անդաստանաց. խա. 26.
35. 36։ Յովսէփ չկարաց ժոյժ ունել, զսպել, 'ի բաց
ունել զզգայմունս սրտի իւրոյ, և ոչ թէ [illegible] խե.
1։ Զգիտեմ, որ լեզուի առ է, և զի՞նչ նշանակէ ա-
սելն պատրաստել յարձակումն [illegible] [illegible] հաճար,
զոր ես չկարացի գտանել 'ի գլուխն խե. Յովսէփ բստ
հրամանի արքային Փարաւոնի ետ նոցա սայլս, պաշար
'ի ճանապարհի, տասն իշոյ բեռինս յամենայն բարու-
թեանց Եգիպտոսի, տասն ջորի նպարակաւոր, կերա-
կուր և հանդերձս, զի ածցեն յԵգիպտոս զՅակոբ
զհայրն Յովսեփայ, և զամենայն ստացուածս նորա հան-
դերձ մանկամբք, կանամբք, խե. 17—23։ Եւ ո՞ր սա
հաս կամ նշան հետոց բաւերդ յարձակումն և պատրաս-

տէր: Պարզ ասի, եթէ գնացեալ որք 'ի բուն երկրէ Լուծմէ այլուր, գաղթականացն 'ի նոյն: Յակոբ և տուն նորա չէին եկեալ յԵգիպտոսէ, և ոչ էին ընտանիք նորա, որք ունէին զայլ և ընակութիւն յերկրին Ռամեսսու՝ որ յԵգիպտոս, եղանելով յերկրէն Քանանացւոց: Յովսէփ 'ի ժամանակին իւրում երդմնեցոյց զեղբարս իւր հանել զոսկերս իւր յԵգիպտոսէ, և ասաց ընդ ինքեանս, եթէ այցելութեամբ այց արասցէ ձեզ Աստուած հանել յերկրէս յայսմանէ յերկիրն՝ զոր երդուաւ Աստուած մեր հարցն ձերոց Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ. Ծնն. Ծ. 23. 24. Ել. ԺԳ. 19: Աս-մք այս կոչէ տանել, կամ զերդումն առաջնորդել զեզ 'ի երկրէն հայրենեաց աշխարհն: Սերովբէն նշանակէ, թէ միանգամ առաջնորդեալ է, և արդ կրկին առաջնորդէ. բայց ընդ-հակառակն 'ի նորոյ ունէր Աստուած առաջնորդել յեր-կիրն՝ ոչ հայրենի, այլ աւետեաց, մինչ է ուխտեալ, խոստացեալ յառաջագոյն Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ, որ էր [illegible] յառաջագոյն և սեփա-կան կալուած 29 թագաւորաց. Յես. ԺԲ. 1—24:

48. „Ընկեց մի պղնձեայ տապանակ (զամբիւղ սնտուկ)". 132:

Գոմէ, կնիւն (Տարաւ սող) չէ եղէգն, զոր Թար-գմբրէն պարզաբանէ զամբիւղ, այլ որդ ինչ եղեգան, յոր-մէ հիւսեն, զխոխութ, զափառս. և այլն:

49. „Մովսէս . . . Ահարոնի հետ միասին հանդիպեց Փարաւոնին և իւր եղբօր [illegible] խոստութիւնը [illegible] շինելով իւր համար՝ տաշեց". 133:

Մովսէս ընդ Ահարոնի եմուտ առ Փարաւոն յար-քունիս նորա, և ոչ հանդիպեցաւ ընդ նմա արեւ 'ի Ճանապարհին. [illegible], [illegible] աճ են զայլ այլնդգիտակնք, այլ մեր Աստուածաշունչ

տան, թէ Մովսէս գոլով նրբաձայն և ծանրալեզու՝ ոչ բաւական զանձն համարէր խօսել ընդ Փարաւոնի. վասն որոյ Աստուած եւս նմա օգնական զեղբայրն նորա զԱհարօն, խոստանալով բանալ զբերան նորա և զբերան եղբօր նորա Ահարօնի և խելամուտ առնել զերկոսին յամենայնի, զի խօսելով խօսեսցին զամենայն, զոր միանգամ իւրն հրամայեսցէ նոցա. Ել. դ. 10—15.

50. „ Չորս հարիւր տարւոյ յետոյ Իսրայէլացիք աճել էին մինչև 600,000 զինուորական արամբք". 131.

Իսրայէլացիք յետ 430 ամաց աճեցեալ և բազմացեալ էին իբր 600,000, և ոչ յետ 400. տես. Ելից. ժբ. 40. 41.

51. „ Երիքով և միւս շատ քաղաքներն տիրապետեցին նոքա և 31 փոքրիկ թագաւորներն և իշխաններն յաղթեց Յեսուն ... Նա սահմանեց թլփատութիւնը ընդհանրապէս ... տիրապետած երկիրը բաժանեց Իսրայէլացւոց 12 ցեղի վերայ". 137.

Յեսու առնու Երիքովն և այլ շատ քաղաքս, և ոչ թէ 'ի մէջ Երիքովի էառ զբաղում քաղաքս. զի Երիքով ներգոյական հոլովէ, և հարկաւ նշանակէ 'ի մէջ Երիքովի. և յաղթեաց նա 29 թագաւորաց և ոչ 31. Տես Յես. ժբ. 'ի 1 այ ց24. Թլփատութիւնն ոչ Յեսու սահմանեաց, այլ Աբրահամ հրամանաւն Աստուծոյ. Ծնն. ժէ. 11. 14. 23. 27. որպէս յիշէ և ինքն վարդապետն յէջ 123. Իսկ զորս Յեսու թլփատեաց՝ էին ամենքեան նոքա, որք 'ի քառասնամեայ պանդխտութեան իւրեանց յանապատին՝ չև էին թլփատեալք յորէ ելից իւրեանց յԵգիպտոսէ. տես Յեսուայ գլուխն Ե:

52. „Յեսուն դեռ եւ չմեռած ներքեւ դրեց իր իշխանութիւնը, բայց Իսրայելացւոց սրտին կապեց այս խօսքերը”. 137:

Յեսու ծերացեալ եւ անցեալ զաւուրբք առաջի ա-չաց տեսանելով զմահ իւր կոչեաց զամենայն որդիսն Իսրայէլի առ հասարակ, եւ յիշեցուցանելով նոցա զբա-րիսն զոր արար նոցա Աստուած, եւ պատուիրելով 'ի բաց կալ 'ի սնոտի օտար չաստուածոց եւ պաշտել զճշմ-արիտն Աստուած, հանգեաւ. Յեսու. Իգ. 2. 16: Իդ. 1--30. 31: Իսկ յառաջագոյն ոչ ուրեք ասի, թէ Յեսու-նախ քան զմահ իւր 'ի բաց եդ զիշխանութիւնն: „Ներ-քեւ դրեց իշխանութիւնը, սրտին կապեց այս խօսքերը”, չեն հա-յերէն, այլ դարձք օտարաց:

53. „Ուխտի տապանակը ակացիա ծառից շինած մի արկղ էր, եւ որոյ մէջ պահվում էին օրէնքի տախ-տակքը”. 'ի ծանօթութեան. 142:

Տապանակն ուխտին արար Բեսելիէլ յանփուտ փայտից, եւ ոչ յիշէ անգամ զինչ փայտ լինելն. իսկ ակա-ցիայն չէ անփուտ, եւ ո՛չ եւս կայ, եւ ո՞ր է այժմ այն, զի գիտասցէ որ, թէ ակացիա էր այն կամ այլ փայտ: 'Ի տապանակին պահեալ լինէին ոչ միայն տա-նաքանեայ տախտակքն օրինաց, այլ եւ սափորն ոսկի լի մանանայիւ, բուրվառն ոսկի, գաւազանն Ահարոնի որ ծաղկեցաւ. Ելից. ԼԷ. 1. ԺԶ. 33. Եբր. Թ. 4. Թուոց. ԺԷ. 8:

54. „Յեփթայէ տեսաւ իր դուստրը . . . աղ-ջիկը ելը խրախոյս տալոյ յաղթեկեալ հօրը, որ կա-տարէ իր ուխտը, եւ համբերութեամբ թոյլ տալոյ որ զոհէն իրեան . . . Յեփթայէ բաժանեց իր դուստրը. Եթէ ուխտած լինէր աւելի կատարեալ գիտութիւն կը-

րօնի մասին՝ ակնարկ էր, որ խնդրայր, թէ մարգարէութիւնք արգելեալ է Աստուծոյ". 140:

Տեսեալ Յեփթայեայ զդուստր իւր պատահեալ զհանդերձն և վայելուչ զանձն. զի ուխտեալ զոհել զնա Աստուծոյ, և ոչ կարէր ժխտել: Լացեալ զայն զբուուերն՝ ասաց, արա ինձ զբանս զայս, թող միայն զամիս երկուս շրջել 'ի լերինս և լալ զկուսութիւն իմ 'ի վերայ լերանց. Դատ. ժա. 34—40:

Յառաքինութիւն Յեփթայեայ, խրախուսել զբաուերն զհայրն և համբերութեամբ մատչել 'ի զոհ՝ են յաւերժածք: Եթէ Յեփթայէ ըստ Աբրահամու օրինակին և սաստից պատահեալ զհանդերձն և վայելչ զանձն կատարեալ հաւատով ձեռն արկեալ էր զոհել զդուստրն, ապաքէն և ըստ Աբրահամու արգելեալ լինէր յԱստուծոյ, բայց զի Յեփթայէ յայժմ թերի զատ, և Աստուած թոյլ ետ շաղախել արեամբ զաւեր խորոյ: Եւ զի առանց Աստուծոյ ոչ գործի ինչ, չէ կարելի ասել, թէ Յեփթայէ չունէր զկատարեալ զհաւատութիւն կրօնի, որ առաջի աչաց ունէր զօրինակ Աբրահամեան արդարութեան:

55. „ Դաղիլա կինն Սամփսոնի զհեր մազերն 'ի բաց փերեալ Բռ-լայրեալ էր նորա ջերի զօրութիւնը. սանդ ուր 'ի վերայ կայր 3000 մարդ՝ կործանեցաւ խուցն. և նորա հետ միասին անհամար մարդիկ սպանանեցան". 141:

Դաղիլա սպանեալ ննջեցուցեալ զՍամփսոն 'ի մէջ ծնկանց իւրոց՝ կոչեաց զփղշտացիս և 'ի ձեռն նորա եղերծ զեւթանեսին զխոպոս գլխոյ նորա, և ոչ ինքնին քերել, և սկսաւ թօշնել և մեկնեցաւ 'ի նմանէ զօրութիւն: Տունն զոր կործանեաց Սամփսոն, և որ մեռաւ ինքն և մեռոյց առաւել քան զոր 'ի կենաս իւր.

լի էր արամբք և կանամբք, և անդ ամենայն նախա-
րարք այլազգեացն, և 'ի տանիսն իբրև երեք հազարք,
արք և կանայք՝ որ տեսանէին զխաղն Սամփսոնի. Դատ.
ժզ. 19, 27. 30: Բերել զատախտակ, զկաշի, զգեստն,
ըմպանեալ կամ, զկօշիկս, զկայտա և այլն, առի. բայց
փոխանակ ստիպելոյ հերաց ոչ վարի բնու. ջիղերի զօրու-
թիւնը ոչ թուլացած էր յառաջ, այլ նոյնժամայն թու-
լացաւ առ Գ.իրն, և հեռացաւ 'ի նմանէ աստուածա-
տուր ոյժն: Ծնէ՛ք իւր ունկնդր, և 'ի բնագրին խօսք
ոչ գտանի:

56. „ Սամուէլ սկսած մանկութենէն սպասա-
ւորէր ուխտի տապանակին մօտ. նորա երկիւղած ծը-
նողքը Եղկանա և Աննա նորան երեք տարեկան յանձ-
նել էին... Հեղի քահանային վերատեսչութեան". 142:

Սամուէլ որդի գոլով ուխտի և անդրանիկ ծնողաց
իւրոց ըստ օրինացն Մովսէսի և ըստ ուխտիցն Աննայի
Տեառն զօրութեանց, „ թէ տացես ինձ զաւակ արու,
տաց զնա նուէր առաջի քո մինչև յօր մահուան նո-
րին" այնպէս և արար. զի ծնեալ և մնացեալ զնա, և
տարեալ ընդ ինքեան, եդ 'ի Սելով 'ի տան Տեառն. և ետ
զնա փոխ Տեառն զամենայն աւուրս՝ ուչափ և կեցցէ.
Ա. Թագ. Ա. 11. 24—28: Իսկ որ ասէ յիշատակէ
տապանակի ուխտին, և սպասաւորել նմա Սամուէլի 'ի
մանկութեան, և կամ յանձնել ծնողացն զմանուկն Սա-
մուէլ տեսչութեան քահանային Հեղեայ:

57. „ Սամուէլ հրամարեցաւ իւր դատաւորա-
կան պաշտօնէն. ներկայացրեց ժողովրդեան իւր խնդրած
թագաւորը, որ մի գլխաչափ բարձր էր, քան թէ միւ-
սները". 143:

Թէ Սամուէլ 'ի ներկայացուցանել իւրում ժո-

Պսլըդոյ զնորընծայն օծեալ թագաւոր նորա զՍաւուղ՝ խոկոյն 'ի դատաւորական հրաժարեալ էջէ պաշտամանէ, չէ՞ք 'ի գիրս առաջին Թագաւորութեց վն այդր և ոչ բառ մի· Սաւուղ ոչ գլխով չափ՝ այլ ուսովք կամ Թիկամբք չափ բարձր և 'ի վեր էր քան զա՛մ ժողովուրդն Հրէից'', Ա· Թագ· Թ·2·Ժ· 23· Իսկ ո՛վ չգիտէ, Թէ գլուխ և ուսք կամ Թիկունք չեն համանշանակ, և է մէջ բարձրու-Թեան կամ ցածուԹեան նոցա գոյ գրեա Թէ զանազանու-Թիւն Թզով չափ·

58,,ՄանկուԹենից սովորած՝ չափահասակ կատարած''·144·

“Նորահանդէս նորահայ լեզուի նորաչափ ոտանաւոր չափագրողին միայն հասկանալի·

59· ,, Քո հաստատարմուԹիւնք և ջերմեռանդու-Թիւնք պաշտօնից մէջ Թող ունէ աւելի երկար, քան Թէ սկզբի ժամանակումն''· 146·

Ահա վարդապետութ նորայնոր, որ ուսուցանէ ունել զհաստատարմութե և զջերմեռանդութե 'ի ծառայութե 'ի սկզբան կարճատե և վաղանցիկ, և զկնի սովորական և յերկարաձիգ· և որպէս բարոյական այնչափ ջինուած եղեւ հաստատուն և ան-դրդուելի, որոյ հիմն է խարխուլ, անստոյգն և կարճատե·

60· '' ԵօԹը տարի և վեց ամիս Թագաւորեց Դաւ-իԹը Քեբրոն աշխարհումը Յուդայի ցեղի վերայ միայն, ապա ընդունեցին նորա իշխանուԹիւնը և միւս տասն ցե-ղերը''. 149·

Այլ ԴաւիԹ օծաւ նախ 'ի Քեբրոն 'ի վերայ մի-ոյ ցեղի այնէ Յուդայի· իսկ ՅեբոսԹէ որդի Սաւուղայ հակառակ ԴաւԹի 'ի վերայ մնացեալ ցեղից Իսրայէլի· որոյ սպանուԹեան զկնի 'ի Ռեքաբայ և 'ի Բաանայ, օծաւ ապա ԴաւիԹ և Թագաւորեաց 'ի վերայ մնաց-եալ ցեղից ևս, այն է 'ի վերայ համօրէն Իսրայէլի,

և ոչ 'ի վերայ տասն ցեղեցն միայն. տես Ը. Թագ. Ժ. 4, 8, 9. Ժ, 7. Ե, 3, 4.

**61.** "Սատարադրութեանք ուսեալ էր Դաւիթ համբերել, բայց բարգաւաճութեան մէջ չկարողացաւ իւր անձը չափաւորել". 151.

Օրապարտութիւն է ասել զԴաւթէ, թէ 'ի յաջողուածս չկարէր չափաւորել զանձն։ Յիրաւի իբր մարդ մեղանչէր նա, բայց և իբրև ծայրագոյն երկիւղած Աստուծոյ փութով զղջայր և ապաշխարէր 'ի վերայ գործոց իւրոց չարաց. Նորա է ասացեալ, ,,Զանօրէնութիւնս իմ ես ինքնին գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ. Աշխատեցայ ես 'ի հեծութեան իմում, լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի". և այլ այսպիսի մեղայական և ապաշխարանաց բանք յոլով 'ի Սաղմոսս նորա, զորս ոչ կամիմ 'ի մէջ բերել աստ յանուանէ վասն յայտնի գոլոյն ամենեցուն, և չտալ ումեք ձիր և 'ի զուր ձանձրոյթ.

**62.** ,,Իմ Հայրս խրատել է ձեզ գանիւ (ծեծելով), բայց ես կխրատեմ ձեզ խարազանով.,, 154.

Ըստ բուն բան Ռոբովամայ առ ժողովուրդն Իսրայէլի ,,Հայր իմ ծանրացոյց զանուր ձեր, և ես յաւելից յանուր ձեր. Հայր իմ խրատէր զձեզ գանիւք (ծեծով, և ոչ ծեծելով, զոր առեմք գանելով), և ես խրատեցից զձեզ քըքովք. Գ. Թագ. ԺԲ. 14.

Քուք նշանակէ փշալից ձողկէչ կամ 'ի փշոց կազմեալ գաւազան, գործի պատժելոյ զյանցաւորս, որոյ փոխանակ Նազարեանցն դնէ խարազան, բայց խարազան է մտրակ, մարկէչ կազմեալ 'ի չուանէ կամ 'ի փոկոյ. (զոր աշխարհօրէն ասեմք, ղամչի, մաթրախ, լախտ).

63. „Եղիա մարգարէն ամենայն կերպով ջանացեր գտանելու, որ հասկացնէ Իսրայէլին, թէ յիմարութիւն էր իր յոյսը դնել կռքերի պատկերների վերայ, և մարդոյ ձեռով շինած սուտ աստուածների պաշտօն մատուցանել.... Եւ այսպէս սահմանադրեցին, որ Աստուածը կը-րակի մէջից պատասխան կտայ, նորան ևս պիտի էր պաշտել որպէս ճշմարիտ Աստուած,,. 156.
Աստուածաշունչ մեր ոչ այսպէս խօսի, նա պատմէ. թէ Տեսեալ Իսրայէլ զԵղիա՝ եհարց, եթէ դու իցես խանգարիչն Իսրայէլի. պատասխանեաց Եղիա, Ես ոչ խանգարեմ զԻսրայէլ, այլ դու և տուն հօր քո՝ ՚ի թողուլ ձեր զՏէր Աստուած ձեր և երթալ զհետ Բահաղիմաց.... Եւ եղիցի Աստուած, որ լուիցէ հրով, նա է Աստուած. Գ. Թագ. ԺԸ. 18. 24.
Եղիա փախչէր և թաքչէր յԻսրայէլ ՚ի լերինս և ՚ի հեղեղատս, տեսեալ միանգամ՝ թէ բանք իւր ոչ միայն չօգնեն ՚ի սիրտ կռամոլ և ամբարիշտ թագաւորին և թագուհւոյն, այլ և հետամուտ են կորուսանել զնա, որպէս յայտնի երևի ՚ի գանգատանաց նորա առ Աստուած. „Զսեղանս քո կործանեցին, և զմարգարէս քո կոտորեցին սրով. Եւ միայն մնացեալ եմ, և խնդրեն զանձն իմ առնուլ զնա. Գ. Թագ. ԺԹ. 10. Ապա յանձնէ վերադիր լինել Նաղաշեանցն ՚ի բանս սուրբ Գրոց. „Թէ Եղիա ամենայն կերպով ջանացեր գտու խելամուտ առնել զԻսրայէլ, թէ յիմարութիւն յուսալն ՚ի պատկերս կռոց և ձեռագործ չաստուածոց մատնել պաշտօն, և այլն.

64. „Օգոստոս Հռոմայեցւոց կայսրը թագաւոր նշանակեց մի բուն հրէայ Հերովդէս անունով,,. 168.
՚Ի պատմութիւնս սուրբ Գրոց չէ յայտնի, թէ

Հերովդէս ազգաւ Հրեայ լեալ եղեւ, և անհաւատալի և անընդունելի իսկ է հրէութիւն նորա, զի ժողովելն նր̄ զա̄մ քահանայապետս և զդպիրս ժողովրդեան, և հարցանէր ՚ի նոցանէ, թէ ու՛ր ծնանիցի Քս̄. Մատ. Բ. 4. յայտնապէս ցուցանէ, թէ չ՛էր նա ազգաւ Հրեայ, ապա թէ ոչ անշուշտ իբրև այր թագաւոր գիտուն և տեղեակ հայրենի լեզուի և կրօնի և ամենայն գրաւոր և անգիր աւանդութեանց ազգի իւր և աստուածաշունչ պատգամաց՝ հարկաւ պարտ էր գիտել և յիշել զմարգարէութիւնն Միքեայ բազում ամօք յառաջ քան ըզծնունդն Քրիստոսի գուշակեալ. ,, Եւ դու Բեթղեհէմ, երկիր Յուդայ՝ ոչինչ կրտսեր ես յիշխանս Յուդայ. ՚ի քէն ելցէ ինձ իշխան, որ հովուեսցէ զժողովուրդ իմ զԻսրայէլ. և. 2. Եւ ոչ ՚ի լինել հարկի ՚ի գալ երից մոգուցն յարևելից և յերուսաղէմ գալն ՚ի նոցանէ վասն ծննդեան նորոյ Արքայի՝ շփոթիլ, և իբրև ազգաւ օտար ամն ՚ի նոցա տեղեկութիւն պահանջել ՚ի ժողովրդականացն Հրէից. Թէոդ. Լայս ՚ի գործս Առաքելոց ՚ի գլ. Ը. համար 27 ասէ. ,, Ժողովեցան . . . . Հերովդէս և Պոնտոս Պիղատոս ազգօք և ժողովրդովք Իսրայէլի: ,, Եթէ Հերովդէս իսկապէս Հրեայ լեալ եղեալ, փոխանակ Իսրայէլի պարտ էր դնել Հրէից: Արդձիք են անանց, թէ Հերովդէս Եդովմայեցի էր ազգաւ. և Հրեայ կամ Հռովմայեցի չլինել նորա հաստատի և այնու, զի յԱստուածաշնչի և ՚ի պատմութեան Հըռովմայեցւոց ոչ գտանի որ Հերովդէս անուամբ նախ քան զժամանակ նորա: Իգնատիոս վարդապետ դասակից մերոյն Շնորհալւոյ ՚ի մեկնութ̃ն Աւետարանին Ղուկայ. յէջ 15. բառ. Փօլեան արտադրութեան ասէ,, Հերովդէս ՚ի հեթանոսաց անուն էր, ազգաւ Ասկաղոնացի որդի

Սնթխաբեայ ՚ի մեհենից դերեւոյ մանկանց"։

**65**. „Նաբուգոդոնոսոր թագաւորը հրամայեաց միանգամ շինել մի ահագին պատկեր Բելի անուամբ„ 170։

Նաբուգոդոնոսոր յանուն Բելայ պատկեր չ՚է շինեալ, այլ ասէ մարգարէն Դանիէլ. Արար պատկեր ոսկի, բարձրութիւն նորա 60 կանգուն, և լայնութիւն նորա կանգուն 6. և կանգնեաց զնա ՚ի դաշտին Դեերայ յերկրին Բաբելացւոց. Գ. 1։ Իսկ Բէլ էր կուռք մի Բաբելացւոց ՚ի ներքոյ կաւեայ և արտաքոյ պղնձի, զոր կործանեաց Դանիէլ և զմեհեան նորա. ԺԴ. 2, 6, 21։

**66**. „Մի Մակեդոնացի մարդ Համան անուամբ Ամադաթեան”. 176։

՚Ի գրոց Եսթերայ չ՚իք յայտնանէ՝ թէ Համան Մակեդոնացի իցէ եղեալ, այլ Բուգեցի. ԺԵ. 5։ Բայց սուրբն Յակոբ Մծբնացի ՚ի Զգօն գրեան իւր կոչէ զնա Ամաղեկացի յազգէ Ագագայ, զոր ապրեցոյց Սաւուղ և սպան Սամուէլ, զորմէ տես և ՚ի Զօհրապատիպ Աստուածաշնչի ՚ի նախադրութեան Եսթերայ։

**67**. „Այդպիսի մարդը պէտք էր թագաւորի ձիու վերայ արքայական զգեստով, Թագը գլխուն դրած, քաղաքի հրապարակներումը ման ածել և քարոզել”. 178։

Թագը գլխուն դրած, չ՚իք ՚ի մերում Աստուածաշնչի. տես Եսթեր. Զ. 7. 8։ Իսկ թէ ասել յաւելու, յիշեմ միայն, և որում անճշմարտութեանք, աւելի է զարմանալի։

**68**. „Սրբազան թագաւորին հնազանդում էին 128 գաւառ”. 176։

Ոչ 128, այլ 127 գաւառք կամ կուսակալութիւնք

անկան 'ի ձեռս նորա յետին Հնդկաց մինչեւ յԵթով-
պիա. տես Եսթեր. ա. 1. ը. 9. ժզ. 1.

69. ,, Որոշեալ հաստատ յայտնի չէ մեզ, թէ որ ժամանակի միջոցում մի ապրել է այս պատմագիրը (Տ Յոբը), վասն այս պատճառի նորա վարքը գտում ենք հին Կտակարանի պատմութեններին վերջումը". 180.

'Ի նախադրութեան Յոբայ 'ի Փարիզ տպեալ յամի 1805 յԱստուածաշնչի Զօհրապեան ընթեռնումք զայս ինչ ,, թէ ոմանք ըստ պատմութեան ազգահամարին հինգերորդ համարին զնա յԱբրահամէ. քանզի զԵսաւայ ազգահամարն ածէ մինչեւ 'ի Յոբաբ. Եւ որ ոմանք մտախոհ եղեալ ասացին, թէ որպիսեալ այսիք (անցք Յոբայ) եղեւ առանց գրոյ. զի գտանի Յոբ յառաջ քան զօրէնսն, եւ գրեցաւ յետ օրինացն. բայց յոր ժամանակ եւ եհաս կանխատացութիւն այս՝ պատուեցաւ 'ի Ճշմարտութեան կողմն իբրեւ զԱւետարան եւ զՄարգարէսն . . . . . 'ի դէպ է կարծել Մովսէսի զսա գրեալ, որ մերձաւոր էր ժամանակին 'ի նորա խորհելն իբր նկարագիր զսա արկեալ. Իսկ այլոց եղեւ կարծիք Սողոմոնի լինել գրող, զի ստիքերոն (բառ Յունաց՝ որ նշանակէ տաղաչափութիւն տող առ տող տնատեալ) է, որպէս նորա բանքն.

Յայսցանէ աղօտափայլ բանից թէ եւ ոչ Թադուածոյ ժամանակ կենաց նորա յայտնի, այլ ոչ ոք է ձեռներէց տեղափոխել զնա յԱստուածաշնչէ եւ յետադասել 'ի վերջոյ ըստ կարգի. զի երանելի Հարքն մեր՝ որք թարգմանեցին զԱստուածաշունչն 'ի Հելլենական լեզուէ. յայտ է՝ թէ որպէս գտին 'ի բնագրին, նոյնպէս եւ դասակարգեցին զիւրաքանչիւր գիրսն ըստ պատշաճի, եւ մեզ յետադասել ոչ այլ ինչ մնայ, բայց եթէ ամենախո-

րին անմտութեամբ վերապատուել զսուրբ աշխատութիւնս նոցա, և կեանս միով անգամ չառնել յաւելուած կամ փոփոխութիւն 'ի նմին, այս թէ ոչ յանդգնութեան, հայրանարգութեան և սրբապղծութեան անուն ժառանգելք ։ Յաճախախօսակալ վարդապետեան իմկ յԺԸ 18 գլխոյ Յոբայ ըստ Աստուածաշնչի մերոյ 'ի բաժանմունս դասէ զկնի Առակացն Սողոմոնի.

**70.** „Կայծակը սատակեց քո ոչխարները". 181.

Աստուածաշունչ մեր ասէ. „Հուր անկաւ յերկնից և այրեաց զհօտսն. Յոբ. Ա. 16. Այլ է հուրն և այլ կայծակն ։ Սոդոմ և Գոմոր հրով այրեցան, բայց չէ մարթ ասել, թէ կայծակամբք այրեցան ։ Սատակել և սատակիլ անարգութեան նշան են, զի անասունք կենդանեաց և անհասարակ գազանաց և հեթանոսաց ասեմք նմանութեամբ. Ոչ նն սատակեցաւ. սատակեցի զգայլն ։ Սատակեցան անբարեխտք ։ Սատակեա Աստուած զթշնամիս իմ ։ Եղեւ որդնալից սատակեցաւ. այս վասն ոչխարաց պարտ էր ասել, „կայծակը սպանեց կամ այրեց, և ոչ սատակեց ։

**71.** „Հերովդէսը միանգամ շատ հաւանեցաւ իւր աղջկայ գեղեցիկ պարուելուն՝ թոյլ տուեց, որ նա մի շնորհ խնդրէ հօրիցը". 186.

Ո՛չ իւր դուստր էր աղջիկն՝ որ կաքաւեաց, այլ եղբօր իւրոյ. և ինքն այս չէր նորա հայր, այլ հօրու. որպէս և նա խորթ դուստր. որում երդմամբ խոստացաւ (և ոչ թոյլ տուեց) տալ նմա զինչ և խնդրեսցէ մինչև ցկէս թագաւորութեան իւրոյ. Մատթէոսի. ԺԴ. 6. Մարկ. Զ. 22. 23. և ոչ թէ հաւանեցուցէ անորոշ՝ մի շնորհ խնդրէ. մի շնորհն կարելի է համարել մի մատանի, մի ականջաց գինդ, կամ ոսկի ապարանջան

և նմանիք, բայց նա զեւրոյ ամբողջ Թագաւորութեան զկէսն խոստացաւ նմա երդմամբ առաջի այնքան երևելի հիւրամեծարեալ բազմականաց իւրոց։ Ընդդէմ քերականութեան է և այն, թէ Հերովդէս հաւանեալ կաքաւելոյ դստերն իւր, թոյլ տուեց՝ որ նա մի շնորհ խնդրէ հօրեղբօրն, այսուհետև տայ հասկանալ, թէ աղջիկն այն ոչ յինքենէ ունէր խնդրել զթոյլ տուեալ շնորհն, այլ 'ի հօրէն իւրմէ հարազատէ. որ արդէն էր մեռեալ։ Ուստի փոխանակ ասելոյ հօրեղբօրն, պարտ էր ասել եղբօրն, որ լինէր ուղիղ ըստ քերականական կանոնաց։

**72.** ,, Երբ վեց ամիս անցած էին այն ժամանակից յետոյ, որ Զաքարիա քահանայի Եղիսաբէթ կինը աւետիք էր առացել Աստուծոյ հրեշտակից, թէ իւր ծերութեան մէջ ուրախութիւն է տեսանելու ,,. 187.

Ո՛չ Եղիսաբէթ ընկալաւ զաւետիս 'ի հրեշտակէն, թէ ունի լինել մայր և ուրախանալ 'ի ծերութեան իւրում, այլ այր նորա Զաքարիա քահանայն որպէս յայտ է. կարդա՛ Ղուկ. ա. 13—20։ Որպէս պատմէ և ինքն 'ի նախընթաց էջն 185.

**73.** ,, Երանելոյն Մարիամը դեռ ևս չըկարողանալով ըմբռնել այն գերազանց պատուի մեծութիւնը, որին պիտոյ է Աստուած արժանացնէր նորա . . . գնաց Հրէաստան իւր բարեկամ Եղիսաբէթի մօտ, որ ծանուցանէ նորան այն զարմանալի պատահումը". 187.

Մարիամ յայնժամ ըմբռնեաց իսկապէս զմեծութիւն գերազանց պատուոյն, որում պա՛րտ էր Աստուած արժանացուցանել զնա, մինչ ասաց ,, Ահաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում" . Ո՛չ անորոշ 'ի Հրէաստան գնաց, այլ յատկապէս 'ի քա-

ղաքն Յուդայ, և ոչ վասն ծանուցանելոյ նմա զզարմանոյն պատահումն, այլ յայց ազգականին իւրոյ Եղիսաբեթի. Ղուկ. ա. 39:

74. ,,Օգոստոս կայսրը հրամայէ աշխարհագիր առնել բոլոր Հրէաստանումը. և այս բանի համար պիտի էր ամենայն Հրէից ազգին գալ իւրեանց հայրենի աշխարհը". 188:

Օգոստոս ոչ ընդ ամենայն Հրէաստան ետ ճագիր առնել, այլ ընդ ամենայն տիեզերս. որոյ վասն երթային (տե՛ս Ղուկաս բ. 3). ամենեքեան մտանել յճագիր յիւրաքանչիւր քաղաքի:

75. ,,Հեռանելով Հրէից օրէնքին բերեցին (Յիսուսին) տաճարը. և ինչպէս Աստուած հրամայել էր նորա ծնողներին, անուն դրեցին Յիսուս". 190:

Ահա քեզ բանք Ղուկայ բ. 21. որ զանազան է 'ի բանէ վարդապետին որպէս ոսկի յերկաթոյ. ,,Իբրև լցան աւուրք ութ թլփատել զնա, և կոչեցաւ անուն նորա Յիսուս, որ կոչեցեալն էր 'ի հրեշտակէն, մինչև յղացեալ էր զնա յորովայնի: Հեռանել օրինաց Հրէրէից. բերել 'ի տաճարն. Աստուած հրամայեալ էր ծնողաց նորա՝ են օտարածնունդ գիւտք ինքնահնարք յայտնապէս:

76. ,,Մարիամը ինչպէս Մովսիսական օրէնքումը մայրացեալ կանանց համար օրէնք էր դրած 40 օր ծնանելուց յետոյ՝ գնաց Երուսաղէմի տաճարը իւր մանուկի հետ միասին". 190:

Մանուկ քառասնօրեայ մի՞ թէ քայլել կարէ, զի ասէ վարդապետն, թէ Մարիամ գնաց 'ի տաճարն իւր մանուկի հետ միասին, որով իմացեալ լինի, թէ և քառասնօրեայ մանուկն Յիսուս ընթացաւ հաւասար 'ի միասին ընդ մօր իւրում 'ի տաճարն: Այլ Ղուկաս

տէ, ,, Ածին զնա յԵրուսաղէմ յանդիման առնել Տեառն. Ղ. 22. այս է տալոյն զնա գրկաբարձ. Զո՞ր բան ընկալցուք և հաւատասցուք, զՂուկասու աւետարանչին, թէ զՊօրբատեան նորոյ աստուածաբանին:

77. ,, Նա էր հրաժարել ամուսնութենից մի կնոջ հետ. եթէ նորա համբաւը, և նորա հետ ճշմարտապէս երջանիկ կենակցութիւնը տարակուսական էր թուում քեզ". 188.

Այսպէս տարակուսական թուելով և տանից հաւատոյ ապացոյցս 'ի ձեռին ունելոյ վասն վատահամբաւութեան, այն է վասն շնագործութեան չունի որ իրաւունս կնաթող լինելոյ:

78. ,, Յովնանը մտածելով՝ որ այս գործից մեծ փառք հնձելու չ՛է, կամեցաւ հրաժարել նորանից, և նաւ մտաւ՝ որ գնայ Թարսիս (Իսպանիայի մի քաղաք է). Հանդիստ սրտով խնդրեց Յովնանը՝ որ իւրեան ծովը ձգին. նաւընկերքը չկամեցան այդ բանը անել, և ջանացին նաւը դէպ'ի ցամաք դարձուցանել, բայց չկարողացան ,, . 179.

Ըստ նախընթաց բանիցն արարեալ է փոփոխութիւն վարդապետին և ստա, զի 'ի մարգարէութեան Յովնանու ոչ տեսանեմք, թէ Յովնան խորհելով, թէ չունի հնձել փառս յայսմ գործոյ քարոզութեան և գնալոյ 'ի Նինուէ՝ կամեցաւ հրաժարել յայնմանէ. և թէ Թարսիս քաղաք է Սպանիոյ. և թէ հանդարտ սրտի խնդրեաց ընկենուլ զինքն 'ի ծով. և թէ նաւընկերքն չկամեցան լսել նմա: Ահա խօսական բանք Յովնանու ,, Եւ ել բան Տեառն առ Յովնան գնալ 'ի Նինուէ և քարոզել: Բայց նա յարեաւ փախչել 'ի Թարսիս յերեսաց Տեառն. էջ 'ի Յոպպէ, եգիտ նաւ, ետ

դիմս, եմուտ 'ի նաւ՝ և նաւեաց 'ի Թարսիս. եղև մըրրիկ մեծ 'ի ծովուն. նաւն 'ի վտանգի կայր 'ի խորտակել. արկին վիճակս, և ել վիճակն Յովնանու. առ որ ասաց Յովնան. առէք ընկեցէք զիս 'ի ծով: Աղաղակեցին նաւորդքն, քաւ լիցի Տէր. մի՛ կորիցուք վասն անձին առնս այսորիկ. Առին զՅովնան և ընկեցին 'ի ծովն: Յովն. ա. 1—16: Իսկ վասն Թարսիս քաղաքին՝ զոր համարի վարդապետն 'ի Սպանիա, տես 'ի Բառարանի յատուկ անուանց Աստուածաշունչ գրոց:

**79**. "Երևեցան Երուսաղէմի մէջ աստեղագէտ և փորձառու Թագաւոր մարդեր". 191:

Եթէ լոկ Մոգաւորք դնէր, ամենեքեան հաւանէին, զի Մոգաւորք մարդիկ լինէին և ոչ չորքոտանիք և Թագաւորք. Աւետարանն ևս՝ Մոգք՝ ասէ, եկին յարեւելից և ոչ մոգ մարդեր: Ո՞հ, որքան ծանր է լսելեաց և ընդդէմ լեզուի ասել Մոգաւոր մարդեր:

**80** „Յովհաննէս . . . . . այն միջոցումը բնակում էր անապատի մէջ. և ապրում էր այնպիսի կերակուրներով, որ տալիս էր նորան բնութիւնը. և նորա հանդերձը շատ պարզ էր". 185:

Բայց 'ի Յովհաննէ մեր Աւետարանիչք համաձայն միմեանց վկայեն, Թէ կարապետն Քրիստոսի եկն քարոզել և մկրտել յանապատին Հրէաստանի. և ունէր հանդերձ 'ի ստեաց ուղտու, գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր. և կերակուր նորա էր մարախ և մեղր վայրենի. Մատ. գ. 1. 4: Մարկ. ա. 4. 6: Ղուկ. գ. 2: Բայց Թէ ո՞ր Աւետարանիչ է, որ գրէ՝ Թէ բնակէր նա յանապատի և կեայր բնութեանն կերակրովք. և Թէ հանդերձ նորա էր պարզ յոյժ, այդ յայտնի է մեզ.

վարդապետին Ղազարեանց։

81. ,, Մի օրաչափ անցել էին''. 193.

Իսկ աւետարանին Ղուկայ. Ի. 44, է ,, Եկին իբրև աւուր միոյ ճանապարհ, (որ աշխարհաբառ ասի. Համարեմ թէ միօրեայ ճանապարհ եկել էին). ոչ երբեք կարէ առնել օրաչափ բառն, որ չ'էք 'ի միտ, և այսու բառին նմանութեամբ առն օրաչափ կամ օրակշիռ արեգակն, զի չափէ և կշռէ զաւուրս և զժամս, և ոչ այլ ինչ։

82. ,, Այն մեծախորհուրդ նշանակն՝ որի համար Աստուած առաքել էր նորան աշխարհ, յանկարծ լուսափայլեալ պատկերացաւ նորա հոգու հանդէպ. և այս առաջին անգամն բացայայտեցաւ նորան։ Յիսուսը պատասխանեց իւր ծնողներին այսպէս. Ո՞վ խնդրէիք զիս, ո՞չ գիտէիք՝ եթէ 'ի տան հօր իմոյ պա՛րտ է ինձ լինել''. 193։

Մանկանն Յիսուսի յերկոտասանամեայ հասակին առանց գիտելոյ ծնողաց յետս կալ 'ի տաճարին և խօսել ընդ վարդապետսն և լսել 'ի նոցանէ և հարցանել զնոսա՝ ոչ զմեծախորհուրդ նշանակն մերկելոյ զմեղ մարդկութեանս իւրով՝ նշանակէր, որոյ վասն իջեալ էր յերկնից յերկիր, զորմէ վարդապետէ պ. Ղազարեանցն բառ կամս, թէ յանկարծ լուսափայլեալ պատկերացաւ հանդէպ հոգւոյ նորա, որպէս թէ նախ թաղուն և ծածկեալ էր 'ի նմանէ, և արդ՝ նստելով իւր 'ի տաճարին ընդ վարդապետսն օրինաց, բացափայլեալ յայտնի եղև նմա։ Ո՛չ, ո՛չ, քա՛ւ լիցի այդպէս կարծել և համարել, այլ գիտութիւն նորա էր ապաւորել 'ի միտս մարդկան, թէ տաճարն այն Հօր իւրոյ դոլով, (զորմէ ասաց յետոյ, Տուն իմ տուն աղօթից կոչեսցի). ինքեան որդւոյ նորա պա՛րտ էր լինել անդ յաճախ. և

յայս իսկ միտս ասաց զմայր իւր. Ո՛չ գիտէիք, եթէ 'ի տան Հօր իմոյ պարտ է ինձ լինել. Եւ կամ լաւ ևս ասել, կամէր Հիմն դնել Համդերձեալ վարդապետութեան իւրոյ և պատրաստել զմիտս մարդկան 'ի լսել և առնել զբանն իւր, զոր ունէր աւանդել նոցա 'ի ժամանակի իւրում: Ապա թէ ոչ՝ զի՞նչ Հարկ էր Քրիստոսի, զի խորՀուրդ փրկագործութեան իւրոյ պատկերացի առաջի Հոգւոյ նորա յառաջ քան զժամանակն, որ ասացն զմայր իւր 'ի Հարսանիսն Կանայ Գալիլեացւոց. ,, Զի՞ կայ իմ և քո կին դու, չև է Հասեալ ժամանակ իմ. Յովհ. Բ. 4: Այս վայել է առն Հոգեղինի և ազնիւարի, որում տակաւ առ տակաւ պարզի և դիւրանայ զմտաւորութիւն իւր ազգազգ գործառնութեան, և ոչ անհնականարող բանին Աստուծոյ, որ կամաւոր մանՀուամբ իւրով ունէր բանալ զմեծ խորՀրդաւոր Հանդէս Ճակատամարտութեան ընդ սատանայի, ընդ աշխարհի և ընդ մեղաց: Զայդպիսի մարդկօրէն դառնել և կարծել և եթ մարթ է, բայց վասն Աստուածամարդոյն Քրիստոսի, ո՛չ անդր:

83. ,, Յովհաննէս Կարապետը քանի մի ամիս ծեր լինելով քան Յիսուսը, նոյն մօրերի (Տ̃ Մարիամայ և Եղիսաբեթի) բարեկամութիւնը փոխանցել էր և նոցա զաւակների վերայ''. 194:

Յովհաննէս վեց ամսով յառաջ ծնաւ քան զՔրիստոս, և այդքան վեցամսեայ ժամանակաւ չէ ա՛ռ անել զնա ծեր քան զնա. այլ և ինքն Յովհաննէս սպանաւ 'ի Հերովդեայ զօդ յիշատակութեան իւրում, դեռ յայտնութեան իսկ Համակ չՀասեալ, թող թէ ծերութեան. զի թէ Քրիստոս եկաց 'ի վերայ երկրի զամս 33 և զաւուրս 40. ապա Յովհաննէս վեց ամսով յա-

ռաջ ծնեալ քան զՔրիստոս, և յառաջ քան զնա կատարեալ մարտիրոսական մահուամբ յաւուրս և յամս վարդապետութեանց և աքանչելագործութեանց Փրկչին, ապա ո՞րպէս կարէ կոչել ծեր երեսնամեայն կամ աւելի ևս հասակաւորն մի կամ երկու ամօք։ Կարծեմ փոխանակ ծերոցն կամեցեալ է ասել երիցագոյն հաւատոյ։ Կարապետութիւն, առաքելութիւն և մարգարէութիւն Յովհաննու այսուիք պաշտամամբք հանդերձ 'ի վաղուց գուշակեալ էր 'ի Հոգւով տեսանողացն Աստուծոյ, մինչև բաց Զաքարիային մերոյ 'ի բանն աւետարանին Ղուկայ՝ Յորովայնէ յորովայն երկրպագ Քրիստոսի և խաղալ ցնծալով։ Իսկ այսմ օտար և ոչ գոլեւ վարդապետութիւն է ասել, թէ Յիսուս 'ի ձեռն մօր իւրոյ գիտէր զնա. կամ Յովհաննէս Եղիսաբեթ մօրէ իւրմէ զդրդուեալ խօսէր և քարոզէր զնմանէ. Ընդ հակառակն այնպէս էր լինել մարգարէական գուշակութեանց. և գռեհիկական աղքատութիւն է ասել, թէ Յովհաննէս և Յիսուս բարեկամացն միմեանց առաջնորդութեամբ ծընողաց իւրեանց. քաւ և քաւ լինել այդմ բան մարդկային ազգականական կամ շահախնդրական հետազօտութե։

84. ,, Փրկիչն միջամտելոց յետոյ Աստուծոյ Հոգովը վարվեցաւ դէպ 'ի անապատ, որ հանդարտութեամբ մտածելով այն մեծ գործի վերայ, որ պիտոյ է սկսանէր, հաստատէ և ամրապնդէ իւր սիրտը. քառասուն օր և քառասուն գիշեր մնաց այնտեղ հրաժարված սովորական կերակուրներից, յետոյ քաղցած էր". 196 ։

Երևելի ամն 'ի Տփխիս յամի 1834 գնորդի գէշերայն գեղահեղձ եղև։ Ընդ այդն 'ի նիւթարանն նորա գըտաւ նամակ մի կնքեալ յանուն բարեկամի իւրոյ Պ... զոր բացեալ և ընթերցեալ ընդ այլոց բանից գտին զըը-

եալ և զայս ինչ. „Ո՛, որքան դժուարին է անձնամատն լինել. այս քանի՛ ամիսք են, զի կրթեմ և փորձեմ զիս յայս գործ սովալ և ոչ վստահիմ. հաւկ յետոյ հազիւ հազ յայսմ գիշերի յաղթական գտայ մարմնոյս ընդոստացելոյ, և զօգ բնութեանն զիս վարեցի յանին կոյս Կուր գետոյ լինել նմա կամաւ զոհ և ձայրակ, թերևս այսու հանդարտեցից զալէկոծեալ խռովեալ հոգիս»: Ոչինչ ընդհատ յայսմանէ պատկերացուցանէ վարդապետն զվարկն Յիսուսի յանապատ 'ի Հօդուսն առ 'ի փորձել 'ի սատանայէ, որպէս զի յառանձնութեան լինելով նորա՝ քաջ մտախոհ եղիցի ըղմեծէ գործոյն չարչարանաց և խաչելութեան իւրոյ, զոր ունէր սկսանել, և զի հաստատեսցէ և ամրապնդեսցէ զմիտս իւր քաջութեամբ և անվեհեր տանել այնմ անտանելի մահուն: Համանմանեալ բոլորովին աշխարհային զինուորական կրթանաց, որք յառաջ քան զմինն զզօրս 'ի ձմերոց պատերազմ վարժեն զնոսա 'ի կեղծ պատերազմունս ընդ միմեանց և 'ի կեղծ առումն քաղաքաց և ամրոցաց: Օրմէ թեատրոս առ, փորձ կեղծեալ պատերազմի բանակայ զերկկուղ ձմերոցին:

Մատթէոս առէ. „Պահեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր, ապա քաղցեաւ. Դ. 2. Մարդապետն Ն. յաւելու, „Մնաց այնտեղ հրաժարեալ սովորական կերակուրներից». և փոխանակ ասելոյ զ40 տիւ կամ ցերեկ՝ զնէ օր, որ ընդ գիշեր բաւին հալվարի, և բազում անգամ նշանակէ զտիւ և զգիշեր 'ի միասին. որ զամբողջ օր. զոր ռուսերէն ասեն СУТКИ. Տես Պուկ. Դ. 2. որ զօրն 'ի գործ ածէ փոխանակ տունջեան և գիշերոյ:

85. „Դէպ 'ի չորս մի՛ գործածեր սուրբ Գիր-

քը և նորա մէջ պարունակած աստուածային աստուած-
քը· ըստ որում դու կամք ունէիր բառ և իմաստ ծը-
ռելով՝ քո թեթևամտութիւնը և վատ դիտաւորութիւն-
քը ծածկել կամ արդարացնել”· 196:

Պատուու ումն 'ի յոյն երբեմն զքարոզութիւն վար-
դապետի միոյ՝ և կամելով նշաւակել զմոլութիւնս նո-
րա, որոց ինքն էր սերեալ, և կշտամբել՝ զի նախ ը
Տեառն բանի, պարտ է առնել և ապա ուսուցանել :
Կացեալ յանդիման Վարդապետին սկսանի առէպ առէպ
չափել թզաւ 'ի բերանոյն ցականջսն, և յականջաց ցը-
բերանն: Նշմարեալ զայս վարդապետին յետ՝ քարոզին
կոչէ զպատանին առ ինքն և հարցանէ զպատճառ չափե-
լոյն թզաւ զականջսն և զբերանն: Որում պատասխանէ
պատանին իմաստութեամբ, թէ կամէր գիտել զհեռա-
ւորութիւն բերանոյ յականջաց, և լինել խելամուտ՝
թէ արդեօք որ ինչ ելանէ 'ի բերանոյդ՝ մտանէ՞ յայն-
քան քեզ մերձ ականջս քո, զի նկրտիս մեզ լսելի առ-
նել զխրատս քո, ուր հաստատու է բերանոյ է ականջաց
բազում յոյժ քայլիւք հեռի կամք 'ի քէն յեկեղեցւոջ :

Որպէս երանի՞ թէ և Նազարեանցն 'ի գրելն
զայս բան 'ի բերանոյ գրչին հաստատանէր ցունկնս իւր և
զգոյշ կայր 'ի մեղանչելոյ յայսքան բիւրակերպ վախ-
խութեանց և յաւելուածոց 'ի հին և 'ի նոր աստուա-
ծային Կտակարանս: Որ յոյս էն որդիք մարդկան 'ի
կշիռս իւրեանց մեղանչեն· դիւրաւ առնեն զինն և դժուա-
րաւ կատարեն զայն անձամբ:

**86**· „Յիսուն ունէր եօթանասուն այլ աշա-
կերտներ”· 197:

Ո՛չ 70, այլ 72 աշակերտս ունէր Յիսուս· տես
Ղուկ· Ժ· 1· 17:

**87.** ,, Երբեմն լսում էին նորա քարոզութիւնը տաճարի մէջ, երբեմն մասնաւոր տներում և ուսումնարանի մէջ". 198:

Այնպէս ձևացուցանէ վարդապետն զանձն իւր, որպէս թէ ականատես և առաջիկայ իցէ եղեալ գործոյն Քրիստոսի, և զոր Աշակերտք նորա մոռացան աւանդել մեզ, ինքն արդ 'ի մէտ բերեալ ըստ զգայականութիւն նոցա: Թէ Քրիստոս քարոզեալ իցէ 'ի տունս մասնաւորաց՝ մանաւանդ 'ի վարժատունս՝ Աւետարանիչք և այլ Առաքեալք ինչ ոչ ասեն: Ահա բուն բանք նոցա. ,, Ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա, և քարոզէր զաւետարանն արքայութեան: Եւ 'ի լեառն, և բացեալ զբերան իւր ուսուցանէր նոցա: Շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս և ընդ գիւղս, ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա, և քարոզէր զաւետարանն արքայութեան. Մատ. դ. 23. ե, 1. 2: թ. 35: ժա. 1: ժգ. 1. 2. 3: Մարկ. դ. 1: զ. 2. ժ. 1: ժբ. 35. Ղուկ. ե. 1: Եւ այլուր բազում: Յայտնապէս տեղիք քարոզութեանն Յիսուսի էին տաճար, լեառն, անապատ, ծովեզր երբեմն վայրք ընդարձակք, յորս կարէին զետեղել խուռն բազմութիւնք ժողովրդոց, և ոչ անձուկ սահմանափակ տունք մասնաւորաց և ուսումնարանք՝ յորս սակաւ ոմանք ամփոփին:

**88.** ,, Ամենայն տեղ՝ ուր կը գտանէիր դիպուկ ժամանակ, գործ ածէ քո զօրութիւնքը մարդկութեան օգտի համար". 199:

Ըստ այսմ ոչ ոք պարտի ջանադիր լինել յօգուտ մարդկութեան, եթէ դիպող ժամանակ չունի 'ի ձեռին. սխալ և թիւր կանոն: Յաջողութիւն գործոյ 'ի Տեառնէ է, առանց հայելոյ 'ի ժամանակին պարտինք գործել բա-

բարիս պնդեալ զմիջս մեր հաւատով. և ուր հաւատ՝ անդ ամենայն ինչ հնարաւոր է։ Հաւատովք զլերինս կարեմք փոփոխել ՚ի տեղեաց. Մատ. իա. 21. 22։ Հռովմ. ժբ. 11։ Մարդոյ էրս ինչ դնել ՚ի սրտի, ՚ի Տեառնէ լինի պատասխանի լեզուի. Առակ. ժզ. 1։

89. „Կօշիկներ չաղէն տեբրին". 200։

Զբանն Ղուկասու՝ „Տուք կօշիկս յոտս նորա". ժե. 22. (այս է քօշերը տուէք, որ հագնի) փոխեալ է ՚ի չաղէն, բոլորովին անյարմար. զի ագանիլ կօշիկս կամ հողաթափս, ասեմք. Մարկ. զ. 9. և ոչ կապել։ Նաև կամ արկանել զհողաթափս յոտս. Գործ. ժբ. 8։

90. „Կէս գիշերին ձայն բարձրացաւ. թէ ահա փեսան գալիս է, հանդէպ ելէք". 202։

Որ հաւանեալ բանին Ղուկասու „՚Ի մէջ գիշերի եղև բարբառ, ահա փեսայ գայ, ելէք ընդ առաջ նորա. իե. 6։ Տես որպէս անխիղճ այլանդակեալ է զնա անյարմար բանիւքս՝ „ձայն բարձրացաւ, հանդէպ ելէք"։

91. „Կատարեալ վիճակը կըտեսանէ անմահութեան աշխարհումը, և կըպսակվի բաղդաւորութեամբ և երանութենով". 209։

Որ ձայն է ասել աշխարհ անմահութեան և պըսակվիլ բաղդաւորութեամբ։ Անմահութիւն Աստուծոյ և հրեշտակաց նորա սեփական, և բաղդաւորութիւն (յաջողութիւն)՝ մարդկան, և այն՝ մինչ են յայսմ անցաւոր կենցաղում։

92. „Հարսանիքի հացկերութեան միջնումը պակասեց գինին . . . հրամայեց . . . ջուր լցուցանել այն կճեայ թակոյկները, որ հիւրերի ձեռք լուանալու համար կային այն տեղ . . . . . կանչեց իւր մօտ փեսան". 210։

Կարդա՛ զպատմութիւն հրաշիցս յ9 գլ․ Յովհ․ ՚ի 1 համարոյ ց10․ և տես, զի՞նչ անդ բանքս՝ ,,Հայց-կերութեան վերջումը ․ ․ ․ հիւրերի ձեռք լուանալու համար․ զանչեց իւր մօտ փեսան․ և ներբերի՞ է արդեօք և տանել այսքան համարձակութեամբ յանելուածս ատանել ՚ի սուրբ Աւետարանի․ ուր սուրբն Յովհաննէս ասէ․ ՚ի պակասել գինւոյն ․ ․ ․ էին անդ թակոյկք կըճեայք վեց ըստ սրբութեան Հրէից․ տանէին մի մի ՚ի նոցանէ մարս երկուս կամ երիս․ Լցէք զթակոյկսդ ջըրով․ (որով յայտնի խոնցեալ լինի, թէ ոչ գոյր ՚ի նոսա ջուր, և ուստի՞ ապա, և այն՝ փոան լուանալոյ զձեռս հիւրից )․ Խօսի ընդ փեսայի ճարտարապետն․ յայտ է թէ փեսայն անդ ՚ի հարսանիսն էր իբրև տանուտէր, և ոչ արտաքս, զի կոչեցէ զնա։

93․ ,,Սորանից եզրափակեց, որ մարդկութեան ստուածային բարեկամը հեռուից ևս փրկանէտ ներգործել է նորա որդու առողջութեան վերայ։ Նաև նորա բոլոր տունը հաւատաց աստուծոյն․ 212։

Այժմ տես զբան Աւետարանչին, և արա դատ արդարութեամբ ընդ խանդարիչն պատուական և ընտիր ոճոյ նորա․ ,, Գիտաց հայր նորա, եթէ յայնմ ժամու՝ յորում ասացն ցնա Յիսուս, թէ որդին քո կենդանի է․ ՚ի նմին ժամու թողեալ է զնա ջերմն․ և հաւատաց ինքն և ամենայն տուն իւր․ Յովհ․ Դ․ 52․ 53․ 54։

94․ " Ժողովուրդը տեսանելով այս հրաշալի անցքը"․ 213։

Գրեցելի է և քաղը ասել ընդ Աւետարանչին Յովհաննու, Տեսեալ զնշանն (կամ զհրաշն) Զ․ 14․ քան տարապարտ փոխել և յաւելուլ ասելով հրաշալի։

ռնդէ. զի ուր նշանաւք կամ հրաշիւք կարեմք հասկանալ զեզեալսն, էր պարզել անդ զբառ անյարմար և աւելորդ.

95. Զայս բան Մատթէոսի ,, Պետրոս գնաց 'ի վերայ ջրոյն, և եկն առ Յիսուս. և տեսեալ ըզհողմն սաստիկ՝ երկեաւ. և իբրև սկսաւ ընկղմիլ, աղաղակեաց ,, Տէր՝ փրկեա զիս". ժդ. 29. 30. փոխեալ է ըստ այսմ.

,, Պետրոս գնաց ջրի երեսէն և մօտեցաւ Յիսուսին, բայց մի սաստիկ հողմ վեր կենալով՝ զարհուրեցաւ և կամենում էր ընկղմել. ձայն տուեց Յիսուսին, Տէր՝ փրկիր ինձ". 213.

Յորս փոխեալք են՝ երեսէն, (վրայ) մօտեցաւ (եկաւ Յիսուսի մօտ). մի սաստիկ հողմ վեր կենալով՝ զարհուրեցաւ (սաստիկ քամի տեսնելով՝ վախեցաւ) կամենում էր (և յորժամ սկսաւ.) զի Պետրոս ոչ կամէր ընկըղմել, վասն որոյ և ոչ ասի կամենում էր, այլ դիպուածով 'ի պատճառս թերեհաւատութեան իւրոյ.

96. ,, Մի բանի հետ ծանօթանալու համար մի՛ վախեցիր ոչինչ աշխատանքից, ոչինչ ճանապարհից և ոչինչ նուիրագործութենից". 214.

Բանս այս գոլով օտար և ընդդէմ լեզուիս հարկ է պարզել և ընտանեցուցանել այսպէս.

Վասն ճանաչելոյ զհարկաւոր ինչ իր մի՛ խնայեր՝ ոչ յաշխատանս, ոչ 'ի խափանարար դժուարութիւնս, և ոչ 'ի ծախս.

97. ,, Երբ որ մօտեցած էր Յայրոսի տանը, ծառան լուր բերեց ժողովրդապետին, թէ մեռաւ քո դուստրը, ուրեմն միւս ի՞նչ աշխատութիւն ես տալիս վարդապետին". 215.

Թողեալ զխրթին ոճ Ռուսաբանին՝ ճշնի ամեն-

ուրեք նորայեղծ և նորախօս երևի, բայց շնորհ Աւետարանին խոստանայ միշտ զգեստաւորութիւն և զգործ նորա, և նա ամենայն կամօք սխալի յամենայն քայլս իւր, և բանք իւր ընդդէմ ելանեն հրաշալի հարազատութեան սուրբ Գրոց. որպէս է տեսանել յայսմ, զոր Մարկոս պատմէ 'ի գլ. ե. համար 35. Մինչդեռ նա զայն խօսէր, գան ոմանք 'ի տանէ ժողովրդապետին, և ասեն՝ թէ դուստրն քո մեռաւ. զի՞ ես աշխատ առնես զվարդապետդ":

Յորս յանձնէ յաւելեալ է՝ Երբ որ մօտեցած էր Յայրոսի տանը, ծառան լուր բերեց, ուրեմն մեռաւ:

**98.** ,, Հրամայեց Յիսուսը, որ հաց տան նորան ուտելու". 216:

Մարկոս և Ղուկաս են՝ որք պատմեն զբանս. և ոչ մին ասէ յանուանէ, թէ Յիսուս հրամայեաց տալ նմա ուտել ինչ. այլ անորոշաբար՝ Մարկոս ասէ, ,, ասաց տալ նմա ուտել. ե. 43. իսկ Ղուկաս՝ հրամայեաց տալ նմա ուտել. ը. 56. Այս վարդապետն ուստի՞ առնու զհացն: Դուցէ ոչ հաց, այլ կերակուր էր դիւրամարս, կամ պտուղ ինչ հիւթալից և անորժահամ, զորս սովորաբար տան հիւանդաց, և որպէս կարէ վարդապետն Նազարեանց ասել, թէ յատուկ հաց էր հրամայեալն ՚Քրիստոսի:

**99.** ,, Զայս բան Յովհաննու ժա. 32. Մարիամ իբրև եկն . . . անկաւ առ ոտսն Յիսուսի". Վարդապետն Նազարեանց այսպէս այլաբանէ. Մարիամ քոյրը իւր բարեկամներէ հետ խօսելն եկաւ, և գանգատելով պատատուեցաւ Յիսուսի ոտքերին". 216.

**100.** ,, Պրոպատիկէ աւազանի ջրերը այն միջոցումը միայն առանձին բժշկական զօրութիւն ունէին, երբ որ

շարժվում էին . . . և մինչ ես պատրաստվում եմ, միւսները իջանում են ինձանից յառաջ”. 218։

՚Ի բանից Աւետարանչին Յովհաննու յայտնապէս երևի, թէ առողջարարութիւն ջրոյ Պրոպատիկէ աւազանին յառաջ գայր ՚ի յուզելոյ (՚ի խառնելոյ) ջուրցն. զոր առնէր ըստ ժամանակին Հրեշտակ Տեառն իջանելով յերկնից. ապա թէ զօրութիւն ջրոյն լինէր յինքեան կամ ՚ի ձեռս մարդկան, զի յորժամ և կամէին, իջանէին և խառնէին զնոսա, յայնժամ որպէս ջերմուկքն Տփխիսայ, Տայոց, Պետիգօրսկւոյ և այլոց յոլով տեղեաց ծի վաղու եւս սեփականեալ լինէին ՚ի մարդկանէ և անկանէին ընդ կապալաւ (իջարայիւ) և տային բազում արդիւնս շահուց տեարց իւրեանց։ Բայց մեք դի՛ք ապա դուք, թէ վարդապետն Նազարեանց որպիսի ժպրհութիւն յանձին բերեալ մատնամուխ լինի հանել ՚ի միջոյ զյուզումն ջուրց ՚ի հրեշտակէ Աստուծոյ. և լոկ ասելովն „ բժշկական զօրութիւն ունէին յայնժամ, մինչ շարժվում էին (յուզմնէ, ՚ի հրեշտակէ՞, թէ ՚ի մարդկանէ) անցանէ լռութեամբ։ Այլև մօք ցնորաբանէ և ՚ի հետևեալն. „ փառաբանիր քո Աստուածդ, որ բնութեան մէջ դրել է այդքան հնարներ մարդուս առողջութիւնը նորոգելու համար”. 218։ Իւսատ եւ ջրոյն ընծայէ զառողջարարութիւնն, և ոչ ՚ի ժամանակին ջրոյոյզ հրեշտակին։

**101.** „ Մտածելով իւր հիւանդութիւնը խոստովանել հրապարակաւ, յոյս ունէր՝ թէ շօշափելով Յիսուսի հանդերձը առողջութիւն կգտանէ։ Այս կինը՝ երբ որ մեծ բազմութիւն թափվում էր Քրիստոսի քամակից խառնվելյաւ ժողովրդի մէջ, և շօշափելով Յիսուսի հանդերձի դրօշակը (ծայրը) . . . զգում

եմ ես՝ որ ինձանից զօրութիւն դուրս գնաց։

Թուի թէ պարոն Նազարեանցն յայսքան խուռն սխալմունս իւր կամ ականջալուր գոլով 'ի բերանոյ պատմութեանց այլոց գրեալ է զայսոսիկ, կամ զինքն ծայրագոյն աստուածաբան ոք կարծելով առանց 'ի սուրբ Աւետարանն հայելոյ խուփ աչօք մտաց գրեալ է զոր ինչ գրեալն է։ Ահա բանք Մարկոսի, տես և համեմատեա՛ ինքնին ընդ առաջիկայ բանիցն. ,, Երթայր ժողովուրդ բազում զհետ նորա։ Կին մի . . . եկն 'ի մէջ ամբոխին, բուռն եհար զհանդերձէ նորա, քանզի խորհէր 'ի մտի, թէ միայն մերձեցայց 'ի հանդերձս նորա, փրկեցայց։ . . . Գիտաց Յիսուս յանձն իւր զզօրութիւնն՝ որ ել 'ի նմանէ. Ե. 24. 27. 30։

**102.** ,, Մարդուս գիտութիւնքը հաստատուն բաներ են''. 220։

Հաստատուն Տաքառ լեզուաւ ասեմք կոր մտոր, այնոյլին, փուչումուչ . ուրեմն և ինքն որպէս մարդ, գիտութիւնք իւր կոր մտոր, այնոյլին բաներ են։ Անձամբ զանձն պախարակէ։ Ճշմարիտ գիտութիւնն ոչ կարէ կոչել հաստատուն, զի բղխի 'ի շնորհացն Աստուծոյ. ,, Ումեմն տուեալ է 'ի Հոգւոյն բան գիտութեան, այլում բան թարգմանութեան. բայց իւրաքանչիւր ումեք տուեալ է յայտնութիւն Հոգւոյն առ իրաքանչիւր օգուտ։ Ումեմն 'ի Հոգւոյն տուեալ է բան իմաստութեան, այլում բան գիտութեան ըստ նմին Հոգւոյ։ Միւսումն հաւատք նովին Հոգւով. այլում շնորհք բժշկութեանց նովին Հոգւով, այլում յաջողութիւնք զօրութեանց, այլում մարգարէութիւն. այլում ընտրութիւն հոգւոց. այլում ազգք լեզուաց։ Այլ զայս ամենայն յաջողէ մի և նոյն Հոգի և բաժանէ իւրաքան-

չիւր որպէս և կամի· Ա· Կորն· ԺԲ· 4—11: Եւ իւրաքանչիւր ումեք 'ի մէնջ տուեալ են շնորհք ըստ չափու պարգևացն Քրիստոսի· Եփես· Դ· 7: Հռովմ· ԺԲ· 6· 7· Իսկ ուր Թագաւորեն ,, հեռ և նախանձ , անկարգութիւնք և ամենայն իրք չարք" կոչին երկրաւոր, շնչաւոր և դիւական , առ 'ի զանազանել 'ի վերնապարգև իմաստութենէն, որ է սուրբ, խաղաղարար, հեզ , դիւրահաւան, լի ողորմութեամբք և պտղովք բարեաց, անխիղճ (անաչառ , անկեղծ , արդարադատ , անկողմնապահ), առանց կեղծաւորութեան· Յակ· Գ· 15· 16· 17:

**103**· ,, Մի օր Յիսուս իր աշակերտների հետ նաւ նստած անցանում էր Գենեսարէթ ծովակովը դէպ 'ի միւս եզրը: Օդը հանդարտ էր, և նաւը մեղմ յառաջ խաղալով քուն բերեց փրկչի վերայ . . . Դիւահարքը կատաղած էին իւրեանց տէնդերը : . . բնակիչքը խնդրում էին Յիսուսից, որ նոցա սահմաններովը անցանէ". 220:

Համեմատեալ զբանս ընդ բնագրին որ 'ի Մատ· Ը· 23· Մարկ· Ե· 2—10· Ղուկ· Ը· 27· դտանեմք բոլորովին այլազգ· նոքա ասեն ,, Իբրև եմուտ 'ի նաւն, գնացին զկնի նորա աշակերտքն նորա· Եւ ահա շարժումն մեծ եղև 'ի ծովուն, մինչև նաւին ծածկել յալեաց անտի· և ինքն ննջէր . . . Պատահեցին նմա դիւահարք չարաչարք յոյժ: Եւ ամենայն քաղաքն ել ընդ առաջ Յիսուսի, աղաչեցին, զի գնասցէ 'ի սահմանաց նոցա".

**104**· Նիկոդիմոս փարիսեցին՝ որ հրէից իշխան էր, կամք ունէր հրապարակաւ խոստովանել իւր անձը որպէս բարեկամ Յիսուսի· բայց այս զգուշալի ձեռնար-

կութենից յառաջ՝ կամեցաւ ինքնին վերահասու լինել այն բանին, թէ ինչ էր նոր մարգարէի վարդապետութեան իսկութիւնը''. 222.

Յետ մտադրութեամբ կարդալոյ զայն կարգն և Դ գլուխն Յոհաննու և ինքնին գտցեն զմեծ տարբերութիւն սորա ՚ի նմանէ.

105. ,, Այն մարդերը՝ որոնց մասին շատ նուազ լաւ կարծիք ունէինք, շատ անգամ ամենից լաւերն էին''. 221.

Կամ ասել, Մարդիկ՝ զորոց հաղէն երեքս ունիմք զնուազ կարծիս, բացում անգամ լաւ են քան զամենեսեան. բայց չգիտելով քաջ հայերէն՝ ծուռ և սխալ խօսի, զոր ոչ ոք կարէ հասկանալ դիւրաւ. Շատն մակբայ է և ոչ կարէ ունել զածական շատ, որ գոյական անուան է նմ վայել է.

106. Այսպէս և յէջն 224 զմակբայն բոլորովին համարի ածական անուն փոխանակ բոլոր, ամեն, ամենայն բառից ՚ի գործ ածելով. յասելն ,, Եկէք, տեսէք մի մարդ, որ ասաց ինձ բոլորովին, ինչ որ ես արած էի''.

107. ,, Մի վատահամբաւ կին համբուրում էր Յիսուսի ոտերը և օծանում էր իւղովը . . . . իւղով չօծեցիր դու իմ գլուխը, բայց սա անոյշ իւղով օծեց իմ ոտերը''. 226.

Վատահամբաւ նշանակէ անունը կորած կին, բոզ. բայց Աւետարանիչն Ղուկաս կոչէ զնա մեղաւոր. Է. 37. 39. որով բոզ ոչ լինի իմացեալ, զի այլով յանցանօք գոլով ոք վարակեալ (որպիսի են գողութիւն, ագահութիւն, սուտ վկայութիւն, սուտ երդումն, և այլն) կարէ ևս կոչել մեղաւոր. և անդէպ իսկ է և անհամաձայն, թէ կինն այն՝ որ էր Մարիամ քոյրն Ղազարու

բարեկամին Քրիստոսի, որ յարոյց զնա 'ի մեռելոց. (Յովհ. ժա. Ձ.) լիցի բող վստահութեան: Գիտեմք թէ բող եւ լիցի, այնու ամենայնիւ հեռաւելով պարկեշտ ոճոյն Ղուկաս, պարտ էր կոչել զնա բառնմա Ճեղ—ար, եւ ոչ վստահութեան (պոռնիկ, բող), որոյ կատարեալ ջերմեռանդութիւն եւ անկեղծ հաւատ սախսեցին զՔրիստոս Թողուլ զմեղս նորա. եւ իբրեւ Սկայադիր իմն սատուածոյին չնորհել նմա զայս բան ,, Հաւատք քո կեցուցին զքեզ, երթ 'ի խաղաղութիւն". Ղուկ. է. 47 50: Չորեք Աւետարանիչք 'ի միասին համաձայն միմեանց վկայեն, թէ այս Մարիամ դէւ չէ իւղով նարդեան ազնուի մեծագնոյ բեկեալ եհեղ 'ի վերայ գլխոյն Յիսուսի. Մատ. իզ. 7: Մարկ, ժդ. 3, 8: Ղուկ. է. 38. 46. Յովհաննէս միայն. ժբ. 3. դնէ թէ օծ զոտսն Յիսուսի. բայց ըստ անշուշտ վկայութեան երից Աւետարանչացն երեւի թէ Մարիամ ոչ միայն զոտսն՝ այլ եւ զգլուխն Յիսուսի լիցէ օծեալ իւղովն. յորում զխանական մեր Նազարեանց 'ի բաց թողու յայտնապէս զօծութիւն գլխոյն:

108. ,, Սիմոնը շատ կերպով ձեռնամերձ գտանվեցաւ իր հիւրի պատուին". 227.

Սմլին բանիւ պատմէ պարոն Նազարեանցն, թէ փարիսեցի Սիմոն բորոտն՝ մինչ Քրիստոս բազմեալ էր 'ի տան նորա 'ի ճաշել., անպատիւ լցէ արարեալ զնա բազում կերպիւ՝ զձեռն ամբառնալով 'ի հարկանել զնա. զի ձեռնամերձ լինել 'ի պատիւ կոչեցեալ հիւրին՝ խոկայէս զայս նշանակէ: Սակայն եւ ոչ մին յաւետարանչացն գրէ զայս յանուանէ. միայն Ղուկաս 'ի դլ. է. համար 39. ասէ՝ թէ փարիսեցին Սիմոն սկսեալ պհըպել մեղաւոր կնոջն առ Յիսուս, ասաց 'ի միտ իւր (եւ

ոչ յայտնի ձայնիւ, և ոչ զձեռն ամբառնալով 'ի հար-կանել զհիւր իւր, և նովին անպատուել զնա) ,, Սա թէ մարգարէ ոք էր, ապա գիտէր թէ ով, և որպիսի ոք կին մերձենայ 'ի սա, զի մեղաւոր է, Զորմէ իրազեկ լեալ Յիսուսի հոգւով որքան, առ 'ի բժշկել զգայթակղու-թիւն մտաց փարիսեցւոյն առակաւ առ Սիմոն Պետրոս բաշխմամբ պարտուց երկուց պարտապանաց՝ եցոյց զառա-ւելութիւն սիրոյ և հաւատոյ կնոջն մեղաւորի առ ինքն, որոյ վասն և աստուածային իշխանութեամբ իւրով եթող զմեղս նորա:

**109.** ,, Հասած հացը մօտ էր հնձելուն". **227**:

Հաց ասի 'ի մեզ ալիւր թրեալ զանգեալ ջրով և եփեալ հրով, պատրաստեալ յուտել. Ո՛չ 'ի բարբառս գաւեհկաց և անուսումն շինականաց, և ոչ 'ի մաքուր ա-մենապանծալի գրաբառ Հայկաբանութեան կարէ ոք լսել, թէ հացը հնձեն, կամ հացը ցանեն. ուր սուրբ Աւետարանն և ոչ խսկ ցորեան ասէ, այլ հասկ ասէ սկսան կորզել յոր-տերէից և ուտել: Եւ որպէս չէ խօսք Հայոց ասել ,, Հա-սած գինին մօտ էր քաղելու կամ կթելու". նոյնպէս և ոչ հասած հացը մօտ էր հնձելուն. ապա փոխանակ այսր ասի. Արտորայք մերձ էին 'ի հունձ. Յովհ. դ. 35. Արտորայք սպիտակացեալ էին և 'ի հունձս հասեալ:

**110.** ,, Յիսուսը իւր սուրբ պաշտօնի հոգսերից և աշխատութիւններից կամենալով հանգստանալ իւր բարեկամների ընկերութեան մէջ, գալիս էր երբեմն Բե-թանիա. ինչ տեղ իւր սիրելի Ղազարոսի տանը գտա-նւում էր շատ քաղցր ընդունելութիւն: Մարթա Ղազա-րոսի քոյրը՝ որ այրի կին էր". **229**.

Այս բանք բաց քանց հնարեալք անվայելուչ և անտեղի են մարմնացեալ Բանին Աստուծոյ, և ասկալի 'ի

լուր ականջաց. զոր և ոչ ոք յաւետարանչացն յիշատա-
կէ, թէ Յիսուսի գնալն երբեմն 'ի տուն սիրելւոյն իւ-
րոյ Ղազարու վասն հանգչելոյ 'ի հոգոց և յաշխատա-
նաց սուրբ պաշտման իւրոյ իջէ նստել, և այն՝ 'ի մէջ
ընկերութեան բարեկամաց իւրոց. Ո՛վ է նա՝ որ ասէրն, Մկ-
րտութիւն մի ունիմ մկրտել, և զիա՛րդ փութամ, մինչ-
չև կատարեսցի. Ղուկ. ժբ. 50. Արդ հանգիստ անձին նո-
րանէ 'ի հոգոց և յաշխատանաց սուրբ պաշտման ան ըն-
կերութեան իւրոյ. Ընկերք, բարեկամք և եղբարք նորա եր-
կոտասան Առաքեալքն և 72 Աշակերտք իւր էին, զորոց
ասէր, , Ահա մայր իմ և եղբարք իմ. Ո՛վ է որ առ-
նիցէ զկամս Հօր իմոյ, նա է իմ եղբայր՝ և քոյր և մայր.
Մատ. ժբ. 50. Եւ ո՛ր կայ գրեալ, թէ Քրիստոս
'ի տան Ղազարու 'ի Բեթանիա ունէր զհանգիստ բարեկա-
մաց և ընկերաց. յորս երբեմն երբեմն խոյս տալով անդորրա-
նայր 'ի ծանրութեանց վարդապետութեանց իւրոց. Ո՞չ
նա էր՝ որ ասէր, Աղուեսուց որջք գոն, և թռչնոց երկ-
նից բոյնք, այլ Որդւոյ մարդոյ ոչ գոյ, ուր դիցէ զգլ-
լուխ իւր. Մատ. ը. 20. Ղուկ. թ. 58. Ո՞չ նա էր,
որ ասէր. Եկա՛յք առ իս ամենայն վաստակեալք և բեռ-
նաւորք, և ես հանգուցից զձեզ. Առէք զլուծ իմ 'ի
ձեզ, և ուսարուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ
և գտջիք հանգիստ անձանց ձերոց. Զի լուծ իմ քաղցր
է և բեռն իմ փոքրոգի. Մատ. ժա. 28, 29, 30.
Հանգուցիչն ամենայն աշխատելոց՝ որ նախ առնէր՝ և ա-
պա ուսուցանէր, խոյս տայր յաշխատանաց. Ասն այս-
պիսեաց այլոց ուսուցանողաց և ոչ անսացողաց ողջմ-
տութեան բանից Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,
հպարտութեամբ անգիտացելոց և տալելոց 'ի խնդիրս և
'ի բանս հակառակութեան փողն տարանացի գեղեցիկս

հնչէ տատրակածայնին հոգւով իւրով առ աշակերտն իւր Տիմոթէոս. ա. Թուղթ. Է գլ. համար. յ3-12. Ո՛ որ արժան է կարդալ բոլորով ուշով մտաց և հոգւոյ Ի՞նչ լինել Մարթայի հնարէ յանձնէ և ոչ 'ի սուրբ Աւետարանէն.

111. Ի՛Հ ալեխա քան զայս բան վերոգրեալ (110.) ախոլն վարդապետն Նազարեանց, և այս առիթ դայթակղութեան պարզամիտ ընթերցողաց իւրոց և այսու յաջորդ բանիւս. ,, Տէր (Քրիստոս, երկար ճանապարհորդութենից յետոյ կամեցաւ մխիթարել հ [illegible] առեց իւր հետ Պետրոս Յակոբոս և Յովհաննէս աշակերտներն և վերելաւ Թաբոր սարը". 25.

Մատթէոս, Մարկոս և Ղուկաս են, որք պատմեն զերևումն Քրիստոսի 'ի լեառն մի բարձր առանձինն (անուրոշ և ոչ Թաբոր անուամբ, զոր աւանդութեամբ ասեն լինել Թաբոր, յորմէ առնու և Պարոկանն մեր). բայց չէք 'ի նոսա, թէ եւ նորա 'ի լեառն յայն յետ երկար ճանապարհորդութեան էր վասն վայելելոյ զհանգիստ: Թողեալ զբանս Աւետարանչացն, և առ վայր մի մտադնելով վարդապետին Նազարեանց՝ տեսցուք զերպխտ հանգիստ վայելեաց նա 'ի լերին վատաւակ յերկար ճանապարհորդութենէ. ,, Այլակերպեցաւ՝ ասէ, առաջի նոցա, լուսաւորեցան երեսք նորա որպէս զարեգակն և հանդերձք նորա որպէս զլոյս: Երևեցան Մովսէս և Եղիա, որք խօսէին ընդ նմա (Յիսուսի). ամպ լուսաւոր հովանի եղև 'ի վերայ նոցա: Ձայն եղև յամպոյն, Դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ, Դմա լուարուք. Աշակերտացն լուեալ զձայնն երկնային՝ անկան 'ի վերայ երեսաց իւրեանց և երկեան: Մատեաւ Յիսուս, բուռն եհար զնոցանէ, ասելով՝ յառն կացէք, և մի երկնչիք.

Արդ յայս ամենայն անցս (Թողեալ զկալն նորա յաղօթըս 'ի սկիզբն ելից իւրոց 'ի լեառն, զոր Ղուկաս միայն յիշէ· (Թ · 28, 29) զի՞նչ և զո՞րպիսի հանդիսս վայելեաց անդ Տէրն մեր : Յաղօթմն տքնեցաւ, լուսափայլեալ երեսօք և պայծառակերպեալ հանդերձիւք ընդ Մովսիսի և Եղիայի խօսեցաւ : Զ'և զխօսիլն իւր ընդ նոսա՝ աւարտեալ, ամպ լուսաւոր հովանացեալ, և բարբառ յամպոյն հնչեալ՝ զուշ և զմիտս նոցա ոչ փոքր աշխատ արարին ամփոփ և պատրաստ լինել յաստուածահրաշ հանդիսին։ Զի՞նչ ասացից և զզարհուրելոյ աշակերտացն և զզմայլելոյ նոցա սաստիկս, մինչև չիմանալ Պետրոսի, թէ զի՞նչ խօսի, և զանկանելոյ 'ի վերայ երեսաց իւրեանց յերկիւղ 'ի մեծէ երկիւղէն : Իբր Յիսուսի միայն մնացեալ՝ զհոգ ուշաբերելոյ և յառնելն կանգնեցուցանելոյ զերեսն աշակերտացն իւր և յապահովելոյ զնոսա և խրատուսելոյ անձամբ անձին կատարեաց առանց ուրուք ձեռնտուութեան · և ո՞ւր երևի աստ վայելումն հանգստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի : Որ պարտ էր գէթ ժամ մի ազատ լինել 'ի հոգւոց և 'ի զբաղմանց, զի տուղէին բանք նորա։ Արդ ելանել նորա 'ի լեառն ոչ վասն հանգստեան էր յերկար ճանապարհորդութենէ, այլ վասն հաստատելոյ և յայտնի առնելոյ զմահ իւր և զփառաւոր յարութիւն 'ի ձեռն կենդանեաց և մեռելոց, որպէս վկայեն Մատթէոս· ժէ, 9—12· և Մարկ· Թ· 8—11· ուստի յիջանելն 'ի լեռնէ անտի պատուիրեաց նոցա մի՛ ումեք պատմել զտեսիլն մինչև ցյառնել իւր 'ի մեռելոց։

112· ,, Եթէ մի մարդ բաշխամ է քեզ առանձին հաւատ, ապա մի՛ խաբիր նորան, և լուռ կաց, երբ քեզ արժան և պարտ էր լռել '· 231·

Այս բան թուի թէ երազախօսութիւն ինչ իցէ, զի չունի ինչ իմաստ բացորոշակի։ Բաշխել հացս չէ ըստ Հայոց, զի հաւատն չէ իր թանձր և նիւթական, զի բաշխեսցէ մին միւսում. որպէս ինքն իսկ Նազարեացն մայր 231 էջ 'ի տողն 22 վասն Զաքէի ասէ, ,, իմ կայքի կէսը բաշխած եմ աղքատներին''։

115. ,, Յիսուս կանգնած գանձանակի հանդէպ նայում էր, թէ ինչպէս դրամ էին ձգում այն տեղ. Ո՞նց կոչան մեծատուն և աղքատ։ Առաջինները իւրեանց հարստութեան լիութենէից ձոխ ձոխ տուրքեր արեցին .. .. այրին շատ դրեց գանձանակումը. պատճառ որ միւսները իւրեանց աւելորդներիցը ձգեցին, բայց սա իւր չքաւորութեան մէջ, ինչ որ ունէր չունէր, տուեց". 232.

Թէ ոչքան այլայլութիւնք են յայսմ, տես զայս բնագիր Աւետարանչին Մարկոսի 'ի գլ. ժբ. 41—44. և քեզէն արտայես զխօսին։ "Կայր Յիսուս ընդդէմ գանձանակին, տեսանէր՝ թէ զիարդ ժողովուրդն արկանէր պղինձ 'ի գանձանակն։ Եւ բազում մեծատունք արկին բազում ինչ . . . Այրին այն տառապեալ շատ արկ քան զամենեսեան, որ արկին 'ի գանձանակն։ Զանզի ամենեքեան յաւելորդաց իւրեանց արկին, այլ նա 'ի չքաւորութենէ իւրմէ՝ զամենայն ինչ զոր ունէր, արկ զո֊ջիւ չափ զկեանս իւր"։

114. ,, Մինչ 10 աշակերտքը լսեցին այս բանը, բարկացան այն երկու եղբայրակիցների վերայ". 235.

Եղբայրակից զնէ տառ փորձարկեալ փոխանակ եղբարց, որք էին Յակոբոս և Յովհաննէս որդիքն Զեբեդեայ. բայց ամենայն ոք գիտէ, թէ այլ է եղբայր, և այլ եղբայրակից, որ նշանակէ կցորդ եղբայրութեան, և ոչ զհարազատ եղբայրն, կամ ընկեր և միաբան կրօ֊

յառաջեալ անձանց.

115. „Գիտէր նա (Յիսուս) . . . որ իւր մահուամբ միայն նորա վարդապետութիւնը կրստանայ աստուածայնութեան կնիք". 2.6.

Կամի ասել, եթէ Յիսուս չէր մեռնել, վարդապետութիւն նորա չլինէր աստուածային, ըստ որոյ անվաւեր, անզկայ և անհաստատ մնացեալ՝ չառնոյր յինքն զկնիք հաստատ, անսկզբայ յԱստուածոյ հանգոյց զնա. «Բան լեալ այսմ այսպէս լինելոյ. Ըստ նորա հազարաւոր ամբ նախապաշարեալ 'ի Տեառնողաց հակառակորդաց էր բերել անհրաժեշտ պատերազմ ընդ սատանայի, ընդ մահու և ընդ զօրութեան դժոխոց. Վարդապետութիւն նորա յայնժամ կնքեցաւ և վկայեցաւ եթէ ճշմարտապէս է աստուածային, մինչ Հայրն Աստուած երկնից գոչեաց յերկնից. „Դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ, դմա լուարուք". Մատ. գ. 17. Ժէ. 5. Այսու եւս մեք տեսեալ Պետրոսի դարձուցանել զսուր իւր 'ի պատեան իւր. „Համարիս եթէ, ասէ Պետրոս, թէ ոչ կարեմ աղաչել զՀայր իմ, և հաստուցանիցէ ինձ այժմ այսր աւելի քան զերկոտասան գունդս հրեշտակաց: Արդ զիարդ լնուցուն գիրք, եթէ այսպէս պարտ է լինել: Այս ամենայն եղև, զի լցցին գիրք Մարգարէից. Մատ. իզ. 52 56.

116. „Այս պղծութիւնը տեսանելով Յիսուսը . . . . . ասաց, իմ տունս պիտի է աղօթքի տուն ասուի, բայց դուք շինել էք զայն աւազակներու որջ",
23.

Պղծութիւն համարի զտուրեւառութիւնն, զոր առնէին 'ի տաճարին, բայց համեստ բանիւ մեղմ էր ընդ այնր ասել անկարգութիւն. քանզի պղծութեամբ խմա-

ցեալ լինին ամենայն անմաքրութիւն, անառակութիւն, մոլութիւն, գիճութիւն, եւայլն. զոր անհնար է կարծել, թէ գործէին յայնժամ 'ի տաճարին: Աւետարանչաց այլոց. Մատ. իա. 13. (զոր աշխարհաբառ մաղարօ, փուշ քարափ ասեմք), եղական ձայնիւ դնէ այր. որ է ամենածանր սխալ. զի այր լինի 'ի խորս երկրի, և չկարէ լինել բնակարան աւազակաց, իսկ այրք հասարակօրէն 'ի ծայս լերանց, ձորոց և անտառաց, որք երբեմն լինէին ապաստանական գողոց, փախստէից և գաղտնեաց, և երբեմն զբօսարան և տեղի յանկարծ մեկուսացեալ անձանց:

117. ,, Մինչև նոքա սեղանն վերայ էին . . . յետոյ սեղանից վեր կացաւ Յիսուս". 240, 241:

Սեղանն ճաշն է, զոր 'ի ցերեկի ուտեմք սովորաբար 'ի միջօրէի. իսկ Քրիստոս ընդ աշակերտաց իւրոց 'ի գիշերի զզատիկն ուտէր, զոր չորեքին Աւետարանիչք միաբանից համաձայն կոչեն Զատիկ Տեառն, Պասէք, Տօն Բաղարջակերաց, Ընթրիք Տեառն. Մատ. իզ. 17—19. Մարկ. ժդ. 12—16. Ղուկ. իբ. 1, 20: Յովհ. ժգ. 1—4: Որոյ չհասանել վարդապետն Նազարեանց փոխէ 'ի սեղան:

118. ,, Յիսուս միայն ունիմք մեզ բարեխօս Աստուծոյ առաջի. և նա է մեր միջնորդը". Յովհ. ժդ. 13. ժզ. 23. ա. Յովհ. բ. 1. ա. Տիմոթ. բ. 5. (242):

Բանս այս ոչ 'ի կարևոր տեղւոջ և առանց հարկի խառնեալ ընդ բարոյական խրատուց հանդերձ չորեք վկայութեամբք 'ի Նոր Կտակարանէ՝ բացերևակի ցուցանէ թէ բարեխօս և միջնորդ մեր առաջի Աստուծոյ Քրիստոս միայն գոլով, ասա և ընդդէմ է որպէս թէ սուրբ Գրոց ընդունել ուղղափառ Եկեղեցւոյ մեր ընդ արևե-

լեան Քրիստոնէից զաւրեխօսութիւն Սրբոց։

119. ,, Յիսուս տեսանելով՝ թէ քնած են իւր աշակերտքն, ծաղրեաց — և ասաց՝ այսուհետև կարող էք ննջել և հանգստանալ". 243 ։

Բնա՛ւ լեալ ասել,, թէ բարկացաւ Յիսուս 'ի վերայ աշակերտաց իւրոց տեսեալ զնոսա ննջեալս, որում չունիմք վկայ և ոչ զմի 'ի չորից Աւետարանչացն։ Բայց՝ ,, Այդպէս ոչ կարացիք մի ժամ արթուն կալ ընդ իս. Մատթ. իզ. 40. Զի՞ ննջէք, ասէ, կացէք յաղօթս, զի մի՛ մտանիցէք 'ի փորձութիւն. Ղուկ. իբ. 46. չէ՞ն բարկութեան, այլ ընտանական յանդիմանութեան և վշտացեալ սրտի։ Որպէս թէ ասէր՝ ,, Ես տեսի և վարդապետս ձեր հանդերձեալ եմ ահա՛ մատնիլ 'ի ձեռս մեղաւորաց, և դուք սիրելի աշակերտքդ իմ ոչ՞ինչ հոգայք, և ընդ հակառակն զքնով եք անկանիք, և ոչ զմի ժամ կայք ընդ իս արթուն։

120. ,, Այս տարին Յիսուսը Կայիափա քահանայապետի առաջևը". 243 ։

զՅիսուս տարին նախ՝ առ Աննա աներն Կայիափայի, որ քահանայապետն էր տարւոյն այնորիկ։ Եւ ապա Աննա առաքեաց զնա կապեալ առ Կայիափա փեսայն իւր. տես Յովհ. ժը. 13. 24.

121. ,, Յուդան տեսանելով, թէ դատապարտեցաւ Յիսուսը, զղջացաւ իւր գործի վերայ. իւր առած արծաթը տարաւ յետ տուեց քահանայապետներին, և գնաց խեղդուեցաւ". 244 ։

Բաւ լեալ, ո՛չ Յիսուս դատապարտեցաւ, այս է մեղաւոր դատաւ, այլ Յուդաս, որ մատնեաց զնա. տես Մատ. իէ. 3—5։ և զարծաթն ո՛չ միայն քահանայապետացն դարձոյց, այլ և ծերոց ժողովրդեանն, ասելով՝ մեղայ,

զի մատնեցի զարիւն արդար. և նոքա ասացին, մեզ չէ փոյթ, դու գիտես: Եւ ընկեց զարծաթն 'ի տաճարին, և գնաց, և չոգաւ խեղդեցաւ:

122. "Յիսուսի աշակերտներէն միմիայն Պետրոսը նորա հետեւից գնացած էր մինչեւ քահանայապետի սրահը. նա չկամեցաւ եւ նոյն անհաւատարիմ գտանուիլ այն [illegible] խօսքին, որ տուած էր ինքը. Եթէ հարկանէք ինձ մեռանիլ եւս քո հետ միասին, չ'եմ ուրանալու քեզ, ասած էր Պետրոսը յառաջուց". 246:

Յաշակերտաց անտի ոչ միայն Պետրոս գնաց ընդ Յիսուսի մինչեւ 'ի սրահ քահանայապետին, այլ և ինքն Աւետարանիչն Յովհաննէս, որ 'ի գլ. ժը. 15, 16, յայտնապէս ասէ.—"Երթայր զհետ Յիսուսի Սիմոն Պետրոս և միւս աշակերտն: Եւ միւս աշակերտն, և եմոյծ 'ի ներքս զՊետրոս: [illegible] խօսքին [illegible], չէ [illegible], և ոչ իսկ [illegible] (որ նշանակէ զքաջասիրտ անձն) կարէ լինել ածական յօդաւոր ձայնի. զայդ պարտ էր ասել ընդ այսմ. "Պետրոս չուզեց որ իսկ և իսկ իւր անվեհերական խօսքի դէմը վարուի". (որ աւելորդ է 'ի սպառ, և չէ իսկ հարկաւոր): Նախ գայթակղել տայց Պետրոս, ապա մեռանել, ուրանալ. զի յասելն Քրիստոսի առ աշակերտսն իւր 'ի գիշերին մատնութեանն թէ,, Ամենեքին դուք գայթակղելոց էք յինէն յայսմ գիշերի". Առ այս Պետրոս ջերմեռանդ սիրով խոստովանեալ ասաց. Թէ և ամենեքեան գայթակղեսցին 'ի քէն, սակայն ես ո՛չ գայթակղեցայց": Եւ մինչ զինի յասել Յիսուսի.,, Մինչեւ հաւ խօսեալ իցէ, երիցս ուրասցիս զիս": Նա յամ պատասխանեաց Պետրոս, "Թէ և մեռանել հասանիցէ ընդ քեզ, զքեզ ո՛չ ուրացայց". Մատ. իզ. 35: Մարկ. ժդ. 31: Ղուկ. իբ.

33. 34։

123. " Երբ որ հասել էին Գողգոթա սարին, Յիսուսը ձեռքերից և ոտերից բևեռեցին խաչի վերայ։ Ճանապարհից անցաւորները ամենայն կերպով հայհոյում էին նորան. այո և քահանայապետքը արհամարհում էին նորան և ասում էին. ուրիշները կարողացաւ ազատեցուցանել, բայց ինքը իւրեան չէ կարող ազատեցուցանել". 247.

Արդ եդից հանդէպ բանիցս և ընթագիր Աւետարանին Մատթէոսի. իէ. 33, 39, 41, 42, և դու տեսցես զտարբերութիւնն, զյաւելուածն և զկրճատումն։

Աւելեալ 'ի տեղին անուանեալ Գողգոթա, որ է տեղի կառափելոյ ... հանին զնա 'ի խաչ ... Եւ որ անցանէին, հայհոյէին զնա.. նոյնպէս և քահանայապետքն ծաղրէին հանդերձ դպրօքն և ծերովք և ասէին. զայլս ապրեցոյց, զինքն ոչ կարէ ապրեցուցանել".

Յաւելուածք են՝ սարին, ձեռքերից և ոտերից, ճանապարհից, ամենայն կերպով, այո։ Կրճատութիւնք են՝ 'ի տեղին անուանեալ, որ է տեղի կառափելոյ, նոյնպէս հանդերձ դպրօքն և ծերովք։ Տարբերութիւնք են՝ արհամարհում էին, որ չ'է նոյն ընդ ծաղրէին, որ նշանակէ մասխարայ անել. կարողացաւ, չ'է կարող։ Զայլս ապրեցոյց, զինքն ոչ կարէ ապրեցուցանել" հասարակ խօսիք ասելք, ուրիշներին ապրեցուց, իրան չէ կարողանում կամ չ'է կարում որ ապրեցնի։ Չ'է կարող, և ոչ կարէ չ'են մի և նոյն։ Չ'է կարողն նշանակէ, թէպէտ կարէ, բայց չունի հրաման. իսկ ոչ կարէն նշանակէ, թէպէտ կամի բայց չունի կարողութիւն։

124. " Խաչելութեան ցաւը սաստկանալով առաւել, մահու զարհուրելի տագնապի մէջ, ձայն արձակեց Յիսուսը". 247.

Առհն Քրիստոսի զօրով կամաւոր և հաճութեամբ Տէր իւրոյ յառաջագոյն գիտէր զառաւել սաստկութիւն նորա, որոյ վասն ասէր․ ,,Հայր՝ եթէ հնար է, անցցէ յինէն բաժակս զայս. Նու թէ'' Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար''։ Բայց սա ոչ վասն զարհուրելի տագնապին մահու դողեաց Յիսուս, այլ զի մերձ էր աւանդել զհոգին Տէր իւրում, զվերջին հնազանդութիւն իւր կամեցաւ յայտնել նմա յաւուրն և յօրինակ մարդկան, կնքելով այսու աստուածային բանիւ իւրով՝ թէ ,, Ամենայն ինչ կատարեալ է''. Յովհ. ԺԹ. 30.

125. ,, Իններորդ ժամն էր . . . երբ փրկիչը իւր աստուածային հոգին դուրս փչեց''. 248:

Քրիստոս մեռաւ մարմնով՝ զոր էառ 'ի սրբոյ կուսէն Մարիամայ հանդերձ հոգւով, մօք, և ամենայնիւ՝ որ ինչ է 'ի մարդ. Ճշմարտապէս և ոչ կարծեօք. և ընդնմին խոստովանի Աստուած անմահ: Աստուածային հոգւով էջ 'ի դժոխս, կապեաց զսատանայ յանլոյծ կապանս և աւերեաց զամուրս նորա: Յայտնութիւն է ասել, թէ Քրիստոս զաստուածային հոգին իւր դուրս փչեց: Մատթէոս ասէ՝ արձակեաց զհոգին. իէ. 50: Մարկոս դնէ. Յիսուս արձակեաց ձայն մեծ, և եհան զոգի. ժե. 37. Ղուկաս ասէ նոյնպէս՝ եհան զոգի. իգ. 46: Իսկ Յոհաննէս աւանդեաց զոգին. ժԹ. 30: Հանել զհոգի, աւանդել զհոգի աշխարհաբառ ասի, հոգին հանել, տալ, պահ տալ և ոչ դուրս փչել, որով յատկապէս մեռանիլ ոչ իմանի:

126. ,, Բաւական համարեցին խոցել նորա կողքը, որից դուրս թափվեցան արիւն և ջուր. որպէս թէ նշան, թէ բոլորովին մեռած էր''. 248:

Ականատես Աւետարանիչն Յովհաննէս 'ի գլ. ԺԹ.

Համար. 34. 38. ասէ. ,, Մի ոմն 'ի զինուորացն տի-գաւ խոցեաց զկողս նորա. և ել վաղվաղակի արիւն և ջուր. Ն.ըն աշխարհակալս ասէ դորոշ էլա—, և ոչ դուրս թափ-եցաւ. և զայդ եղանն ջրոյ և արեան մէջ Հայքս ոչ 'ի նշան բոլորովին մեռելութեան համարիմք, այլ որպէս անմահայիշատակ Համբրան Հայրապետին տէրն Ներսէս Շնորհալին նուագէ. ,, Կրկնակերպ կողին աղբերբք ե-կեղեցի իւր հաստատի, ջրովն մաքրի, զարիւն ըմպէ, զՄար-մին ընդ Հօր փառաւորէ.

127. ,, Ինչպէս ամենը՝ որ Յիսուսը առաջուց ասել էր, կատարվեցաւ. նոյնպէս ճշմարտվեցաւ այն խօս-քը, որ յառաջուց ասած էր փրկիչը. այսինքն քանդեցէք այդ տաճարը, և ես կանգնեցնեմ դորան երեք օրի մէջ". 249:

Յիսուս ոչ փրկչեցաւ, այլ Հրէից ասաց՝ ,,Քա-կեցէք զտաճարդ զայդ, և ես զերիս աւուրս կանգնեցից դա". այս է շինեցից. Յովհ. բ. 19. որ է քակել 'ի հի-մանց զտաճարն առ 'ի նոր 'ի նորոյ շինել զնա. և ոչ թէ նորոգել, որ նշանակէ զքայքայեալն կարկատել և խրխ զնա առնել. Որ երևի և այլ մեծ և ծանր սը-խալ իմաստից. զի բանս այս ասացեալ վասն տաճարի մարմ-նոյն Քրիստոսի 21. զոր Հրէայք խաչեցին, և նա յար-եաւ յետ երից աւուրց, այնպէս բացատրէ. որպէս թէ նիւթական տաճարն Սողոմոնի քանդեցաւ, և Քրիստոս որպէս ճարտարապետ վերանորոգեաց զնա յընթացս երից աւուրց:

128. ,, Այս աշակերտը Թովմասն էր. սա ութ օրից յետոյ տեսանելով Յիսուսը՝ դարձեալ չէր հաւա-տում, մինչև որ շօշափելով և քննելով նորա խաչելու-թեան նշանները հաւատաց, որ իւր տեսածն Յիսուսն էր".

և ամօթապարտ լինելով՝ ձայն արձակեց. Տէր իմ և Աստուած իմ. բայց Յիսուսը ցոյց տալով Թովմասին իւր վէրքը ձեռների և կողի վերայ՝ ասաց. Թովմա՛ս՝ դու հաւատացի՛ր, ըստ որում՝ տեսար. բայց երանի՛ նոցա, որ կը հաւատան առանց տեսանելու". 151.

Այս ևս անհամաձայն է ընդ բանից սուրբ Աւետարանչին Յովհաննու։ Ահա՛ ճշմարիտ պատմութիւն նորա։ Այն ինչ աշակերտքն պատմեցին Թովմայի (որ 'ի ժամանակի անդ ոչ էր ընդ նոսա,) թէ տեսաք զՏէր, որ մտեալ դրօքն փակելովք եկաց 'ի մէջ մերում, ետ մեզ ողջոյն և եցոյց մեզ զձեռսն և զկողս իւր։ Առ այս Թովմաս պատասխանեաց, մինչև ոչ տեսից 'ի ձեռսն նորա զնշան բևեռացն, և արկից զմատունս իմ 'ի տեղիս բևեռացն, և մխեցից զձեռս իմ 'ի կողս նորա, ոչ հաւատամ։ Եւ ահա վասն այսորիկ յետ ութ աւուր դարձեալ ընդ դրունսն փակեալ մտեալ առ նոսա Յիսուս, ուր էր և Թովմաս, և կացեալ 'ի մէջ և տուեալ ողջոյն ամենեցուն, ասաց ցԹովմաս՝ արդ շօշափեա՛ մատամբք և ձեռօք զձեռս և զկողս իմ, և մի՛ լինիր անհաւատ, այլ հաւատացեալ։ Եւ յասել Թովմայի՝ Տէր իմ և Աստուած իմ՝ յասել Քրիստոս, այդ զի տեսեր զիս և հաւատացեր, երանի՛ որոց ոչ իցէ տեսեալ՝ հաւատասցեն. Յովհ. ի. 19—29։ Ուր երևի յայտնապէս՝ թէ Թովմաս ընդ տեսանելն զՅիսուս հաւատաց նմա, թէև հնազանդելով Յիսուսի մխեաց զմատունս իւր 'ի տեղիս բևեռաց ձեռաց և կողից նորա։

129. „ Մինչև Յիսուսը իւր աշակերտներին հետ էր, աշխատեց բանալ նոցա միտքը, որ իմանան սուրբ Գրքի զօրութիւնը". 251.

Քրիստոս յետ յարութեան իւրոյ 'ի լինել ընդ ա-

շակերտաց իւրոց յաւուրս քառասուն երեւէր նոցա, և ասէր վասն արքայութեանն Աստուծոյ. Գործ. ա. 3։ Իսկ զկնի նոցա երաց միանգամ միայն, այն է յաւուր Համբարձմանն իւրոյ յերկինս առ՚ի իմանալ զգիրս՝ գրեալս յօրէնսն Մովսէսի 'ի մարգարէսն և 'ի սաղմոսն, որք պատմէին զչարչարելն Քրիստոսի և զյառնել 'ի մեռելոց յաւուր երրորդի և զքարոզելն յանուն նորա զապաշխարութիւն և զթողութիւն մեղաց. ևայլն. Ղուկ. իդ. 44 51։ Աշխատեց աւելորդ է բոլորովին և անվայել ամենակարող աստուածութեանն Քրիստոսի.

130. „ Դժուար էր քեզ աքացել ընդ դէմ խըթանի։ Այս տեսիլքերը սրտաթափ լինելով խօսեց Սաւուղ։ Տէր, ի՞նչ ես կամենում, որ անեմ ես. դարձեալ ձայն եկաւ . . . այն տեղ կլսես . . . Դամասկոս քաղաքումը հեթանոս Սաւուղը, Անանիա Յիսուսի աշակերտի մօտ ուսումն առաւ”. 255։

Ո՞դէց զընդդէմն, զի բազմակիսոյլ երևեցին յանձնէ ներմուծեալ բանքն, և ընդ նմին տարբերութիւնն և որխալքն „ Խիստ է քեզ ընդ դէմ խթանի աքացել։ Նա զարհուրեալ և անշշունջ լեալ ասաց, Տէր, զիս զի՞նչ կամիս առնել. և ասէ ցնա Տէր . . . պատմեսցի քեզ . . . Անանիա եդ ձեռս 'ի վերայ Սաւուղայ 'ի Դամասկոս քաղաքի, զի տեսցէ և լցցի Հոգւով սրբով։ Վաղվաղակի անկան յաչաց նորա իբրև կեղևանք, ետես և յարեաւ մկրտեցաւ. և առեալ կերակուր զօրացաւ. և եղև 'ի Դամասկոս ընդ աշակերտսն աւուրս ինչ. Նա վաղվաղակի 'ի ժողովուրդսն քարոզեաց զՅիսուս, թէ նա է Որդին Աստուծոյ. Գործ. թ. ի 1 ց 21։

Յորս չերևին „ այս տեսիլքերը սրտաթափ լինելով.

դարձեալ ձայն եկաւ. Անանիա Յիսուսի աշակերտի մօտ ուսումն առաւ":

Իսկ Սօղոս կոչել հեթանոս, որ է սխալ ոչ փոքր. զի հեթանոս ասէր երբեմն նա, որ չ'էր յազգէ Հրէից, ուրեմն Սաւուղ Հրէայ գոլով՝ ոչ կարէր ասել յայնժամ հեթանոս: Իսկ այժմ նա ասի հեթանոս, որ չ'է յազգէ և 'ի կրօնէ Քրիստոնէից, այն է օտարազգի, այլազգի, անհաւատ, բարբարոս.

Ըստ յայտքանեաց ծայրայեղ կրօնընդդէմ զանդգամութեանց, սխալանաց և ձեռներէցութեանց վարդապետին Նազարեանց մանկունք մեր չունին գտանել յայսմ մատենի նորա, ա, Թէ զի՞նչ է եկեղեցի, ո՞րպէս բաժանի, քանի՞ են նորա յատկութիւնք, ո՞յք ոմանք պաշտօնեայք նորա, և 'ի քանի՞ աստիճանս դասակարգութիւնք նոցա, քանի՞ որոշակի նորա խորհուրդք: բ. Զի՞նչ հանգամանք հաւատոյ, և քանի՞ անդամք նորա: գ. Քանի՞ք տիեզերական ժողովք, զո՞ր 'ի նոցանէ ընդունիմք մեք. վասն է՞ր գումարեցան այս սրբազան ժողովք. զի՞նչ նոցայն վճիռք, կանոնք և սահմանադրութիւնք: դ. Զի՞նչ և քանի՞ տասնաբանեայ պատգամքն Աստուծոյ, և ո՞րպիսի բացատրութիւնք նոցա: ե. Զի՞նչ տէրունական աղօթք պարունակէ յինքեան, և ո՞րպիսի աղօթք և քանի՞ցս անգամ սահմանեալք յեկեղեցւոյ Հայոց: զ. Զի՞նչ շնորհք, առաքինութիւնք, մոլութիւնք, մահացու մեղք իցեն, և զի՞նչ քրիստոնէական պարտաւորութիւնք ընդ բնական օրինաց: Զանուանս իսկ այսոցիկ չլուեալ անդամոր՝ ցուցելով տեսցեն զանազանու-

թիւն և երևելի անհամեմատութիւն բանից և իմաստից 'ի հին և 'ի նոր Կտակարանս, յապաւումն 7 խորհրդոց եկեղեցւոյ, զանյիշատակութիւն բարեխօսութեան Սրբոց, զխոստումն ամուրութեան զոհագործութեան մերոյ, և յայտնի ապախտարարութիւն զկիւրակէիւք, զտէրունական տօնիւք և զսրբովքն Աստուծոյ, զյարգութեամբ խաչի, պատկերաց, զերկրպագութեամբ, զծնրադրութեամբ և զպահովք. Թող զգրաւոր և անգիր կանոնս և աւանդութիւնս սրբոց Հարց մերոց, և առհասարակ զամենայն ծէսս և զմանր մանր կրօնական ուսանելիս բացէ 'ի բաց բարձեալ 'ի միջոյ. և միայն զբանս իւր հիմնեալ 'ի խառն'իխուռն մտահնար զարտուղի սկզբունս անհարազատութեամբ քաղեալս 'ի հին և 'ի նոր Կտակարանաց անթիւ յաւելուածովք և կրճատութեամբք:

# ՎԵՐՋԱԲԱՆ

## Առ հարազատ սերունդս Հայաստանեայց.

Աշխարհ մեր անդադար մրրկեալ, ծփեալ և ալէկոծեալ 'ի ներքին և յարտաքին համայնաւեր խռովութեանց՝ ոչ երբէք համբուրեաց զնաւահանգիստ խաղաղութեան, և ոչ ժամանեաց գոնէ մի ժամ ննջել 'ի գիրկ քնքուշ բաղդի: Որպէս առ Շապուհ և Յազկերտ թագաւորօք Պարսից է տեսանել, որք տիրապետեալ երկրի մերում՝ տիրապետել թևածէին և կրօնի մերում, և փոխանակ Ճշմարիտ աստուածպաշտութեան զկռապաշտութիւն մուծանել: Որոյ վասն Վարդանանք արիաբար նահատակեալք ընդ Թշնամեաց՝ մաշեցին զնոսա 'ի սուր սուսերի և մաշեցան 'ի նոցանէ. կամ սովոյ, երկրաշար-

ժութեանց և շարայար անհրաժեշտ ձախորդութեանց մատնեալ՝ անապատ և աւեր անբնակ մնաց, մինչև 'ի մէջ Հայաստանի զՀայաստան որոնել: Եւ ուր էին քաղաքք բազմամարդք՝ որպէս Արմաւիր, Արտաշատ, Դուին Անի և այլ բազումք, այժմ ո՛չ գոն անդ և գիւղք, թո՛ղ թէ հետք նոցա, թաղեալք յանդունդս ժամանակաց: Եւ ուր տաճարք և մենաստանք շքեղապանծք զտեսողս 'ի զարմանս գրաւէին, լցեալք և պատարունք անհամար հոգեկիր պաշտօնէիւք փառաբանչօք Աստուծոյ, այժմ հիմն 'ի վեր տապալեալք, և կամ կիսակործան որջք և դարանք գազանաց և աւազակաց են եղեալք:

Յիշատակութիւնք սոցա ամենայնի ո՛չ այնքան մեզ մորմոքելիք և կսկծալիք, մինչ յաջ և 'ի ձախ հայեցեալ՝ զմխիթարիչս մեր ընդ մեզ տեսանեմք զուղղափառ հաւատ քրիստոնէական 'ի ձեռն սրբոյ Լուսաւորչին մեզ աւանդեալ, և զնախամայր լեզու եղեմածին յանմահանուն երանելի Հարց մերոց յաւէտ 'ի կուսակրօն Հոգևորականաց անարատութեամբ և ամբողջութեամբ առ մեզ յետագայս հասեալ. յորոց միայն անմոլար զՏէր Աստուած մեր պաշտեմք և դաւանիմք. և միայն բարձր 'ի գլուխ գերամեծար 'ի մէջ այլալեզուաց պանծամք իբրու անկապտելի ընտանի հայրենաժառանգ գանձուք, գոհ և անտրտունջ բողոքելին մերով նորածին փոքրիկ վիճակաւ: Այլ աւա՜ղ՝ զի եկն ժամանակ՝ յորում երկոցուն սոցա սատան յարուցեալ ումն 'ի մէնջ ջանայ այլայլել զնոսա, և նորութիւն իմն 'ի մէջ ապրդել, որպէս թէ լեզու և կրօն հնացեալ և մաշեալ հանդերձք իցեն, և մեզ հարկ է զնոսին ընդ նորոց փոխանակել: Աշտացեալ հոգւով, դառնացեալ սրտիւ ընթերցայ զՎարդապետարանն Կրօնի և զՀանդէս նորոյ Հայախօսութեան վարդապետին Նա-

զարեանց՝ մասն ա. զբաղում ինչ դոլ ՚ի նախին ընդդէմ հաւատոյ մերոյ և Աստուածաշունչ սուրբ Գրոց, մանաւանդ ամենապատուական լեզուիս Արամեան. հարկ Հայութեան համարեցայ սանկաեալ ՚ի խղճէ, աշխատութիւն ոգեմաշ յանձն առի, զժոյժ տառամամբք կալեալ, և զմի զմի քաղցր ՚ի ծառայութենէ ազատ ժամանակ ամարային ընդդէմ ախորժակաց մտաց և կամաց բնութեամբ ՚ի զոհ նախին մատուցեալ, և զամենայն կարևոր գործս իմ երբ ՚ի կալանս արգելեալ՝ մտի յայն ձանձրալի հանդէս և ՚ի քննելի Վարդապետարան, և ուշի ուշով զննեալ զնորին՝ անաչառութ ՚ի դէր հարի քաղուածովք զխալմանս և զպակասութիւնս նոցա, որոց առաջին զայս տեսութ յիշեալ վարդապետարանին տպագրեալ հրատարակեմ (և ապա զերկրորդին զԹերութեանց լեզուին)։ այսու միայն դիտմամբ՝ զի դուք համազգի պատուելիք դեռ ծաղկեալք հասակաւ և ուսմամբ, և հայրենեաց մերոց ապագայ սիւնք և յոյս, առաջի աչաց ունելով զայսպիսի սխալանս Վարդապետին Նազարեանց՝ զգուշասջիք յամենայնի ՚ի սոցանէ։ Այսօրինակ վարդապետութիւն մեզ չէ պիտոյ. մեք ունիմք զմերն յանսպառ ողորմութեանց մեծի Կայսրութեան Ռուսաց, որոյ ձառագայթք շնորհաց անընդհատ ծագին ՚ի վերայ մեր երբև ՚ի վերայ հարազատ որդւոց իւրոց։ ՚Ի դերևս է աշխատութիւն Վարդապետին վասն մեր. ընդկամուրջ լուսաւորութեան իւրոյ (զոր ասէ), թող հանցէ յերկինս վասն 23 քաղաքացւոյն՝ զորս անդ դնէ, և զայսպիսի գրեանս իւր թող վաճառեսցէ բնակչացն՝ որք ՚ի մէջ մոլորակ աստեղաց։

7-60